

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԻՏԱՆԿԻԻՆԷՆ

Մահուան 100ամեակ
(1841-1918)

Առաջնորդարան Արեւմտեան Թեմի
Պրրպեն
2021

Սոյն աշխատասիրութեան ժողովածուն
կը հրատարակուի ազնիւ մեկենասութեամբ

Տիկին ՍԻՊԻԼ ԱԲՐԱՅԱՄԵԱՆԻ

*“Իմ ապաստանս եւ ապաւէնս ես, ով Աստուած,
Ես քեզի կը վստահիմ” (Սաղմոս 91:2)*

Ներկայ հատորով հրատարակուած չորս գրութիւնները, նուիրուած Մաղաքիա Արք. Օրմանեանի կեանքին ու բեղուն գործին, իրենց ամփոփ ձեւով ներկայացուեցան Փետրուար 18, 2019ին, Միացեալ Նահանգներու Արեւմտեան Թեմի Հոգեւորականներու ներկայութեամբ եւ մասնակցութեամբ տեղի ունեցած Գիտաժողովին: Գիտաժողովը կը կշէր «Հայ Եկեղեցւոյ 20րդ դարու Ականաւոր Հոգեւորականները»: Օրմանեան Սրբազան ցայտուն ներկայացուցիչներէն մէկն էր այդ խումբին:

ՄԵԾԱՆՈՒՆ ՊԱՏՐԻԱՐԲԸ

Իրօք համարձակություն չենք ունենար գրելու 20-րդ դարու հայ եկեղեցւոյ մեծանուն Պատրիարքին՝ Օրմանեանի մասին, որ իր էութեան մէջ խտացուցած է սերը Հայաստանեայց Առաքելական մեր Մայր Եկեղեցւոյ հանդէպ գործնական քայլերու կիրառումովը:

Օրմանեան Պատրիարք իր հեղինակութեամբ տիրական այն դէմքն է եղած Հայց. Եկեղեցւոյ մէջ, որուն խօսքն ու տեսիլքը, եկեղեցւոյ առաքելութեան խորը ըմբռնումը, Հայց. Եկեղեցւոյ պատմութիւնն ու աստուածաբանութիւնը մեծագոյն կշիռ ունին, եւ այս բոլորը նաեւ յաչս քրիստոնեայ եկեղեցիներուն կատարելապէս ներկայացուցած է:


Բաւական է կարդալ Օրմանեանի հոգեւոր ժառանգութիւնը եւ լիարժէք կը ծանօթանանք մեր Սուրբ Եկեղեցւոյ Աւանդին:

Ներկայ նախաձեռնութիւնը գիտաժողովի մը ընթացքին ներկայացուած զեկոյցներ են, որոնք իրենց շահեկանութեան համար կը ներկայացնենք մեր ժողովուրդին:

Օրմանեան Սրբազանի հոգեւոր վաստակին ու ժառանգութեանը հաղորդ դառնանք, որպէսզի անով աւելի սիրենք Աստուածապարգեւ Հայց. Առաքելական մեր Մայր Եկեղեցին:

Մեր երախտիքի խօսքը կ'ուղղենք նախաձեռնութիւնը կարելի դարձուցած դասախօսներուն:

Մնամք սիրոյ ողջունիւ
Աղօթարար՝

 Յ. Եղեան Կր.

Յովնան Արք. Տէրտէրեան
Առաջնորդ Հիւսիսային Ամերիկայի
Արեւմտեան Թեմի

ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ. ԵԱՐՏԸՄԵԱՆ

ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Ա) ՄՈՒՏՔ

Օրմանեան Հայ Առաքելական Եկեղեցւոյ վերջին դարու թերեւս ամենէն իւրայատուկ եւ տիրական հոգեւորականն է եւ Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարքական Աթոռին արժանաւոր Գահակալներէն, այսինքն՝ մէկը, որ աւելի քան քառասուն տարիներ, հոգեպէս եւ մտապէս՝ եկեղեցական, ազգային եւ վարչական ծանրութիւններ, ինչպէս նաեւ քաղաքական եւ ազգային դժուարակիր ճնշումներ շալկած եւ յուսալքութեան խաւարը իր հոգեմտաւոր նուիրումով եւ ծառայութեամբ դիմագրաւած-տոկացած եզակի Եկեղեցական մը: Մէկը, որ մեր Եկեղեցւոյ դաւանական աւանդութիւններուն, եկեղեցական թէ կրօնական հիմքերուն եւ ազգային արժէքներու մասին՝ իր կեանքը, հոգին, միտքը եւ գրիչը նուիրեց: Եղաւ ԺԹ. դարու Հայ Եկեղեցականութեան ամենէն ինքնատիպ, զարգացած եւ բազմաձախտակ Հոգեւորականը:

«Օրմանեան կաղնիի մը ամբարձիկ ուղղութիւնը պահած է, անխախտ, ամուր կերպով իր սրբազան կոչումին վրայ, առանց պարծենալու՝ շարունակելով հատուցանել իր պարտքը, պարզութեամբ եւ համեստութեամբ, այնպէս՝ ինչպէս պարտքերը պետք է հատուցուին: Այսպէս, ան սիրայօժար գացած է հոն, ուր որ կոչած են զինքը Ազգն ու Եկեղեցին, Կարինի լեռնադաշտէն մինչեւ Արմաշի մենաստանը, ճմարիտ Վարդապետ մը ըլլալով ո՛չ միայն այն սուրբ օծումով, որ Եկեղեցին կը շնորհէ, այլ այն աւելի սուրբ օծումովը, որ անձնաւորութիւնը կու տայ» (ԳՐԻԳՈՐ 203-ՐԱՊ, Ծանօթ Դէմքեր):

Նշանակալից է ինքն իր մասին կատարած հետեւեալ արտայայտութիւնը.- **«Օրմանեան Պատրիարքը շուտով կը մոռցուի, սակայն իմ աշխատութիւններս կրնան ապրիլ» (ԱՆԱՅԻՍ, Յուշերս, Փարիզ, 1949, էջ 114-115):**

Բ) ԴԱՐՁ ԴԵՊԻ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Օրմանեանը անհրաժեշտ է ճանչնալ իր կեանքի հանգրուաններուն եւ ապրած վիճակներուն մէջ, ուր ան իր աչքերը եւ միտքը բացաւ եւ անոնց մէջ գործեց:

«Մեր պատմութեան մէջ Օրմանեանին տեղը փնտռելու համար՝ կարելի չէ չպատմել այն միջավայրը, ուր հասունցաւ ան, այսինքն՝ չճանչնալ «Կաթոլիկ Միլլէթ»ին, այն տեսակ մը ազգը (համայնքը), որ Վատիկան յաջողէր էր ստեղծել Զայ ժողովուրդի ծոցին մէջ՝ մասնիկ մը խլելով անկէ եւ անոր մէջ ամրացնելով ի՛ր արանդութիւնները: Այս էջը անհրաժեշտ է լրիւ ճանչնալ, որովհետեւ ամենէն քիչ ծանօթն է անիկա մեր մօտաւոր պատմութեան մէջ եւ որովհետեւ ան կը լուսաբանէ նաեւ Օրմանեանին դարձը դէպի Զայ Եկեղեցի» (Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ, Օրմանեան եւ իր ժամանակը, «Էջմիածին», պաշտօնաթերթ, Մայր Աթոռ, 1961):

Օրմանեան ծնած է 1841ի Փետրուարին, Կոստանդնուպոլսոյ մէջ, **«Յռոմեադաւան ծնողաց զաւակ»** ինչպէս ինքը կ'ըսէ (ՕՐՄԱՆԵԱՆ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ., Խոհք եւ Խօսք, Երուսաղէմ, 1929, էջ 3 եւ 43): Չարգացած, կազմաւորուած, հաւասարակշռուած միտք եւ ամրապինդ նկարագիրով եւ կրօնական ու ազգային համոզումներով համակուած ուժեղ անձնաւորութիւն մը: Օրմանեան իր տընաջան աշխատանքով, գիտակցութեամբ, հաւատքով, իմացապէս եւ հոգեպէս պատրաստուեցաւ իր ապագայ եկեղեցական ծառայութեան:

Բազմահմուտ մտաւորական, պատմաբան, աստուածաբան, եկեղեցական իրաւագետ, ուսուցիչ, ազգային գործիչ եւ ճկուն վարչագետ: **«Կաթոլիկութեան թափանցած եւ անով տոգորուած ու զարգացած անձ մը եղած եմ, կը գրէ ան, անոր մէջ բարձր դիրք մըն ալ գրաւելու ճշմարտանման հաւանականութեամբ: Ասոր հետ մեկտեղ, հռոմեադաւանութենէ հրաժարած եմ, ինչ որ շատերուն զարմանալի երեւցած է»** (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 4): **«Կեանքիս ամենէն ցայտուն եւ ամենէն նշանաւոր կետը եկեղեցի փոխելս էր»** կը խոստովանի ան (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 3): **«Յռոմեադաւանութենէն հեռանալու միտքը իմ վրայ ո՛չ կիրքի մը վայրկեանական որոշում եւ ո՛չ ալ շահադիտական կեղծիք էր, այլ երկար ատեն մտածուած, կշռուած եւ խոհա-**

կան քայլերով յառաջացած գործ մը եղած է» (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 6):

Օրմանեանի դարձին ծնունդը իր մէջ խմորուած էր Յռոմի մէջ՝ իր համալսարանական ուսանողութեան տարիներուն (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 4):

Անոր վերադարձը Հայ Առաքելական Եկեղեցի՝ եղած է բացառիկ երեւոյթ մը եւ ունեցած է պատմական լուրջ դրդապատճառներ, այսինքն՝ անոր անհատական կշռադատ մտածողութիւնը, դաւանական ըմբռնումները, Յռոմեական Եկեղեցւոյ կրօնավարչական մտայնութիւնը, գործելաձեւը, եկեղեցական իշխանութիւնը տարածելու մեծամտութիւնը, ճիգը եւ դիւանագիտական քաղաքականութիւնը, ինչպէս նաեւ Հայ ազգային խոր համոզումներու գիտակցութիւնը: **«Որքան յառաջացայ դասարաններու մէջ, կ'ըսէ ան, ըմբռնումս ալ աճեցաւ: Այս աճումին հետզհետէ ոյժ տուին հռոմեական պապութեան կամ պապական վարչութեան կողմէ Հայ Անտոնեան (կաթոլիկ Միաբանութիւն) եւ յետոյ Հայ Կաթոլիկ հասարակութեան հանդէպ բռնուած ընթացքները եւ զանոնք օտարացնելու եւ լատինութեան ձուլելու համար կատարուած գործողութիւնները եւ բռնադատիչ միջոցները...»** (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 4):

Այս հիմնական պատճառներուն եկաւ միանալու ուրիշ ցնցող պատճառ մը եւս.- 1870ին, Վատիկանի Ա. Եկեղեցական Ժողովը (1869-1870) վերահաստատելէ յետոյ Պապին Գլխաւորութիւնը կամ Գերագահութիւնը (Primacy), Հաւատքի մաս հռչակեց (dogma) **«Պապին Անսխալականութիւնը»** (Papal infallibility)՝ Հաւատքի եւ Բարոյականի վերաբերող վարդապետութիւններ որոշելու եւ սահմանելու մէջ (When he defines a doctrine regarding Faith and morals. Հմմտ. F. L. CROSS and E. A. LIVINGSTONE, The Oxford Dictionary of the Christian Church, 2nd ed., New York, 1993, էջ 1427-1428):

Օրմանեան չկրցաւ ընդունիլ եւ հանդուրժել կրօնական հովանիի տակ այս «կրօնաքաղաքական» խաղին հռչակումս ալ:

Բացառիկ էր անոր անհատական դիմագծութիւնը, անհատը յատկանշող գիծերը: Ուներ խուզարկու միտք եւ տրամաբանելու արտակարգ ձիրք:

Ինչպէս ըսուեցաւ, Հայ Կաթոլիկ ծնողներու զաւակ էր եւ միաբան դարձած Անտոնեան Հայ Կաթոլիկ Միաբանու-

թեան, որ հիմնուած էր Լիբանանի մէջ՝ 1707 թուականին եւ վերջնականօրէն դադրած 1925ին: Օրմանեան, իբր ուսանող, 1851ի Մայիսին՝ Կ. Պոլիսէն դրկուած է Զոմի Անտոնեաններու Սբ. Գրիգոր Լուսաւորիչ Վանքը (Խոհք եւ Խօսք, Ախ. աշխ., էջ 44):

Անտոնեան Զայ Կաթօլիկ Միաբանութիւնը, կրօնական շարժառիթներէ մղուած եւ Վատիկանի գործելակերպէն խրտչած՝ **«Որոշեց Զոմի հետ բոլորովին յարաբերութիւնները խզել 1876, Ապրիլ 6-18ի օրերուն»** (ՕՐՄԱՆԵԱՆ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ., Ազգապատում, հտ. Գ., Պէյրութ, 1961, էջ 4351-4352: Տե՛ս նաեւ ԵԱՐՏԸՄԵԱՆ ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ., Անտոնեան Զայ Միաբանութիւնը եւ անոր պատմական տիտղոս վախճանը, 1707-1925, «Բազմավէպ», պաշտօնաթերթ, Վենետիկ, 2000, էջ 110-127):

Միւս կողմէ, 1860-70ական թուականներուն, Կ. Պոլսոյ մէջ Զայ Կաթօլիկ Զամայնքը կը ներկայացնէր պառակտուած վիճակ մը՝ ծայրայեղ լատինամոլ Անտոն Զատուն անունով ասորի Արքեպիսկոպոսին ծաւալած քայքայիչ գործունեութեան պատճառով, որուն հետեւանքով ալ Զայ համայնքէն ներս ստեղծուած էր երկու հակընդդէմ խմբակցութիւններ՝ **«Զատունեան»** եւ **«Զակահատունեան»**: Վատիկանը, Զատունեանին միջոցով, կ'ուզէր խեղդել Զայ Կաթօլիկ հասարակութեան մէջ նոր ծլարծակուած ազգային եւ հայրենասիրական շունչը: «Զատունեան»ի կրօնական եւ ազգավնաս քաղաքականութեան դէմ դիրք բռնեցին Պոլիս ապրող ողջամիտ ազգայիններ եւ եկեղեցականներ՝ ինչպէս Վենետիկի Մխիթարեան Վարդապետներ եւ Անտոնեան Միաբանութեան Վարդապետներ, որոնց մէջ նաեւ Օրմանեան, որ յատուկ թափով պայքարեցաւ:

Ժամանակակից մը կը գրէ՝ «Անտոն Զատունեան «Ազգային Միութեան» դէմ շարժած է իր բոլոր կեանքին մէջ: Ամէն ճիգ թափած է Ազգին երկու հատուածները իրարմէ խորապէս բաժնելու համար: Այդ պատճառով ալ՝ հակառակ, ոխերիմ թշնամի եղած է Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան: Անոնց դէմ ամբաստանող թուղթեր եւ գրքոյկ հրատարակած, Պապին եւ Փրոփականտային առջեւ ամբաստանած է եւ դժուարին կացութեան մէջ ձգած է զանոնք» (ԳԷՈՐԳ-ՄԵՍՐՈՊ, Պատմութիւն Զայ Եկեղեցւոյ, հտ. Բ., Կ. Պոլիս, 1914, էջ 509):

Հայ Եկեղեցւոյ դէմ Հասունեանին ծաւալած ճախաւեր գործունեութեան դիմաց՝ Օրմանեանին համարձակ եւ անգիշող կեցուածքը աւելի եւս բորբոքեց պայքարը՝ Անտոնեան Միաբանութիւնը դարձնելով գլխաւոր թիրախը Վատիկանի թշնամական վերաբերումներուն: Օրմանեանի համարձակ միտքերը եւ ելոյթները, ինչպէս նաեւ անոր քննադատական կեցուածքը չէին կրնար հանդուրժելի ըլլալ Վատիկանի Եկեղեցական իշխանութեան, որուն համար Օրմանեան դարձաւ անձանկալի անձնաւորութիւն եւ անոր հրատարակութիւններն ալ անցան «արգիլուած» գիրքերու ցանկին մէջ (Index):

Օրմանեան բացայայտ կը գրէ. - **«Հակահասունեան խնդիրին ախոյեաններէն եղայ, գործով պայքարեցայ, գրիչով մաքառեցայ, Հռոմեական Պապութեան դէմ համարձակ կռուեցայ, ես՝ որ Հռոմեական դրութեան խորերը թափանցած էի եւ Հռոմեադաւանութեան հլու հպատակ կը կարծուէի: ...Ըմբռնումներս աճած էին, փորձառութիւնս ամբողջացած էր, մտայնութեանս փոփոխութիւնը կատարեալ էր, աւելի առաջ երթալու մտադրութիւնը կազմուած էր եւ այս միտքով ճամբայ կ'ելլէի...»** (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 459):

Օրմանեան հետեւեալ բնորոշումը կու տայ նաեւ հռոմեադաւան մոլեռանդ եւ ծագումով ասորի Կարտինալ Անտոն Հասունի մասին, որ այդ օրերուն աւեր գործած է Կ. Պոլսոյ Հայ համայնքէն ներս. - **«Կարտինալ Հասուն մահացած է 1884ին, իր անունին կապելով տխուր եւ մթին համբաւ մը, որ չի՛ բարձրացներ անոր արժանիքը: Մէկը, որուն ուղղամտութիւնը պակսեցաւ, անձնական փառքի եւ մենամոլ հռոմեականի իդճերուն եւ ձգտումներուն զոհելով ամեն բան, օրէնք եւ կանոն, սիրտ եւ միտք, հանրութիւն եւ ժողովուրդ: Բոլոր իր պաշտօնավարութեան տեւողութեան մէջ քար գայթակղութեան եղաւ Կաթօլիկ Հայերու համայնքին, անդադար գժտութիւններու, անհաշտ երկպառակութիւններու եւ անջատումներու առիթ տուած է իր անտանելի ձեռնարկներով»** (ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 3759-3763 եւ 4499-4501):

Հռոմի մէջ, Օրմանեան, իբր Անտոնեան Հայ Կաթօլիկ Միաբանութեան անդամ, աստուածաբանութեան, փիլիսոփայութեան եւ եկեղեցական իրաւագիտութեան դասընթացքները փայլուն կերպով աւարտած էր, եկեղեցական պաշտօններ վարած եւ հասուն տարիքին **«Խորին համոզման,**

հանդարտ կշռադատութեան, խելահաս հետապնդութեան եւ կանոնաւոր յառաջացման գործ եղած է իմ կողմէս հռոմէադաւան Եկեղեցիէն հրաժարելով՝ Հայադաւան Եկեղեցւոյ վերադարձս» (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 8): Ուրիշ խօսքով, ան կը հրաժարէր Հռոմէադաւան Կաթոլիկ դաւանանքէն եւ նոյնիսկ բարձր պաշտօններու հեռանկարէն, կը վերադառնար Հայ Եկեղեցւոյ գիրկը, ուր գործեց անձնուիրաբար եւ իմաստութեամբ, հասնելով մինչեւ Կ. Պոլսոյ Պատրիարքական Աթոռ: **«Քրիստոնէական սկզբունքներու եւ աւետարանական վարդապետութիւններու խորապէս համոզեալ մըն եմ, կը գրէ ան, իսկ անոնց ճշտագոյն եւ հաւատարմագոյն դրութիւնը կը ճանչնամ Հայ Եկեղեցւոյ մէջ եւ անոր հետեւած եմ ճշմարտութեան հետեւելու նպատակով»** (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ. էջ 9):

Օրմանեան, 1879ին Կ. Պոլսոյ **«Հայոց Պատրիարքարանի իրաւասութեան եւ Հայ Եկեղեցւոյ անդամակցութեան»** անցաւ ՀԱՄՈՉՈՒՄՈՎ եւ ԽՈՐ ԳԻՏԱԿՑՈՒԹԵԱՄԲ, ինչպէս ինքը կը բնորոշէ իր առած քայլը (Ազգապատում, հտ. Գ., Պէյրութ, 1961, էջ 4352):

Օրմանեանի դէպի Մայր Եկեղեցի դառնալու քայլին շարժառիթը կամ պատճառը կիրքը չէր, բարկութիւնը եւ զգացականութիւնը չէր աշխատած իր մէջ: Ըլլալով բանապաշտ (անգլ. rationalist) եւ խելահաս անձնաւորութիւն, անոր քայլը ունեցած է հասունացումի, համոզումի եւ գիտակցութեան լուրջ ենթահող:

«Ուրախ եմ, որ Հայ Եկեղեցւոյ կողմէն ալ անկեղծօրէն գնահատուած եմ եւ ներքին գոհունակութեամբ եւ արդարացի պարծանքով կը յիշեմ» կը խոստովանի Օրմանեան (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 9):

Օրմանեանին դարձը Հռոմէադաւանութենէն դէպի Հայ Առաքելական Եկեղեցի՝ քաջալերուած էր Կ. Պոլսոյ այդ օրերու Ներսէս Վարժապետեան Պատրիարքէն, որու անձին մէջ Օրմանեան կը տեսնէր իր առաջին պաշտպանը եւ գնահատողը:

Օրմանեան հրաժեշտ կու տար իր «հռոմէական» անցեալին՝ իր հետ բերելով գիտական հմտութիւն եւ գիտելիքներու հսկայական պաշար, աշխատանքային փորձառութիւն, դիւանագիտութիւն եւ կ'ուխտէր զանոնք ի սպաս դնել Հայ Առաքելական Եկեղեցիին եւ Հայ ժողովուրդին:

1877, Փետրուար 11ին, Օրմանեան կը ներկայանայ Կոստանդուպոլսոյ Ներսես Արք. Վարժապետեան Պատրիարքին եւ կը ներկայացնէ Հայոց Պատրիարքի իրաւասութեան եւ Հայ Եկեղեցւոյ անդամակցութեան անցնելու իր յստակ որոշումը եւ խնդրանքը՝ 36 տարեկանին (Ազգապատում, հտ. Գ., Պէյրուս, 1961, էջ 4352): Պատրիարքը մեծ գոհունակութեամբ կ'ընդունի Օրմանեանին դիմումը, բայց կը յետաձգէ, ըսելով.- **«Մենք քեզ կը ճանչնանք, ու՛ր որ ալ ըլլաս մերն ես, տեղդ նստէ՛ եւ խմորէ՛»** (ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 4355):

Ներսես Պատրիարք կը ճանչնար Օրմանեանը՝ անոր գրութիւններէն, հրատարակութիւններէն եւ դասախօսութիւններէն, որոնց մէջ նշանաւոր էր ֆրանսերէն լեզուով գրուած «Վատիկանը եւ Հայք» հատորը (307 էջերէ բաղկացած): Ինչպէս յիշեցի նախապէս, Վատիկան Օրմանեանին հրատարակութիւնները անցուցած էր «արգիլուած» գիրքերու ցուցակին մէջ (Index. տե՛ս Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 4355):

Օրմանեան շատ մօտէն ճանչցած ըլլալով Հռոմեական Եկեղեցին, անոր դաւանութիւնը եւ գործադրուած վարչական - դիւանագիտական ձեւերն ու խաղերը, սկիզբէն պաղութիւն մը ապրած է այդ երեւոյթներուն դիմաց.- **«Դաւանութեան տեսակէտէն՝ որչափ Կաթոլիկ աստուածաբանութեան խորերը մտայ, իմ վրաս ձախող տպաւորութիւն գործեցին...»** (Խոհք եւ Խօսք), նշ. աշխ., էջ 104): Հռոմեական Եկեղեցւոյ դաւանական հմտութիւնը Օրմանեանին մէջ ունեցած էր հակառակ արդիւնքը եւ **«Ո՛չ մէկ խայթ եւ ո՛չ մի խիղճի նեղութիւն չէի կրնար զգալ եւ չզգացի անկէ բաժնուելով»**, կը խոստովանի ան (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 104) եւ երբ Կոստանդուպոլսոյ մէջ «Հակահասունեան» Շարժումին մասնակից կը դառնար ան՝ իբր գլխաւոր գործիչ..., զինքը կը մղէր տարբեր ուղղութեամբ:

Վարժապետեան Պատրիարքի հանդիպումէն ետք, մեծ վստահութեամբ Օրմանեանին կը յանձնուի Պատրիարքարանին Դիւանը, Վարչական Ատենադպրութիւնը, Ելեւմուտքի հաշուապահութիւնը, եւայլն: Այդ օրերուն, Վիեննայի Մխիթարեաններէն՝ Հայր Կղեմես հնագետ, հնախոյզ եւ դրամագետ Վարդապետի մասին Օրմանեանին խօսած դամբանախօսութիւնը՝ Յունիս 18, 1878ին, Հայ հասարա-

կութան վրայ աւելի բարձր հիացումի տպաւորութիւն գործած էր **«Իբր հմտութեամբ եւ տաղանդաւոր ծանօթ անձ մը»** (Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 4356):

Յոկտեմբեր 28, 1879ին, Խաչ Գիւտի Կիրակին, Օրմանեանի դիմում-խնդրանքէն 2 տարի եւ 9 ամիս ետք, 34 աշխարհական համախոհներով կը ներկայանայ Պատրիարքարան: Պատրիարքարանի բակն ու սրահները եւ շրջակայ փողոցները լեցուած էին ծափահարող խումն բազմութեամբ: Օրմանեան Վարդապետ եւ համախոհ աշխարհականները կ'անցնին Պատրիարքարանին մեծ սրահը, ուր կը գտնուէր Պատրիարք Սրբազանը՝ շրջապատուած Եպիսկոպոսներէ եւ Վարդապետներէ (Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 4359):

Օրմանեան կը վկայէ թէ ան աշխատած է ընդարձակել Յայոց Պատրիարքութեան եւ Յայ Եկեղեցւոյ կողմը անցնելու համախոհներուն շրջանակը: Ան թելադրած է խմբովին առնել այդ քայլը եւ Պատրիարքէն ալ դիրութիւններու խոստումներ ստացած է: Օրմանեան կ'ըսէ նաեւ թէ տակաւին «Ոմանց սրտին մէջ ամուր էր կարթիկութեան զգացումը» (Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 4356-4357):

Այդ օր, Օրմանեան Վարդապետ կարդացած է ուղերձ մը **«Յայաստանեայց Եկեղեցւոյ դաւանութիւնը եւ Ազգային Պատրիարքարանին հպատակութիւնը ընդունող ներկայ եւ բացակայ խումբին կողմէ յանձնած է 72 հոգիներու ամբողջական ցուցակը»** (ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 4359):

Ներսէս Պատրիարք խօսք առնելով՝ համարձակ ըսած է. **«Թէեւ աւելի զարդարուն տուն մը կը բնակէիք, բայց ձերը չէր, մինչ այս համեստ տունը** (այսինքն՝ Պատրիարքարանը) **ձերն է», «Յոռմին ապարանքը թողուցիք եւ Յայուն հիւղակը եկաք...: Յոն հիւր էիք, հոս տանուտէր էք. այդ ձերը չէր, այս ձերն է»** (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 460), աւելցնելով թէ ձեր առած քայլը **«կրօնափոխութիւն» չէ, այլ ձեր տունը գալ է»** (Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 4360): Ներկաներէն ոմանք խօսք առնելով ըսին թէ **«Պատրիարքարան դիմողները ազգին համար նորեկներ չեն»** (ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 4360):

Յուսկ, Ներսէս Պատրիարք, ներկաները կը հրաւիրէ Սայր Եկեղեցի՝ ուր պաշտօնական արարողութեամբ **«Օրմանեանին վեղար եւ փիլոն նուիրեց եւ Ծայրագոյն Վարդա-**

պետութեան Գաւազանի տուչութեան արարողութիւնը կատարեց Եպիսկոպոսներու ընթերակայութեամբ եւ մասնակցութեամբ» (ՕՐՄԱՆԵԱՆ, Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 8 եւ 104 եւ Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 4359):

Երկու օր ետք, Յոկտեմբեր 31ին, Օրմանեան կը նշանակուի Կ. Պոլսոյ Ղալաթիոյ Սբ. Լուսաւորիչ Եկեղեցւոյ պաշտօնական քարոզիչը: Իսկ երեք օր ետք, Նոյեմբեր 4ին, Օրմանեան կը մատուցանէ իր առաջին Սուրբ Պատարագը:

Օրմանեան, Յոկտեմբեր 29, 1879ին, հպատակութեան պաշտօնական նամակ մը ուղղած է Գեորգ Դ. Կոստանդնուպոլսեցի Ըբրեստեճեան Կաթողիկոսին՝ իր եւ իրեն հետ եղողներուն կողմէ: Ներսէս Պատրիարքն ալ Նոյեմբեր 9ին՝ այս մասին տեղեկագիր մը յղած է Սբ. Էջմիածին եւ Կաթողիկոսը Դեկտեմբեր 14ին, պատասխանած է յատուկ Կոնդակով մը (ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատում, հտ. Գ., նշ. աշխ., էջ 4360-4361):

«Իմ նախընթացս, կ'ըսէ Օրմանեան, երբեք ծածկել չեմ աշխատած, մինչեւ իսկ անզգոյշ ակնարկներու ալ պատասխանած եմ, որ եթէ իրենք անգիտակցաբար Յայ Եկեղեցւոյ հետեւող գտնուած են, ես՝ քննութեամբ եւ խելահասութեամբ զայն նախընտրած եմ: Յետեւաբար, մտադիր էի յատուկ կերպով յիշատակել (Յայ Առ. Մայր Եկեղեցի) վերադարձիս 25ամեակը 1904 տարուան Գիւտ Խաչի Տօնին, սակայն Խապայեան Սահակ Կաթողիկոսին Կ. Պոլիս գտնուելուն եւ տիրող դարձուածներուն պատճառով՝ լաւագոյն սեպեցի զանց առնել» (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 257):

Օրմանեան Յայ Եկեղեցւոյ գիրկը վերադարձող առաջին եկեղեցականը չէր: Իրմէ առաջ Նոյն քայլը առեր էին Վենետիկի Միսիթարեաններէն երկու անուանի Վարդապետներ՝ 1856ին Գաբրիէլ Վրդ. Այվազովսկի (յաջորդաբար՝ Արքեպիսկոպոս) եւ 1857ին Խորէն Վրդ. Գալֆայեան (կոչուած Նաեւ Նարպէյ. յաջորդաբար ա'յս ալ Արքեպիսկոպոս): Երկուքն ալ եղած են Յայ Եկեղեցւոյ կարկառուն ղեմքերէն (1878ին Նարպէյ միացած է Խրիմեան Յայրիկին՝ դէպի Պերլինի Վեհաժողովը: Խորէն Նարպէյի մասին տե՛ս ՃԱՆԱՇԵԱՆ ՄԵՍՐՈՊ ՎՐԴ., Պատմութիւն Արդի Յայ Գրականութեան, հտ. Ա., Վենետիկ, 1953, էջ 199-20, իսկ Գաբրիէլ Այվազովսկիի մասին՝ Զրիստոնեայ Յայաստան, հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 48-49):

«Օրմանեան իր փորձառութիւնը առած է Վատիկանի դիւանական նրբանցքներուն մէջ, ուր աշխարհի պետական հաշիւները կը գտնեն իրենց արձագանգները: ... Անխոնջ աշխատող ու երկնող: ... Ներոյժ կամք մը, անտեղիտալի եւ անպարտելի իր ճամբուն բովանդակ ընթացքին, որ անփուշ չէ: ... Իր «Խոհք եւ Խօսք»ին մէջ շարժանկարուած իր պայքարները, միշտ նուաճումներով պսակուած, փառաւոր ապացոյցներն են անոր» (ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔ. ՏՐԱՊԻԶՈՆՆԻ, Փարոս Զայաստանեայց, 1932, Փետրուար):

Գ) ՕՐՄԱՆԵԱՆ «ՅՈՒՅԻՆՈՐԱԿԱՆԸ» ԵՒ «ԱՌԱԶՆՈՐԴԸ»

1910ի Զոկտեմբերին, Կոստանդուպոլսոյ մէջ Ազգային Երեսփոխանական Ընդհանուր Ժողովի 18րդ դռնփակ նիստի ընթացքին, որ Օրմանեանի Պատրիարքական գործունեութեան խիստ քննութեան յատկացուած էր, իրաւաբան եւ գրագետ՝ Գրիգոր Չոհրապ քիչ մը հեգնական շեշտով հետեւեալ բնորոշումը ըրած է Օրմանեանի մասին.- **«Մեր միամիտ կրօնականները «կոչում» կը նկատեն եկեղեցականութիւնը, մինչ Օրմանեան Սրբազան «ասպարեզ» կը նկատէ զայն»** (ՍՐԵՆՑ, հրտկ, Օրմանեան Զանրային Խիղճի եւ Դատաստանին առջեւ, Կ. Պոլիս, 1913, էջ 66):

Քրիստոնեական մտածողութեան մէջ **«Կոչում»**ը ձրի բառ մը չէ՝ ինչպէս ունեցողներուն, այդպէս ալ փափաքողներուն, այլ երկիւնքէն տրուած շնորհք-պարգեւ մը, մինչ **«Ասպարեզ»**ը՝ գործունեութեան մարզ: Գրիգոր Չոհրապ չէր ժխտեր անպայման Օրմանեանին կրօնական հաւատքին անկեղծութիւնը, պարզապէս շեշտը կը դներ անոր արիեստավարժ գործունեութեան վրայ:

Մայր եկեղեցի վերադարձէն ետք, նոր ասպարեզ կը բացուի Օրմանեանին առջեւ՝ հովուական-եկեղեցական եւ քարոզչական ուղիներով: 1877ի Փետրուարի 11ին ան դիմում կը ներկայացնէ Կ. Պոլսոյ Պատրիարքին՝ Ներսէս Վարժապետեանին: 1879ի Նոյեմբեր 28ին Գիւտ Խաչի Տօնին օրը կը բարձրանայ «Ծայրագոյն Վարդապետ»ի աստիճանին (Ներսէս Վարժապետեան Պատրիարքին կողմէ), կը կարգուի «քարոզիչ» Կ. Պոլսոյ մէջ, 1886, Յունիս 8ին Սբ. Էջմիածնի մէջ Մակար Ա. Տեր-Պետրոսեան Կաթողիկոսէն կը ձեռնա-

դրուի եւ կ'օծուի Եպիսկոպոս: Առաջնորդ կը կարգուի Կարին քաղաքին: Չինքը կը գտնենք Նաեւ Սբ. Էջմիածին՝ իբր դասախօս Գեորգեան ճեմարանին մէջ, դասաւանդելով Աստուածաբանութիւն: 1896ին կ'ընտրուի Թուրքիոյ Հայոց Պատրիարք: Այդ պաշտօնը կը վարէ ուղիղ 12 տարի: Ստանձնելով Պատրիարքի պաշտօնը, Օրմանեան կը ձեռնարկէ Պատրիարքութեան ընդարձակ Թեմը կարգաւորելու, վերակազմելու աշխատանքին: Երբ Պատրիարքական Աթոռ բարձրացաւ, Կ. Պոլսոյ եւ Հայաստանի ներքին գաւառներուն մէջ Հայ Արիւնը կը հոսեր, Սուլթան Համիտի բռնատիրական թաթը կը ծանրանար Հայ Հոգիին ու Մտքին վրայ, իսկ ժողովուրդը լեցուած էր սարսափով:

1908, Մայիս 10ին կը հռչակուի Օսմանեան Սահմանադրութիւնը եւ «**Իբր թրքասեր եւ հակայեղափոխական՝ Օրմանեան գահագուրկ կ'ըլլայ Տաճկական Սահմանադրութեան հռչակմամբ**» (ԱՃԱՌԵԱՆ ՀՐ., Հայոց Անձնանունների Բառարան, հտ. Գ., Պէյրուք, 1972, էջ 175): «**Չիս խօթօել ուզողներ, կը գրէ Օրմանեան, իրենց բերանին ծամոց ըրին իբր թէ Համիտի կամակատար հետեւող եւ հաճոյակատար ծառայ եղած ըլլամ, ինչ որ ճշմարտութենէն հեռու է**» (ՕՐՄԱՆԵԱՆ, Խոհք եւ Խօսք, Երուսաղէմ, 1929, էջ 28): Ազգայիններու կողմէ Օրմանեան Սրբազան կ'ամբաստանուի գաւազան մեղադրանքներով եւ կը բռնադատուի հրաժարիլ Պատրիարքական Պաշտօնէն (1908ին): ...Նոյնիսկ օր մը, 1903, Յունուար 6ին, Սբ. Ծնունդին օրը, Սբ. Պատարագի միջոցին (Գումգաբուի Մայր Եկեղեցիին մէջ) կուսակցականի մը կողմէ կ'ենթարկուի մահափորձի՝ աջ ուսէն վիրաւորուելով (ՕՐՄԱՆԵԱՆ, Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 203-204):

Օրմանեան անոնց կողմէ կը նկատուէր «**Չեղծումներու մարդ**» եւ «**Ազգին (Պատրիարքարանին) գանձը կողոպտած**» **անձնաւորութիւն**: Մինչեւ իսկ գինքը կոչած են «**Վեղարաւոր սատանայ**» ((ՍԻՐՈՒՆԻ Յ. Ճ., Օրմանեան եւ իր ժամանակը, «Էջմիածին», պաշտօնաթերթ, 1961, թիւ ԺԱ., էջ 40 եւ 42):

Ազգային Երեսփոխանական Ժողովին մէջ, Յունուար 3, 1913ին, Օրմանեանի դէմ յերիւրուած «ամբաստանութիւնները» մէկ-մէկ կը հերքուին եւ ժողովականներու միաձայնութեամբ «անպարտութեան» վճիռ կ'արձակուի (ՍԻՐՈՒՆԻ

Յ. Ճ., Օրմանեան եւ իր ժամանակը, «Էջմիածին», պաշտօնաթերթ, 1961, թիւ ԺԲ., էջ 43):

«Օրմանեանին վերագրուած յանցանքներուն գլխաւորը ըստեցաւ թէ ստրկամիտ քաղաքականութեան կը հետեւեր Օսմանեան Կառավարութեան հանդէպ: Օրմանեան Սրբազան (Յամիտեան) Զարդերէն ետք Յայոց Պատրիարք եղաւ եւ համակերպութեան քաղաքականութեան հետեւեցաւ մինչեւ վերջ: Ասիկա ամենուն համար ընդունելի քաղաքականութիւն մը չէ թերեւս, բայց այդ ժամանակի պայմաններուն նայելով՝ պարտադրական քաղաքականութիւն մըն էր» (ԳՐԻԳՈՐ ԶՕՐԸՄՊ, Կ. Պոլսոյ Ազգային Ժողովի 1912 թուականի Դեկտեմբեր 21ի նիստին արտասանուած ելոյթէն):

Երբ որոշ ժամանակակիցներ անիրաւ եղան Օրմանեանին դէմ, Ազգը արդարացուց գայն: Մինչեւ իսկ մեծանուն գրագետ Գրիգոր Չոհրապ Օրմանեանը «անպարտ» հռչակողներէն մէկը եղաւ:

Օրմանեան իր Պատրիարքութեան օրերուն, Կոստանդուպոլսոյ «Յոգեւոր-Կրօնական-Եկեղեցական» ամբողջ կեանքը ամփոփած է Պատրիարքութեան ներքեւ գտնուող եկեղեցիներու գործունեութեան կամ Ծուխերու հովանիին տակ:

Պատրիարքարանի Յոգեւոր իշխանութեան հովանիին տակ էին նաեւ Պատրիարքութեան Բարեսիրական հաստատութիւնները, որոնց մէջ առաջին տեղը կը գրաւեր Սբ. Փրկիչ Ազգային Յիւանդանոցը, հիմնուած 1832ին՝ Պեգճեան Յարութիւն Ամիրային կողմէ, ինչպէս նաեւ Գալֆայեան Յայ Աղջիկներու Որբանոցը՝ հիմնուած Սրբուհի Գալֆայեան մայրապետին նախաձեռնութեամբ՝ 1866 թուականին:

Օրմանեան ունեցած է «հովուական» եւ վարչագիտական բազմարդիւն եւ ազդեցիկ գործունեութիւն: Իր Պատրիարքութեան օրերուն, թաղէ թաղ կը վազէր Սբ. Պատարագի (այս պարագան ալ իր դէմ կատարուած մեղադրանքներէն մէկն էր): Օրմանեան Կ. Պոլսոյ Յայ Կրթական հաստատութիւններէն չէ բացակայած եւ գրեթէ միշտ խօսք առած է...: Այս երեւոյթները լաւ հասկնալու եւ զգալու համար՝ մենք պետք էինք ապրած ըլլալ շարդարար Սուլթան Յամիտի բռնատիրական վարչակարգի մռայլ օրերուն, վիճակ մը, որ այդ օրերուն, Կ. Պոլսոյ մէջ ապրող Յայութեան հնարաւորութիւն չէր տար քով-քովի գալու կամ միասին հաւաքուելու: Օսմանեան իշխանութիւնը լուրջ կասկածան-

քով կը դիտեր ընկերային կամ հանրային ո՛րեւէ տեսակի շարժում կամ հաւաք: Քաղաքական այդ ճնշող իրավիճակին մէջ դժուար էր գործելը: Օրմանեան Սրբազան կ'ըսէ թէ այդ տեսակի ճնշումներու տակ՝ ան ուզած է հոգեւոր եւ մարդասիրական առիթներ եւ հանդիպումներ ստեղծել:

Օրմանեան «Դիւանագիտական» բացառիկ արժանիք մըն ալ ունէր: Ան, իբր Թուրքիոյ Հայոց Պատրիարք, անձնական կապեր հաստատած է մեծ Պետութիւններու դիւանագետներուն եւ Թուրք Պետական մարդոց եւ պաշտօնեաներուն հետ եւ խոհեմութեամբ, իր ճկուն խօսելակերպին եւ գործելակերպին շնորհիւ՝ յաջողած է զանազան գործեր առաջ տանիլ: Կ. Պոլսոյ Հայ պատախանատուներուն յարաբերութիւնները շատ դժուար եղած են Սուլթան Համիտին հետ՝ անոր ծայրայեղ կասկածամտութեան եւ թաքնամտութեան հետեւանքով: Օրմանեան Սրբազան յաջողած է ճակատիլ անոր հետ «դիւանագիտական» ճամբաներով, խոհեմութեամբ եւ համբերութեամբ... եւ շատ անգամ յաջողած է յաղթանակ տանիլ՝ հրաժարիլ տալով անոր զանազան ծրագիրներէն, որոնք յամառօրէն կը հետապնդէր Սուլթանը: **«Իմ ընթացքս, կ'ըսէ Օրմանեան, եղած է բռնութեան ընթացքը մեղմացել, ... տեսակ-տեսակ միջնորդութիւններ ստեղծել, ... որոնց հետեւանքը եղած է Համիտի բռնութիւններուն նուազումը եւ ազգային կացութեան բարւոքումը»** (ՕՐՄԱՆԵԱՆ, Խոհք եւ Խօսք, Աշ. աշխ., էջ 29):

Օրմանեան Թուրքիոյ պետական հակահայ վարչակարգին (անգլ. regime) դիմաց, Օրմանեան որդեգրած է ծայրայեղ զգուշութիւն, խոհեմութիւն՝ զգացական բուռն պոռթկումներէ եւ վնասներէ խուսափելու համար: Իր կողմէ քաղաքական նուրբ հոտառութիւն էր այս մէկը: Անշուշտ, ծանր ապրումներ էին, սակայն Օրմանեան եղած է այդպիսի հոգեվիճակներ հակակշռող եւ անձնական զգացումներ զսպող անձնաւորութիւն: Օրմանեան տեղ մը կը գրէ. - **«Իմ համոզումով կատարելագոյն է այն մարդը, որ միտքով, խորհրդածութեամբ եւ կշռադատութեամբ կ'առաջնորդուի եւ պատահական զգացումով իրեն ուղեցոյց եւ կանոն չ'ընդունիր եւ երեւոյթով չի՛ խաբուիր...»**

Այդ օրերուն, Հոգեւոր Առաջնորդի պաշտօնը փափուկ էր եւ իրմէ կը պահանջուէր յատուկ արթնամտութիւն, զգուշաւորութիւն: Օրմանեան, բռնատեր եւ անգութ Սուլթան

Համիտի հետ իր ունեցած «դիւանագիտական» յարաբերութիւնը կը բնորոշէ իբր «գազանագուսպ»ի եւ լարախաղացութեան քաղաքականութիւն: Դժբախտաբար, այդ օրերուն, Պոլսահայ Ազգային ղեկավարները Ազգի շահերուն համապատասխան չգտան Օրմանեանին վարած քաղաքականութիւնը, չգնահատեցին եւ չուզեցին ընդունիլ Օրմանեանին արթնութիւնը, ճկունութիւնը եւ չհասկցան թէ անոր հեռատես կեցուածքը, Սուլթանին հանդէպ, ո՛չ թէ «թրքասիրութիւն» էր կամ քծնանք եւ հաճոյակատարութիւն մենատէր Սուլթանին համակերպող կամ ստրկամիտ քաղաքականութիւն, այլ ի նպաստ Հայ Ժողովուրդի շահերուն գործադրուող խոհական գգուշաւորութիւն եւ հեռատես վարչագիտութիւն (անգլ. tactics): Օրմանեան ազգայիններու կողմէ մեղադրուած է իբր «Թրքասէր» անձնաւորութիւն, ինչպէս Աճառեանը կը յիշէ (Հայոց Անձնանունների Բառարան, հտ. Գ., Պէյրութ, 1972, էջ 175):

Յատուկ ուշադրութեան արժանի պէտք է ըլլայ ա՛յն իրականութիւնը, որ Պատրիարք Օրմանեանին Պետութեան հետ ունեցած քաղաքական դիւանագիտութեան հետեւանքով՝ այդ տարիներուն Հայերու զանգուածային կոտորածներ գրեթէ չեն եղած:

Միւս կողմէ, Օրմանեան Պատրիարք, Եկեղեցական Տօներու, Սբ. Պատարագներու եւ Ազգային եւ Դպրոցական Հանդէսներու առիթներն ալ կ'օգտագործէր Պոլսոյ Հայկական թաղերը շրջելու:

Այս մասին յստակ բացատրութիւններ կու տայ ինքը՝ Օրմանեան.- **«Պատրիարքական գործունեութեանս նշանակալից մաս մը կը կազմէ եկեղեցական հանդէսներու ոյժ տալս, Դպրաց Դասերը բազմացնելու հետամուտ ըլլալս, եռաձայն եւ քառաձայն երգեցողութիւնները քաջալերելու, Կ. Պոլսոյ եկեղեցիներուն տարեկանի օրերուն հանդիսադիր ըլլալս, տօնախմբութիւններ սարքելու առիթներ ստեղծելս: Ոմանք այնպէս ենթադրեցին թէ այս պարագաներով փառաւորուելու ունայնասիրութենէ շարժած ըլլամ, սակայն իմ դիտումս այդ չէր: Ազգային հանդէսներ բացարձակապէս արգիլուած էին, մինչ իմ համոզումովս՝ այս տեսակ հանդէսներ զգացումներ բարձրացնելու, գաղափարներ մշակելու, հոգիներ սրտապնդելու մեծապէս օգտակար են եւ անշուշտ ասոնք արգիլու համար արձակուած էր ընդհանուր**

արգելք: Եկեղեցիները այդ արգելքէն դուրս մնացեր էին, ուստի պետք էր այդ պարագայէն օգտուիլ՝ ընդհանուր նպատակին հասնելու համար եւ ո՛րեւէ հանդէս կազմակերպելու համար պետք էր ուստիկանութենէն արտօսութիւն ստանալ, խօսուելիք ճառերը նախաքննութեան ենթարկել եւ հրամայուած փոփոխութիւններուն հնազանդիլ: Այս կողմէն ալ բարեբախտաբար Պատրիարքին անձը սեղմումներէ ազատ էր եւ անոր ներկայութեամբ կը չափաւորուէր կամ կը խափանուէր ուստիկանութեան ներկայութիւնը: Ահա գաղտնիքը, որ զիս կը յորդորէր եկեղեցական հանդիսութիւններուն ոյժ տալ եւ ամէն հանդիսութիւններու անձամբ ներկայ ըլլալ» (Խոիք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 252-253):

Ուրիշ առիթով կը գրէ թէ Դպրաց Դասերը «Ճատցնելու մէջ ո՛չ միայն կը տիրէր եկեղեցական պաշտամանց կարգադրութիւնն ու պայծառացումը՝ այլեւ ընկերային դրութեան օգուտը չկորսնցնելը, որովհետեւ թէւ ընկերութիւնները արգիլուած էին, բայց Դպրաց Դասերը եկեղեցիներու հովանաւորութեան ներքեւ դիտողութենէ զերծ կը մնային» (Ազգապատում, հտ. Գ., Պէյրութ, 1961, էջ 5109):

Խօսուն օրինակ մը եւս՝ Օրմանեան «Յոգեւորական»ի եւ «Յոգեւոր» Առաջնորդի նկարագրային բաղադրութեան մասին.- «Յոմմէադաւան Պատրիարք Ստեփանոս-Պետրոս Ժ. Ազարեանի հովանաւորութեամբ եւ Մկրտիչ Աշճեան Վարդապետի ձեռքով, բայց անանուն ձեւով, փոքրիկ տետր մը հրապարակ հանուեցաւ՝ «Մեր Սուրբ Յարց Դաւանութիւնը» մակագիրով, պապական դրութիւնը պաշտպանելու համար հոմմէադաւան Յայերու հաւաքած սովորական քաջքնով վկայութիւններով:

Տետրակին Պատասխանը պատրաստեցի ուրիշ տետրակով մը, բայց (թուրք) գրաքննութեան կողմէ տպագրելու արտօսութիւնը զլացուեցաւ, պատճառելով թէ խնդիրը երկարելու եւ հասարակութիւններու միջեւ գժտութիւն յառաջ բերելու կը ծառայէր: Զուգելով մեր Եկեղեցւոյ դէմ յարձակումին առջեւ լռել, անմիջապէս պատրաստուած տետրակին պարունակութիւնը Կոնդակի ձեւին վերածեցի եւ Կոնդակներու հրատարակութեան ազատութենէն օգտուելով՝ մեծադիր լրագիրի մը ձեւով չորս երեսներու վրայ տպագրել տալով՝ քաղաքին եւ գաւառներուն եւ արտասահմանի մէջ լայնարձակ ցրուեցի եւ եկեղեցիներուն մէջ կարդալ տուի:

Յոմեադաւանները չհամարձակեցան երկրորդել» (Խոհք եւ Խօսք, էջ 253-254):

Այդ օրերուն, Յայ Կաթօլիկներուն կողմէ պատրաստուած «Մեր Սուրբ Յարց Դաւանութիւն» գրքոյկէն օրինակ մը դրկուած է Սբ. Էջմիածին, որու մասին գրաւոր ուժեղ պատասխան մըն ալ տրուած է Սբ. Էջմիածնին կողմէ (տե՛ս «Արարատ» ամսագիր, Սբ. Էջմիածին, 1899, թիւ Գ-Դ):

Յայ Կաթօլիկները, իրենց հրատարակած այդ գրքոյկով, Յայութիւնը հրապարակաւ կը հրաւիրէին բաժնուիլ իրենց Յայ Եկեղեցիէն եւ կը յորդորէին իրենց «Ուղղափառ Դաւանութիւնը» փոխել եւ անցնիլ Յոմեադաւան Եկեղեցւոյ:

Իբր քաջ եւ արթուն Առաջնորդ, Օրմանեան չկրցաւ լռել այս համարձակ երեւոյթին դիմաց...:

1899 թուակիր իր Կոնդականման գրութեամբ, պատասխանելով Յայ Կաթօլիկներու գրքոյկին, որ խորագրուած էր «Մեր Սուրբ Յարց Դաւանութիւնը», բարձրադաղակ, քաջ եւ ամուր կեցուածքով դեմ դրաւ անոնց կրօնական համարձակ ոտնձգութեան, աւելցնելով թէ **«Աւետարանի հոգին առաւել է քան զմարմին. այդ մէկը մեր Յաւատքն է, մեր Կրօնքը, մեր Դաւանութիւնը, մեր Եկեղեցին»:**

Պատմական տխուր դէպք մը, անշուշտ: Այսօր, երբ կ'ապրինք Միջկրօնական, Միջեկեղեցական եւ Յամամիութենական (interreligious եւ ecumenical) ժամանակներուն մէջ, ինչպէ՞ս դիտել եւ ինչպէ՞ս մեկնաբանել նման կրօնական մտայնութիւններ, ոտնձգութիւններ եւ անհանդուրժողութիւններ (Նկատում մը: 1911 թուականին, Յայ Կաթօլիկ Պատրիարք՝ Պօղոս-Պետրոս ԺԳ. Թերզեանի մէկ Կոնդակին մէջ, որ կը կրէ 1911, Սեպտեմբեր 8 թուականը, Յոմի Գահը կամ Յոմի Եկեղեցին կը կոչուի **«Մեր բժշկութեան ակնադբիւրը, որուն կառչելով ՄԻԱՅՆ կարելի է ապահովել Կրօնք եւ Եկեղեցի, հետեւաբար նաեւ հոգւոց Փրկութիւն...այն կենսատու ճշմարտութեամբ, որ ՄԻԱՅՆ Կաթողիկէ Եկեղեցւոյ մէջ կը պահուի, այն անմուլար հաւատքի սկզբունքներով՝ որոնց աւանդապահ է ՄԻԱՅՆ Կաթողիկէ Եկեղեցին».** տե՛ս Ազգային Սիւնհոդոս Յայոց, Կ. Պոլիս, 1914, որ գումարեցաւ ի Յոմ յամի Տեառն 1911, ի տպարանի Կաթողիկէ Արձագանգի, էջ ԺԱ-ԺԲ):

Կու տամ ուրիշ օրինակ մըն ալ՝ Օրմանեան Սրբազանին «Յոգեւորական»ի հարագատ նկարագիրը բացայայտող:

Ան կը գրէ թէ «Խրիմեան Հայրիկ Կաթողիկոս լաւ աչքով չէր դիտուած Օսմանեան Արքունիքին կողմէ եւ Լոյսիսկ Եպիսկոպոսներու հրաման չէր տրուէր ձեռնադրութեան երթալու (Էջմիածին), կասկածելով որ Խրիմեանէն անկապատ թելադրութիւններ կ'առնէն: Ի զուր աշխատած եմ Արքունիքը համոզելու թէ (Խրիմեան) կատարեալ տաճկասէր մը դարձած է Ռուսիոյ կողմէ տեսած դժուարութեանց եւ կալուածոց գրաւման երեսէն, սակայն սեւեռեալ զաղափարը չեմ կրցած ջնջել: Խրիմեան Կաթողիկոսի մահէն ետք, մինչեւ իսկ Հոգեհանգիստ կատարելու վախճողներ կային, սակայն ես անօրինակ հանդիսութեամբ եւ դեսպանատուներու պատուիրակներու ներկայութեամբ՝ փառաւոր պաշտօն-Պատարագ եւ Հոգեհանգիստ կատարեցի Մայր Եկեղեցւոյ մէջ... վախճանումէն քիչ օր ետք (1907ին): Անկէ առաջ Եգեանց Կարապետի Հոգեհանգիստը կատարէր Էի 1905ի Մայիս-Յունիսին տեղի ունեցած մահուանէ քիչ ետք, թէեւ ան ալ հաճոյական անձ մը չէր Արքունիքի աչքին» (Խոհք եւ Խօսք, նշ. աշխ., էջ 258):

Օրմանեան, իբր հոգեւոր Առաջնորդ-Պատրիարք, օգտագործած է նաեւ յորելեաններու առիթները՝ ա՛յս կամ ա՛յդ թաղին մէջ ոգեւորութիւն ստեղծելու նպատակով:

«Կը փափաքէի մեծահանդէս յուղարկաւորութիւն կատարել Աբիկ Ունճեան բազմերախտ եւ բարերար ազգայինին, չնայելով, որ կուսակցական դաւաճանութեամբ սպանուած էր 1905 Օգոստոսին: Հանգուցեալը կանուխէն իբր կտակ յանձնարարած էր աղքատներու կերպով՝ միակ (մէկ) Քահանայով յուղարկաւորուիլ եւ Մաթուս եղբայրն ալ կը պնդէր անոր կամքը յարգել: Հազիւ համոզեցի միայն Բերայի քարոզիչով եւ Քահանաներով կատարել տալ յուղարկաւորութիւնը, իսկ ես, իբր սգակիր միայն ներկայացայ, բայց խիղճ ըրի բոլորովին լռել եւ հակառակ եղբօր թախանձանքին, դամբանականը խօսեցայ, չծածկելով Կառավարութեան կողմէ (սնջեցեալին) կրած բանտարկութիւնն ու դատապարտութիւնը եւ կուսակցութեան կողմէ կատարուած դաւաճանութիւնը: Հանդիսական առիթներէ քաղուած այս յիշողութիւններս կը փակեմ, կրկնելով սկիզբը ըրած յայտարարութիւնս թէ անոնց մէջ ո՛չ երբեք ունայնասէր զգացումներէ յորդորուած եմ, այլ ժողովրդական զգացումները ոգեւորելու եւ վշտացեալ սիրտերը մխիթարելու հա-

Մոզումը եւ նպատակը ունեցած եմ» (Խոհք եւ Խօսք, Աշ. աշխ., էջ 258-259):

Օրմանեանին թողած իր կենսագրութեան վերաբերող տուեալները մեզի կու տան անոր եզակի եւ համոզումներու տեր անձնաւորութեան մէջ ճանչնալու Մարդը, հաւատարիմ «Յոգեւորական»ի ցայտուն բարեմասնութիւնները, քաջ եւ հասուն Առաջնորդ-Յովիւրը եւ Ազգային արթուն Գործիչը:

Օրմանեան կը վախճանի Կոստանդնուպոլիս՝ Նոյեմբեր 6, 1918ին:

«Մեր խղճի եւ գիտակցութեան թելադրութեամբ կ'ըսենք.- Օրմանեան Սրբազան, գիտուն, քաղաքագետ, լեզուագետ, փորձառու, մեր Եկեղեցւոյ անցեալին եւ ներկայ պահանջներին քաջ ծանօթ եւ գործունէութեան անսահման եռանդով լեցուած... մի բարձաստիճան հոգեւորական է, որ ծանր օրերի մէջ իսկ ցոյց տուած իւր խելօք գործունէութեան համար արժանի է երախտագիտութեան եւ շնորհակալութեան» (ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ. ՅՈՎՍԷՓԵԱՆՑ, Մաղաքիա Արք. Օրմանեան եւ Կաթողիկոսական ընտրութիւն, Թիֆլիս, 1911):

Անոր մահուան 100ամեակին առիթով, խոր հիացումով կը յիշենք զինքը՝ իբր բացառիկ սպասաւորը Հայ Առաքելական Եկեղեցիին: Ան պիտի շարունակէ ապրիլ Հայ Եկեղեցւոյ Պատմութեան մէջ, որովհետեւ անոր Կեանքը, կրօնական-եկեղեցական Յոգին եւ Ազգային ծառայութիւնը կը մնան իբր ուսանելի եւ օրինակելի բարձր վկայութիւն:

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

. ՕՐՄԱՆԵԱՆ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. Պատրիարք Կոստանդնուպոլսոյ, Կոնդակ-Գրութիւն, 1899, Մարտ 16, թուահամար 107, իբր պատասխան Հայ Կաթողիկոսներու հրատարակած «Մեր Սուրբ Հարց Դաւանութիւն»ը տետրակին:

. ՕՐՄԱՆԵԱՆ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ., Ազգապատում, հտ. Գ., Պէյրուս, 1961:

. ՕՐՄԱՆԵԱՆ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ., Խոիք եւ Խօսք, Երուսաղէմ, 1929:

. ԿԻԼԵՍԵՐԵԱՆ ԲԱԲԳԷՆ ԵՊՍ., Օրմանեան Սրբազան, տե՛ս «Տարոս» Ազատ Հայաթերթ, Բ. Տարի, Պոստոն, 1919, թիւ 17 եւ 19:

. ՄԱԼԵՉԵԱՆ ՎԱՅԱՆ, Ճամբուս ծայրը, Փարիզ, 1954, էջ 314-319:

. ՍԻՐՈՒՆԻ Յ. Ճ., Օրմանեան եւ իր ժամանակը, տե՛ս «Էջմիածին», պաշտօնաթերթ, 1961 եւ 1962. զանազան թիւերու մէջ:

. ՊԱՍՄԱՃԵԱՆ ԳՐԻԳՈՐ, Օրմանեան Սրբազան եւ Եգիպտահայ Գաղութը, Գահիրէ, 1973:

. Մաղաքիա Արք. Օրմանեան, Գիտածոյողոյի Չեկուցումներ, Մոնթրէալ, 1999:

. ԲԱՐՈՒՆԵԱՆ ՎԱՅՐԱՄ, Մաղաքիա Արք. Օրմանեան, Մոնթրէալ, 2001:

. ԵԱՐՏՈՄԵԱՆ ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ., Աստուծան Հայ Միաբանութիւնը եւ անոր պատմական տիւոր վախճանը (1707-1925), «Բազմավէպ», պաշտօնաթերթ, Վենետիկ, 2000, էջ 110-127:

. Զրիստոնեայ Հայաստան, հանրագիտարան, Երեւան, 2002:

. ԱՐՉՈՒՄԱՆԵԱՆ ՉԱԲԷՆ Ա. ԶՅՆՅ., Հայ Եկեղեցւոյ Բարձրաստիճան Հոգեւորականներ, Լոս Անճելըս, 2010:

. ԿՈՍՏԱՆԴԵԱՆ ԷՄՄԱ, Հայոց Եկեղեցին, Մաղաքիա Օրմանեանը եւ օտարազգի գիտնականները, «Էջմիածին», պաշտօնաթերթ, 2012, թիւ Ե., էջ 45-62:

. ՏԱՄԱՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ Ա. ԶՅՆՅ., Մաղաքիա Պատրիարք Օրմանեան Գատըգիւղի հետքերով, Ստանպուլ, 2018:

ԱՐԺՆ. Տ. ՎԱԶԳԵՆ ՔՅՆՅ. ՊՈՅԱՃԵԱՆ

**ԿՈՍՏԱՆԴՆՈՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԺ՝
ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԽԻՎՆԵՐՈՒՄ ՊԱՅՊԱՆՎՈՂ
ԳՐԱԽՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

Հսկայական է Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի թողած գրական ժառանգությունը, որի մի զգալի մասը գտնվում է Հայաստանում – պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի, Հայաստանի ազգային (ՀԱԱ) – Գրականության – արվեստի պետական թանգարանի (ԳԱԹ) արխիվներում:

Մատենադարանում Մաղաքիա Սրբազանին վերաբերող նյութը գտնվում է Գարեգին արքեպիսկոպոս Յովսեփեանի, Նորայր Բյուզանդացու, Կարապետ Տեր-Մկրտչեանի, Սահակ վարդապետ Ամատունու – այլ ֆոնդերում: ԳԱԹ-ի արխիվում պահվում են Թորոս Ազատյանի, Գարեգին Սրվանձտեանի, Կարապետ Կոստանեանի, Համբարձում Առաքելեանի, Արշակ Չոպանեանի, Սմբատ Շահագիզի, Ռաֆայել Պատկանեանի, Գյուտ Աղանեանի, կաթողիկոսական դիվան – այլ ֆոնդերում:

Հայաստանի ազգային արխիվում՝ Մաղաքիա Արք.ին նվիրված նյութերը գտնվում են 56՝ Ս. Էջմիածնի Սինոդ – 57՝ Դիվան Ամենայն Հայոց կաթողիկոսության ֆոնդերում:

Չնայած այն բանին, որ Հայ եկեղեցու պատմության մշակ, լուսահոգի Սանդրո Բեհբուդյանը 2007թ. հրատարակել է «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության Գիրք ԺԵ. Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան Կոստադնուպոլսի Պատրիարք (1896-1908)» փաստաթղթերի ժողովածուն, այնուամենայնիվ նա – այս հետազոտողը չի ընդգրկել Մաղաքիա Սրբազանի թողած ողջ ժառանգությունը, – մնացել են չլուսաբանված նյութեր, որոնք մինչ օրս մնում են չուսումնասիրուած եւ չհրատարակուած:

Ծանօթանալով – ուսումնասիրելով Մաղաքիա Արքեպիսկոպոսին նվիրված արխիվային նյութերը՝ զարմանում ես ու հիանում նրա բազմակողմանի զարգացածությամբ – աշ-

խատասիրութեամբ, ինչպէս նաեւ հայրենասիրութեամբ: Նրան հետաքրքրում էր բացարձակապէս այն ամէնը, ինչ որ կապված էր Հայ ժողովրդի – Հայ Եկեղեցու հետ՝ Հայ Եկեղեցու գործունեությունը, հայ հոգեւորականության գիտական աշխատությունները, իրենց ուսման հետ կապված խնդիրների հաղթահարումը «Արարատ» ամսագրի հրատարակչական աշխատանքները, կարիքաւորներին նպաստ հասցնելու խնդիրը, հայկական ինչ-որ տոհմածառի հետ կապուած հարցը, նորընծայ վարդապետների մասին տեղեկութիւն ստանալը, որբանոցներին նպաստ բաժանելը – շատ ու շատ այլ հարցեր:

Հետագոտելով Մաղաքիա Արք. Օրմանեյանին նուիրուած արխիվային անտիպ նիւթերը՝ մենք այս յօդուածում ուշադրութիւն դարձրեցինք յատկապէս ԳԱԹ-ի – Մատենադարանի արխիվներում պահուող Մաղաքիա Սրբազանի մինչեւ հիմա չհետազօտուած, չլուսաբանուած – անտիպ մնացած գրական ողջ ժառանգությանը:

ԳԱԹ-ի արխիվում պահվում է Կոստանդնուպոլսի Պատրիարքության՝ 1877 թվականին դիւանապետ Մաղաքիա վարդապետ Օրմանեանի անտիպ նամակը՝ ուղղուած Յովհաննէս Զինյ. Մկրեանին, որը նա ուղարկել է 1877թ. Օգոստոսի 11ին Ղալաթիայից: Նամակում Մաղաքիա վարդապետը Տէր Հօր տեղեակ է պահում այն մասին, որ պոլսեցի ոմն Մովսէս Թեւերեանց, թողնելով Հայ հաւատքը, անցել է Հայ կաթօլիկների շարքերը:

1881թ. Դեկտեմբերի 10ին Կարինից ուղղարկուած մէկ այլ անտիպ նամակում՝ ուղղուած ոմն պարոն Համբարձումին, Մաղաքիա վարդապետը գրում է գաղթականների, ինչպէս նաեւ Մինաս Չերազին առաջարկուած պաշտօնի, գիւղական վարժարանների եւ Հայաստանի մասին:

1891թ. Փետրվարի 21-ին Մայր Աթոռի միաբան Գարեգին Սարկաւազ Յովսէփեանին ուղարկած նամակում (անտիպ) Մաղաքիա Արք. Օրմանեանը խօսում է «Արարատ» ամսագրի եւ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբանութեան խնդիրների մասին:

1892 թվականին Սեպտեմբերի 3-ին Սանկտ Պետերբուրգ՝ Յովհաննէս Խաչատրեանին ուղղուած նամակում (անտիպ) Արմաշի Վանքի վանահայր Մաղաքիա Եպիսկոպոսը մասնաւորապէս գրում էր. «... Նեղութիւնս եւ գայրոյթս իսկ պ. Շահ-

Ազգի մի քանի մտերիմների դեմ եղաւ միայն, որոնք իրենց ապարանքներում նստած, իմ վիճակս են որոշում ու խելքերին փչածին պես դատողութիւն տալիս»:

1893 թ. Դեկտեմբերի 9ին Արմաշի դպրեվանքից Մաղաքիա Եպիսկոպոսը նամակ է ուղղում (անտիպ) Յովհաննէս Աւագ Զինյ. Մկրեանին, որում գրում է, որ ոչ մի լուր չունի Էջմիածնի անցուդարձից՝ երեւի թե նկատի ունենալով Մկրտիչ Ա Վանեցու (Խրիմեան Յայրիկ) Կաթողիկոսի ընտրութիւնը եւ օծումը: Նա խօսում է Լիմ անապատի խնդիրներից, ինչպէս նաեւ հետաքրքրվում է ԱՄՆի Ֆիլադելֆիայի եւ Նիւ Եորքի Անգլիական եկեղեցու «սեմինարիաների» ուսման ծրագրով, նաեւ տեղեկութիւններ յայտնում Վեսթմինստերի եւ Օքսֆորդի համալսարաններից եւ նրանց գիտական աստիճաններից:

1897 թվականին Մաղաքիա Սրբազանը Կ. Պոլսից նամակ է ուղղում Գերմանիայի Յալլէի համալսարանի ուսանող Գարեգին սարկաւազ Յովսէփեանին՝ ցանկանալով վերջինին «շուտով ողջունել իբրեւ Վարդապետ»:

Իր՝ 1897թ. Նոյեմբերի 3ին թիւ 1750 (անտիպ) նամակում՝ ուղղուած Գերմանիայից Մայր Աթոռ վերադարձած Գարեգին Յովսէփեանին, Կ. Պոլսի Պատրիարք Մաղաքիա Սրբազանը գրում է, որ շնորհակալ է Գերմանիայից իրեն ուղարկած նուէրների համար եւ սպասում է Գարեգին Սարկաւազի կուսակրօն կարգման ակտիսին:

1898թ. Փետրուարի 2ին Գարեգին Սարկաւազին ուղարկած գրութեան մէջ (անտիպ) Մաղաքիա Պատրիարքը, ներկայացնելով Մայր Աթոռի միաբանութեան ցանկը՝ կազմուած 21 անունից, խնդրում է այն լրացնել:

1898թ. Օգոստոսի 7ին Գարեգին Վարդապետ Յովսէփեանին գրած (անտիպ) նամակում Մաղաքիա Արք.ը տեղեկութիւններ է յայտնում Եղիշէ Եպիսկոպոս Դուրեանի, ինչպէս նաեւ Գաբրիէլ Վարդապետի եւ Ներսէս Վարդապետ Ասլանեանի մասին եւ գրում է. «...անհամբեր կը սպասեմ տեղեկութիւններ վարդապետական, քարոզչական, ուսումնական, խմբագրական», ինչպէս նաեւ կ'ուրախանայ Կարապետ Վարդապետի եւ նրա՝ Գարեգին Վարդապետի յաջողութիւններով եւ վերջինիս Մատենադարանապետ նշանակուելով:

1898 թվականի ապրիլի 23-ի թ. 483 գրությամբ՝ ուղարկուած Հայ Մշակույթի նուիրեալ եւ հասարակական գործիչ մոսկվայաբնակ Սմբատ Շահագիզին (եւս անտիպ), Կ. Պոլսի Պատրիարք Մաղաքիա Արք. Օրմանեանը նշում է, որ Թուրքիայի Հայկական գաւառներում տեղի ունեցած կոտորածների հետեւանքով որբացել են բազմաթիւ երեխաներ: Նա մասնաւորապէս գրում է, «Թուրքիոյ Ասիական գաւառաց մէջ տեղի ունեցած ցաւալի դէպքերու հետեւանօք բազմաթիւ որբերու մնացած լինելը ծանօթ իրողութիւն մ'է:

Մինչեւ ցարդ երեսուն առաջնորդական վիճակներէ հասած որբոց ցանկերն երեսուն եւ հինգ հազարէ աւելի որբ եւ անտէր մանուկներ կը ներկայացնեն յականէ անուանէ, երբ աւելցնենք այն վիճակներն ալ, որոնք չէին կրցած պահանջուած ցանկերը դէռ յուղարկել, որբոց ընդհանուր թիւն աւելի քան յիսուն հազար կ'ենթադրուի:

Այս որբոց խնամածութեան համար մինչեւ ցարդ ազգովին ինչ-ինչ տնօրէնութիւններ եղան նիւթական միջոցներու ներածի չափով, այսինքն՝ անոնցմէ խումբ մը գաւառներէ Պոլիս բերուելով գետեղուեցան՝ Սք. Փրկչեան հիւանդանոցի մէջ Արիեստարան-որբանոցն եւ արիեստ սովրեցնելու համար անոց:

Չմիւռնիա – Ադրիանապոլիս – Կեսարիա – Գաղատիս – Կարին իրենց ծախիւք մանր որբանոցներ բացին. քանի մը վանքերում մէջ ալ, որք դէռ կանգուն կը մնային եւ կամ որբանոցներ հաստատուեցան իւրաքանչիւր գաւառի Առաջնորդին կամ Առաջնորդի Տեղապահին նախագահութեամբ կազմեալ հոգաբարձութեան մը խնամով տակ եւ Պատրիարքարանի կողմանէ ամսէ ամիս 10 կամ 15 կամ 20 կամ 30 լիրա նպաստ մը վճարելով, եւ մինչ ցարդ:

...Յաջողեցաւ մեզ տասներկու որբանոցներ հաստատել ի Խարբերդ Գալէի վանուց մէջ, յեղեսիա Սք. Սարգսի վանուց մէջ, ի Տիգրանակերտի մասնաւոր շէնքի մը մէջ, ի Կարին՝ Կարմիր վանուց մէջ, ի Վան՝ Վարագայ վանուց մէջ, Կարմրաւորի վանոյ մէջ, Սալնուպատի վանուց մէջ, Նարեկայ վանուց մէջ, ի Բաղէշ՝ Խնդրակատարի վանուց մէջ, ի Մուշ՝ Սք. Առաքելոց վանուց մէջ, ի Մարաշ մասնաւոր յարկի մը մէջ, եւ յԱրաբկիր Նոյնպէս մասնաւոր յարկի մը մէջ:

Այլ սակայն պետք է խոստովանիւք, որ ... փրկելու այն հազարաւոր որբերու մէջէն, եւ պետք ունինք դէռ ուրիշ գա-

լամներու մէջ ալ խոր որբանոցներ բացելու, եւ նոյն իսկ այն տեղերն, որ օտարներ ալ բացած են եւ իրենց խնամաց ներքեւ գտնուող որբոց՝ իրենց ուզած կերպով կրօնական ուղղութիւն տալ չեն վարանիր:

Կը տեսնենք, ազնուաշուք սիրելի, թէ որքան մեծ է աղետն ու անբաւական դարմանելու միջոցներն, ուր թողունք միւս կողմէ որ այժմ մեր առձեռն ունեցած միջոցներն ալ սկսած են անձկութեան մատնուիլ, եւ կը նեղուինք, նոյնիսկ, որբանոցներու յատկացեալ ամսաթոշակները վճարելու համար:

Ուստի, կոչ կ'ընինք եւ ձեզ, որ հաճիք յանուն այդ թշուառ որբոց նպաստ հասցնել փութալ, եւ վստահ եմք, որ մեր այս հրաւերը խոր արծագանգ պիտի գտնէ ձեր բարեսէր հոգիներու մէջ, եւ պիտի մատուցանէք մեզ ձեր ձեռնտուութիւնն որբոց խնամութեան գործին մէջ:

Կը մաղթինք, որ Տէր Աստուած վարձահատոյց լինի ձեզ, եւ կ'ողջունենք զձեզ հայրական սիրով»:

1900 թուականի Նոյեմբերի 26ի գրութեան մէջ (անտիպ) Մաղաքիա Արք. Գարեգին Վարդապետից հետաքրքրուում է Մայր Աթոռի միաբանների՝ Յովհաննէս Արք. Շիրակունու եւ Անանիա Արք. Համագասպեանի մասին: Գոհունակութեամբ գրում է, որ Գարեգին Վարդապետը կրկին ստանձնել է «Արարատ» ամսագրի խմբագրի պաշտօնը եւ այն դարձել է «Բաւականին հետաքրքիր հանդէս»: Պատասխանելով Գարեգին Վարդապետի կողմից իրեն ուղարկուած Մայր Աթոռի միաբանների ցուցակի մասին, գրում է, որ վերջին երկուսին՝ Մամբրէ եւ Բաբգէն Վարդապետներին, «չեմ յիշեր թէ ո՛վ են»:

1901թ. Օգոստոսի 4ին Կ. Պոլսից Թիֆլիս՝ Վիրահայոց թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին վարդապետ Յովսէփեանին ուղղուած թ. 1020 նամակում (անտիպ) Կ. Պոլսի Պատրիարք Մաղաքիա Օրմանեանը շնորհակալութիւն է յայտնում Հայր Սուրբին հարիւր ռուբլի գումարի համար. «... զուր բարեյիշատակ Մելքոն Թաղեոսեանի ժառանգորդ հաճեր էին ձեր միջոցաւ ուղարկել մեզ՝ Վարագայ որբանոցին յատկացնելու խնդրանքով»: Սրբազան Հայրը Գարեգին Վարդապետին յիշեցնում է նրա նախորդ ամսուան՝ Յուլիս 10ի գրութիւնը, որում Հայր Սուրբը «... կը խոստանայ միանգամայն բոլորանուէր ընծայել ինքզինքը որբոց խնամածութեան գործին եւ այդ նպատակաւ նիւթական միջոց-

Ներ հայթայթել բարեսեր անձանց աջակցութեամբ: Ձեր այս բարեգործական խորհուրդն, որուն յաջողութեան ապացոյցը կրնայ նկատուիլ այս առաջին նուիրատուութիւնն, մեծապէս արժանի է շնորհաւորութեան եւ շնորհակալութեան, վասնզի մինչ նպաստից սնդուկը նիւթական անձկութեան պատճառաւ դժուարութեանց մատնուած է որբանոցներու մատակարարութեան գործին, ձեր աշխատութեան ու աջակցութեան խոստումն ո՛չ նուազ կարելոր զօրավիգ մը կու գայ ըլլալ մեզ եւ թեթեւացնել մեր ուսերուն վրայ ծանրացած պատասխանատուութեան բեռը:

Միայն հարկ կ'համարեմք դիտել տալ ձեր սիրելութեան թէ ըստ որում բոլոր որբանոցներն կմատակարարուին Պատրիարքարանիս կողմէ, որ կը վճարէ ամսէ ամիս անոնց սահմանեալ թոշակներն, բանաւոր է եւ օգտակար, որ բոլոր նուէրներն, առանց մասնաւոր որբանոցի մը յատկացուելու, ուղղակի դրկուին Պատրիարքարանիս յանուն Նպաստից Սնդուկին, վասն զի այդ նուէրներն են, որ կը կազմեն այն սնդուկի հասույթներն, եւ հետեւաբար անոնցմով է, որ կրնայ վճարուիլ այն որբանոցներու ամսաթոշակները եւ ապահովուել անոնց գոյութիւնը»:

1901 թուականի Օգոստոսի 26ի գրութեան մէջ (անտիպ)՝ ուղղուած Վիրահայոց Թեմի Առաջորդական Փոխանորդ Գարեգին Վարդապետ Յովսէփեանին, Մաղաքիա Պատրիարքը խնդրում է նրան գտնել իր համար «Տփղիսի մէջ մը լաւ ու մտադիր թղթակից եւ գործակալ, որ կրնայ իմ յանձնարարութիւններս կատարել»: Մինչեւ հիմա դա կատարում էր Գիւտ Աւագ Զինյ. Աղանեանը, «բայց նա ալ զբաղված է»: Նաեւ խնդրում է ուղարկել իրեն 1900 – 1901 թթ. օրացոյցը:

1901, Նոյեմբերի 15ին Մաղաքիա Պատրիարքը, դիմելով (անտիպ) Երեւանի թեմական տեսուչ եւ Մայր Աթոռի հրատարակչական մարմնի անդամ Գարեգին Վարդապետ Յովսէփեանին, մասնաւորապէս նշում է, որ ստացել է Պատմագրքի հրատարակման հաստատումը եւ իբրեւ նուէր կ'ընդունի դրկուած հատորը: Ողջոյններ է դրկում բարեշնորհ Գալուստ Տէր-Մկրտչեանին, Ստեփան Մալխասեանին եւ Կարապետ Վարդապետ Տէր-Մկրտչեանին:

1902թ. Յունուար 24ի գրութեան մէջ՝ (անտիպ) ուղարուած Գարեգին Վարդապետ Յովսէփեանին, Կ. Պոլսի Պատրիարք Մաղաքիա Արք. Օրմանյանը նրան տեղեակ է պա-

հում, որ երկրաշարժի եկթարկուած Կարինի դժբախտ Յայրութեան օգտին նրա կողմից ուղարկուած գումարը հասել է Պատրիարքարան որը. «... Մայրաքաղաքի ռուսաց վսեմ. դեսպանի կողմից Յունուարի 13 թուական գրով մը յանձնուեցաւ մեզ 175 օսմ. լիրայի գումարը»:

Նոյն թուականի Փետրուար 7ի թ.10830 գրութեամբ (անտիպ) Մաղաքիա Արք.ը յայտնում է Գարեգին Վարդապետին, որ ստացել է նրա՝ Յունուար 17ի նամակը, որով Յայր Սուրբը յայտնում է. «թէ Կարնոյ երկրաշարժէ արկածելոց ի նպաստ 2000 րուբլիի գումար մը հաւաքել էք ցարդ՝ ըստ հրամանի Վեհափառ Յայրապետին»:

Ռուսական դեսպանատան միջոցաւ առ այժմ ստացած ենք 175 լիրա միայն, ինչպէս գրած ենք մեր 24 Յունուար թուականաւ գիրով, զոր բարոյեցիք Կարնոյ երկրաշարժէ արկածելոց համար հաւաքուած գումարին, առաջադրեալ նպատակին գործածելու համար:

Գալով բաշխման եղանակին մասին ձեր խնդրած տեղեկութեանց, պիտի փութամք, երբ նպաստի գործողութիւնք ամփոփուեն, ձեր յղած գումարին կիրառութեան մասին կարելոր բացատրութիւններն տալ ձեզ:

Կը կրկնենք ձեզ մեր շնորհակալութիւններն այն հոգատարութեան համար, որով չզլացաք մեզ Ձեր աջակցութիւնը խեղճ արկածելոց օգնութեան գործին մէջ, եւ կը խնդրենք, որ շարունակէք ձեր ջանքերն այս նպատակաւ»:

1902թ. Մարտի 12ին Մաղաքիա Արք.ը Կ. Պոլսից նամակով (անտիպ) դիմում է Վիրահայութեան Թեմի թեմական կառավարութեան նախագահ Գարեգին Վարդապետ Յովսէփեանին եւ մասնաւորապէս նշում է. «Մեր գաւառացի որբերու եւ մանուկներու պաշտպանութեան դրութեան մէջ կարելոր փոփոխութիւնք տեղի ունեցան այս անգամ: Որբանոցներն արդէն առժամանակեայ հաստատութիւններ էին, եւ անոնց պայմանաժամը կը սկսեր հետզհետէ լրանալ: Սակայն, անոնց մէջ ո՛չ միայն անչափահաս բազմութիւն տղաք կային խնամքի կարօտ, այլեւ անոնցմէ դուրս՝ հազարաւոր բազմութիւն մը, զորս պետք էր դնել այնպիսի վիճակի մը մէջ, որ կարող լինէին իրենց ձեռաց աշխատութեամբ հոգալ զիրենք եւ չկարօտէին ցվերջ ողորմութեան:

Ուստի, իբրև վերջնական ու հաստատուն եղանակ մը անոնց պաշտպանութեան՝ կրկնակ կարգադրութիւնք եղած են.

1. Ամեն գիւղի մէջ մէկ դպրոց բանալ միակ ուսուցչի մը ձեռքին տակ, որպէսզի կարդալ, գրել, հաշուել ու իրենց կրօնքը սովորեցնեն:

2. Գաւառական քանի մը գլխաւոր կենտրոններու մէջ՝ մէկ մէկ մնայուն արհեստանոց հաստատել եւ այս արհեստանոցներու մէջ՝ փակելի որբանոցներն մեկնող անչափահասներն ու բոլորովին անտեր մնացած տղէկները գիշերօթիկ ընդունել, եւ անոնցմէ դուրս գտնուողները ցերեկայ, եւ ուսուցանեն պիտանի արհեստներ»:

1902թ. Մարտ 12ի թ. 4067 գրութեամբ (անտիպ)՝ ուղղուած Գարեգին Վարդապետին, Մաղաքիա Սրբազանը նորից ընդգծում է գաւառների որբանոցներին աջակցելու մասին, ինչպէս նաեւ անել ամեն բան, որպէսզի որբերը «...կարող լինէին իրենց... աշխատութեամբ հոգալ զիրենք եւ չկարօտէին ցվերջ ողորմութեան»: Անհրաժեշտ է «ամեն գիւղի մէջ մէկ-մէկ դպրոց բանալ»:

Նոյն թուականի Յունիսի 8ի նամակում (անտիպ) Մաղաքիա Արք. գրում է Գարեգին Վարդապետ Յովսէփեանին, որ ստացուած է իր կողմից՝ ի նպաստ Կարինի երկրաշարժից տուժաց Յայերին Յունիս 6ին ուղարկուած հանգանակութիւնը՝ 400 ռուբլու փոխարէն՝ 46 լիրա եւ 46 դուրուշ:

Հետաքրքրական է 1904 թվականի Փետրվար 29ին Կ. Պոլսից Կոստանդնուպոլսի Պատրիարք Մաղաքիա Արք. Օրմանեանի կողմից Մոսկվա՝ Սմբատ Շահագիզին ուղարկուած նամակը (անտիպ), որում Սրբազան Յայրը շնորհակալութիւն է յայտնում 1000 ռուբլի Մոսկվայից ուղարկուած Մշոյ սովեալների համար. - «...Ձեր Ազնուութիւնն Մոսկուայի որբախնամ Մասնախմբի կողմէ 1900 տարուան Յունուար 11ին դրկուած է 1000 ռուբլի, որ 1900 Յունուար 22ին ընդհանուր կարօտելոց հաշուոյն անցած եւ ըստ այնմ գործածուած է նպատակին... Կը խնդրենք նաեւ, որ շնորհ ընէք առաջին առթիւ դրկել մեզ նաեւ քաղաքիդ բարեսար ազգայնոց ցուցակն, զոր խոստացած էիք հաղորդել»:

1904թ. Յուլիս 30ի թ. 5861 նամակով (անտիպ) Մաղաքիա Արք. Օրմանեանը, նորից դիմելով Ս. Շահագիզին, մոսկվայաբնակ Յայերից աջակցութիւն եր խնդրում Տարնի

Հայերի համար: Նա մասնաւորապէս գրում էր, «Տարնոյ զանազան կողմերը վերջերս պատահած աղետալի անցքերը անասելի խեղճութեան մատնած են, նոյն կողմերս մեր ազգայինները: Բնակարան, ստացուածք եւ ամէն ինչ կորուսած՝ կարօտ եղած են չոր հացի, եւ անոթութենէ մեռնողներ անպակաս են ամէն օր, ինչպէս մեզ հասած աղէկտուր տեղեկութիւնք կը գուժին:

Այս խեղճերուն օգնութեան հասնելու համար՝ հարկադրուած ենք նորմէ դիմել ազգէն ձեռնտուութեան, ինչպէս դիմած ենք արդէն նաեւ Վեհ. Կայսեր գրութեան: Ուստի, կը խնդրիմք եւ ձեր բարեսրտութենէն կարեկցել այս արկածեալներուն եւ առատաբուղի սրտով իր նպաստը հասցնել մեզ, որ եւ մենք օր առաջ կարող լինենք հասցնել կարօտելոց»:

1908 թուականի Յունուարին Մաղաքիա Արք. նամակով (անտիպ) դիմում է Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի «Արարատի» խմբագրութեան՝ խնդրելով «Արարատ» ամսագրի համարները Կ. Պոլսի Պատրիարքութիւն դրկել «սովորական թղթատարով եւ ո՛չ colis postalով, որպէսզի ուղղակի յանձնուին Պատրիարքարանիս, առանց ուրիշի ձեռքը անցնելու»:

Նոյն թուականի Փետրուար 8ին, Մաղաքիա Արք. իր թիւ 111 գրութեամբ (անտիպ) տեղեկացնում է Գարեգին Վարդապետին.- «Բարգէն Վարդապետը (Կիւլեսերեան) Տղրի Վանքի առաջնորդ եղաւ եւ Արմաշ գնաց»:

Նոյն օրը՝ Փետրուարի 8ին, Մաղաքիա Արք. մէկ ա՛յլ նամակ է ուղարկում (անտիպ) Գարեգին Վարդապետ Յովսէփեանին, որում գրում էր.- «Ստացայ «Արարատի» Յուլիս-Օգոստոս պրակը: Ստացայ եւս Կարապետ Վարդապետի «Հայոց եկեղեցու Պատմութեան հատորը»:

1908թ. Յոկտեմբեր 30ին, Մաղաքիա Արք.ը նամակում (անտիպ)՝ ուղղուած Գարեգին Վարդապետ Յովսէփեանին, լուսաբանում է Հայոց Ազգյին Սահմանադրութեան վերաքննումը եւ փաստորէն արգելումը Թուրքիայի կառավարութեան կողմից եւ Պատրիարքութեանից իր հեռանալու հարցերը, ինչպէս նաեւ խորհում է Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան մասին:

1912, Մարտ 18/31ին Բերայից Մայր Աթոռ Սբ. Էջմիածին Սահակ Վարդապետ Ամատունուն ուղարկուած նամակում (անտիպ) Մաղաքիա Արք. բարձր է գնահատում նրա

«Հին եւ նոր պարականոն եւ անվաւեր Շարականներ» երկը, որ Հայր Սուրբը նրան էր ուղարկել՝ ծանօթանալու համար: Երկը հրատարակվել է Սուքիա Արք. Պարզեանցի բարերարութեամբ:

1913թ. Մարտի 8ի նամակում (անտիպ)՝ ուղղուած Գարեգին Վարդապետ Յովսէփեանին, Մաղաքիա Արք. տեղեակ է պահում վերջինիս այն մասին, որ Մուշեղ արեղան դարձել է Վարդապետ եւ Մայր Աթոռի կողմից հաստատուել Ամերիկայի Թեմի Առաջնորդ: Նաեւ գրում է այն մասին, որ Կոստանդնուպոլսում Կոմիտաս Վարդապետի կողմից երգեցիկ խումբ է ձեւաորուել, ինչպէս նաեւ Գերմանիայի Լայպցիկ քաղաքում հրատարակուել է Կոմիտասի երաժշտական երգերի ժողովածուն:

1914 թվականին Մաղաքիա Արք. Օրմանեյաը տեղափոխուում է Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Վանք եւ դասաւանդում ժառանգաւորաց Վարժարանում: 1914թ. Յուլիս 18ին, թ. 59 գրութեամբ (անտիպ) նա դիմում է Գարեգին Վարդապետ Յովսէփեանին, որում մասնաւորապէս գրում է. «Այստեղ շատ կրկնուած լսեցի ձեր մտադրութիւնը միջոց ժամանակի մը Երուսաղէմ անցնելու եւ գրչագիրներու ճոխ մատենադարանով զբաղելու: Եւ ձեր այս փափաքը կը յորդորէ զիս լրջօրէն հրաւիրելու ձեզ, որ այս մտադրութիւններից չուշացնէք: Լսած էք արդէն, որ Մոսկուայի Պր. Յ. Ժամհարեան գումար մը նուիրած է Վանքին, անոր շահով ժառանգաւորաց Վարժարանին ընթացքը ընդարձակելու եւ եկեղեցականութեան ուսումներ աւելացնելու: Այդ հրիտակը տակաւին գործադրուած չէ, զի շրջանաւարտներ Վանքին մէջ տիրող շփոթութենէն խրտչելով, եկեղեցականութենէն խուսափած եւ հեռացած են: Այս տարի յատուկ միտք գրի այդ կետին եւ շրջանաւարտները կը պահեմ, բայց խնդիր է բարձրագոյն ուսմանց համար ուսուցիչ հոգալ:

Եթէ հաճիք մեզի հրամմել գալ, թե՛ մատենադարանն եւ գանձարանը առատ նիւթ կը մատակարարեն, նոր մը պատրաստելու չափ եւ թե՛ մեր բարձրագոյն դասարաններուն ուսուցիչը կը ճարուի, անշուշտ ո՛չ առանց պատշաճ փոխարինութեան:

Թախանձելով կը սպասեմ յաջող պատասխանի մը, Սեբաստեայէն Երուսաղէմ ցամաքի ճանապարհը կրնայ նորանոր նիւթեր ընծայել ձեր հետազօտութեանց:

Ես ամենայն փութաջանութեամբ Վանքին բարեկարգութեան կը հետեւիմ, թեպէտ Կ. Պոլիս բարեկարգութեան անհոգ Վանքին դրամական կարողութեան տիրանալու կը հետեւի: Կը յուսամ թէ ողջամտութիւնը կը յաղթանակէ:

Այստեղ շատ մեծ եւ գերադրապէս բարձր է ձեր անձին հանդէպ համակրանքը եւ յարգանքը եւ վստահ կրնաք ըլլալ սիրալիր եւ յարգալիր ընդունելիութեան:

Ակնկալութեամբ կը սպասեմ պատասխանիդ... »:

1914, Սեպտեմբերի 15ի նամակում (անտիպ) Օրմանեան Սրբազանը ազդու տողերով Գարեգին Վարդապետին ցաւակցում է Սուրբաս Արք. Պարզեանի մահուան առթիւ: Նշում է, որ ցաւակցական հեռագիր է ուղարկել Վեհափառ Զայրապետին եւ Մեսրոպ Եպս. Տէր-Մովսիսեանին: Պարտադրում է, որ համախոհների բացակայութեան պայմաններում նա պիտի կապ պահպանի իր հետ: Նաեւ գրում է. «Գիտեմ թէ Սուրբաս Սրբազան կտակ ունի եւ տպագրութեանց ալ մաս հանած է»:

Ինչպէս վերելում նշեցինք, Մաղաքիա Արք. Օրմանեանի գրական ժառանգությունը բաւարար ուսումնասիրուած չէ եւ այսօր արդէն մանրագնին եւ խոր ուսումնասիրութեան պահանջ ունի:

ԱՐԺՆ. Տ. ՉԱՔԱՐԻԱ ԲՅՆՅ. ՍԱՐԻԲԵԿԵԱՆ

ԴՐՈՒԱԳՆԵՐ ՕՐՄԱՆԵԱՆԻ ԲԱՆԱԿԵՕՍԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԵՆԵՆ

Հայ Եկեղեցւոյ եւ ընկերային կեանքի ականաւոր դէմքերէն մէկն է Մաղաքիա Արք. Օրմանեանը: Ան պատմութեան մէջ արձանագրուած է իբր անխոնջ ազգային գործիչ, աստուածաբան, պատմաբան, հայագետ, քարոզիչ, հրապարակախօս, Հայ Եկեղեցւոյ արժանաւոր սպասաւոր:

Մաղաքիա Օրմանեան իւր ժամանակի հազուադէպ ազգային-եկեղեցական գործիչներէն էր, որ ստացած էր փայլուն բարձր կրթութիւն եւ բազմաթիւ կոչումներ: Հռոմի մէջ ուսանելով արժանացած էր՝ իմաստասիրութեան, աստուածաբանութեան եւ եկեղեցական իրաւագիտութեան մագիստրոսի աստիճաններուն: Ան լրջօրէն եւ հետեւողական կերպով պայքարած էր «հռոմեադաւան» Հայութեան «կաթոլիկութեան» մէջ ծուլելու Պապական քաղաքականութեան դէմ: Իր այս դիրքորոշումը հանգամանօրէն արտայայտած է իր «Արեւելեան Կաթողիկէ Հայք» (1870, Իտալերէն), ապա «Ռեւերսուրուս կամ Հայք եւ Պապութիւն» (1872, Իտալերէն) եւ «Արեւելեան Կաթոլիկաց Կրօնական ազատութիւնը եւ քաղաքացիական իրաւունքները» (1872, Ֆրանսերէն), վերջապէս նաեւ «Վատիկան եւ Հայք» (1873, Ֆրանսերէն): Աշխատութիւնները մէկը միւսին ետեւէն կը բացայայտեն Օրմանեանի գաղափարական ամուր կեցուածքը, որուն պատճառաւ ալ կը յայտնուին Պապական արգիլուած գիրքերու ցանկին մէջ:

Սակայն, բուն խառնուածքով երիտասարդ Օրմանեանը անդրդուելի էր: Ան կը զգայ թէ պիտի խեղդուի այդ մթնոլորտին մէջ, որ անկարելի էր այլեւս աշխատիլ եւ ստեղծագործել:

Ի վերջոյ, Օրմանեան կը հաստատուի Կոստանդնուպոլիս, արդէն լրջօրէն խորհելով վերադառնալ Հայ Առաքելական Եկեղեցւոյ գիրկը: Ան պարզաբանած է իր դիրքը. «Հռոմադաւանութենէն հեռանալու միտքը իմ վրայ ո՛չ կիրքի մը վայրկեանական որոշում եւ ո՛չ շահադիտութեան կեղծիք էր, այլ երկար ատեն մտածուած եւ կշռուած եւ խոհա-

կան քայլերով յառաջացած գործ մը եղած է» (Օրմանեան Մ. Խոհք եւ Խօսք, Երուսաղէմ, 1929, էջ 6):

Հաստատուած իր որոշումին մէջ, 1877, Փետրուար ամիսին, Օրմանեան դիմումնագիր մը գրած է եւ ներկայացուցած Կոստանդնուպոլսոյ Հայոց Պատրիարք Ներսէս Արք. Վարժապետեանին: Հայոց Պատրիարքը նախապէս տեղեակ ըլլալով երիտասարդ խոստումնալից կրօնականի գործունէութեան, Օրմանեանին խորհուրդ տուած է ըսելով թէ «Տեղդ կեցիր եւ խմորէ, մենք քեզ արդէն կը ճանչնանք»:

Այս «խմորումի» շրջանին, Օրմանեան աշխատած է իբր վերատեսուչ Ղալաթիոյ Ազգային Մատենադարանին եւ արդէն աւելի ետք դարձած է Ղալաթիոյ Եկեղեցւոյ քարոզիչ:

Բնատուր հռետոր՝ այս ծառայութիւններուն կ'աւելցնէ նաեւ մէկ ուրիշ ազգային գործունէութիւն մը ան տարբեր առիթներով հանդէս կու գայ բանախօսութիւններով, որոնց վրայ կը փորձենք դարձնել մեր ուշադրութիւնը:

Պատմական իրադարձութիւններով հարուստ շրջան մըն էր 1877-1878 թուականները: Ռուս-Թուրքական պատերազմէն ետք Արեւմտահայութիւնը նոր յոյսերով ու ծրագիրներով լեցուած էր: Ասոր աւելցած էր Ազգային Սահմանադրութեան ծնունդը, որով իրապէս հպարտ էր Արեւմտահայութիւնը:

Ահա այս օրերուն է, որ Օրմանեան եւս ոգելորուած՝ սկսած էր հանդէս գալ ազգասիրական բնոյթ ունեցող հրապարակախօսութիւններով: 1879, Յունուար 8ին Օրթագիւղում Օրմանեան ներկայացուցած է «Հայուն անցեալը, ներկան եւ ապագան» նիւթը: Այս բանախօսութիւնը քանի մը օր ետք՝ հրապարակուած է «Մասիս» պարբերականին մէջ, ասոր յաջորդած են տպագիր միւս բանախօսութիւնները: (Մասիս, 1879, թիւ 2230-2240 ներառեալ 1879, Յունուար 16էն 27ը): Այսուհետեւ, մեր յղումները բանախօսութիւններու կ'ըլլան «Մասիս» էն:

Այսպիսով, Օրմանեան սկսած էր իր կրթական, դաստիարակչական «ուխտագնացութիւնը»: Բանախօսութիւններով ներկայանալը Հայ ժողովուրդին եւ վերադարձը դէպի Հայ Առաքելական Եկեղեցին՝ համընդաց էին: Այս պատճառով, Օրմանեանին գործունէութիւնը կ'անուանեմ՝ Ուխտագնացութիւն:

«Յայուն անցեալը, ներկան եւ ապագան» լսարանը կ'ունկնդրէ բացառիկ ջերմութեամբ, քանզի Օրմանեանին խօսքերը եւ արտայայտած գաղափարները մօտ էին ժողովուրդի ձգտումներուն, օրուան ակնկալիքներուն եւ յոյսերուն: Բանախօսը ճոխ ճարտասանութեամբ եւ կամ վերացական մտքերով չէր տարուած, ինչպէս Օրմանեան ինքը նշած է, ան հետամուտ էր «գործնական եւ իրական խնդիրներուն»: Վերամբարձ խօսքերու ու քարոզներու ատեն չէր, այլ հասկնալու պատմական կացութիւնը եւ ըստ այդմ գործելու:

Իր բանախօսութիւններուն մէջ Օրմանեան շեշտած է, որ Յայ ժողովուրդին անցեալը պէտք է ներկայացնել ո՛չ միայն Սուրբ Գրային դրուագներով կամ գեղեցիկ ականդութիւններով, այլ նախ եւ առաջ՝ լուրջ հնագիտական վերլուծումներով. «Աւերակ Յայաստան աւերել է Յայ ազգը, իւր աւերակաց նշխարքը բոլոր աշխարհի երեսը սփռուած են. այդ աւերակները թող մեզի իմացնեն Յայոց անցեալը»: Ո՛չ թէ մարդկային սնապարծութենէ դրդուած, բայց պատմական իրականութիւնը մատնանշելով, կ'ըսէ թէ Քաղդեացին, Բաբելացին կամ Մարերը չկան, իսկ Յայը կ'ապրի եւ ապագայ ունի: Ան հետաքրքիր դիտողութիւն մը կ'ընէ ըսելով. «Եթէ մեր անցեալին մէջ քիչ է Յայաստանի փառքը իբր պետութիւն, բայց շատ է Յայուն փառքը իբր ազգ»:

Օրմանեան վերլուծած է Յայ ժողովուրդին անցեալը եւ տեսակէտ մը նշելով, որ Յայոց անցեալը, ա՛յլ ազգերու համեմատութեամբ, ունի ազգային գերազանց գիծեր: Ըսել է թէ Յայ իր ուրոյն պատմական ճանապարհը կ'անցնի: Երեւի թէ հենց այս ինքնատիպութիւնն է Յայ ժողովուրդի գոյատեւման գաղտնիքը:

Օրմանեան համառօտ խօսած է եւ Յայու նկարագրի մասին, ինչպէս նաեւ Յայ մարդու հոգեբանութեան մասին: Ըստ Օրմանեանին, պատմութիւնը թերթ առ թերթ կը բացայայտէ Յայ մարդուն բացառիկութիւնը. «Յայուն անցեալը անհատական կատարելութեանց նշանակ է»: Ինչ խօսք, ամեն մէկ Յայ անհատ կը կրէ այդ բացառիկ տարրը:

Իւրաքանչիւր Յայ ունի նմանատիպ իղձեր, ինչ որ ամբողջական ազգը, կ'ընդհանրացնէ բանախօսը, եւ անհա պատմութեան թատերաբեմին «ափ մը մարդիկ» կը դիմակայեն անեղ բանակներու եւ աւերող ոյժերուն: Բանախօսը

կը շեշտէ թէ ամէն Յայ իր մէջ ազգ մը կը կրէ իր արժէքներով եւ աւանդութիւններով, ուր բարձրագոյն աստիճանի դրուած են՝ Լեզուն եւ Կրօնը: Ահա արժէքներու սանդղակի առաջին աստիճաններուն Լեզուն է, Կրօնը եւ Մշակոյթը:

Օրմանեան կը կէ, որ պատմական հանգամանքներու բերումով Յայը դարձած է աշխարհասփիւռ, բայց ուր ալ որ գացած է անպայման հասած է «բարձր դիրքերու: Ուր որ խարխիս նետած է Յայ պանդուխտը՝ իւր մտքի ճկունութեամբ եւ հարմարելու իւր գերազանց կարողութեամբ ան հաստատուած ու ամրացած է նոր ընկերութեան ու նոր պայմաններու մէջ: Օրմանեան կ'ըսէ. «Ինչ որ պակասեց յընդհանուրն, լրացաւ առաւելօքն Յայ անհատից ճարտարութեամբ եւ գործնական հմտութեամբ»:

Օրմանեան համոզուած էր, որ Յայը ունի բոլոր յատկանիշները «քաղաքակիրթ ազգ կազմելու համար»:

Բանախօսը արդարացի գնահատականներով տալով՝ խօսած է եւ Յայու թերութիւններու մասին, ինչպէս, օրինակ, անհրաժեշտութիւնը մաքրելու Յայ Լեզուն մաքրելու օտարամուտից, որը ի դէպ կը մնայ որպէս արդիական խնդիր:

Օրմանեան իր բանախօսութեան մէջ անդրադարձած է Յայ Գիրքի տպագրութեան հարցին եւ կշած թէ քիչ են գիտական հրատարակութիւնները: Այո՛, ըսուած է, ճիշտ է, որ տպարաններ ունինք, սակայն անոնց տարողութեան՝ կարողութեան համեմատ գործածել հարկ է, ավելացնելով Յայ Գիրքի հրատարակութիւնները: Իրապէս հեռատես ազգային-եկեղեցական գործիչի կոչ մըն է այս իր ժողովուրդին:

Շարունակելով բանախօսութիւնը, Օրմանեան հերքած է այն թիւր կարծիքը, որ իբր թէ Յայերը «գինուց վարժութեան մէջ» յաջող չեն: Իբր փաստարկ՝ ան բերած է ռազմարուեստի մէջ հմուտ ու անուանի գինուորականներու անուններ, ինչպիսիք էին՝ Մադաթով, Արդութեան, Բեհբութեան, Բագրատիոն, Լոռիս-Մելիքով, Յովհաննէս Լազարեւ, Արշակ Տեր-Ղուկասով: Ի մասնաւորի, ան յիշեցուցած է. «Յայ ազգի սպայակոյտի, Գարապաղի այրուծիոյն եւ Կովկասեան թնդանօթածիգներուն քաջագործութիւնը»: Օրմանեան ընդգծած է, որ բոլոր վերոյիշեալները արեւելահայեր են, բայց կ'ըսէ թէ նոյն արիւնը կը հոսի բոլորիս երակներուն մէջ:

Բանախօսը կը բացատրէր ունկնդիրներուն, որ Ռուսահայեր կամ Օսմանահպատակ հայեր կ'ապրին տարբեր վար-

չակարգերու եւ տարբեր պետութեանց մէջ, եւ ուստի անոնց խնդրիներն ալ տարբեր եղած են եւ կը մնան այդպիսին:

Այսպէս, գոյապահպանման կռիւին մէջ ամէն մէկ հողատարածքի վրայ ապրող հայորդի՝ իւրովի լուծում գտած է: Ամէն Յայ անհատ ինքնատպօրէն ծաղկած ու զօրացած է: Բանախօսը նաեւ յիշեցուցած իր ունկնդիրներուն, որ Ռուսահայերը Սահմանադրութիւն չունին ինչպէս արեւմտահայերը, բայց այնտեղ ալ՝ ռուսական պետական պաշտօնեաներու մէջ մեծաթիւ Յայեր կան, որոնք կը ծառայեն Յարի փոխարքային: Օրմանեան հպարտօրէն կ'աւելցնէ թէ միայն Յայոց հողերուն վրայ ապրող հայորդիները չէ որ բարձր պաշտօններու կը հասնէին, այլեւ ի սփիւռս աշխարհի, ինչպէս օրինակ Նուպար Փաշան Եգիպտոսի մէջ:

Օրմանեան իր բանախօսութեան մէջ վիճելի յայտարարութիւն մը կ'ընէ. ըստ անոր, 1461ին՝ Թուրք Սուլթանը հաստատելով Յայոց Պատրիարքութիւնը Կոստանդնուպոլսոյ մէջ նպաստած է ստեղծելու իւրայատուկ «ազգապետութիւն» եւ ձեւով մը ինքնուրոյնութիւն տուած է Յայ Ժողովուրդին, ինչպէս օրինակ՝ տնօրինելու ամուսնական, ժառանգական եւ զանազան ա'յլ հարցեր: Զննարկման արժանի տեսակետ է անշուշտ: Եթէ անգամ Յայ Պատրիարքարանը ինչ որ ժամանակ վայելած է Յայ Ժողովուրդի կենցաղային եւ հոգեւոր խնդիրները լուծելու ազատութիւնը եւ ունեցած ինչ որ ինքնուրոյնութիւն՝ այդ մէկը նուեր մը չէր Սուլթանէն: Բայց միայն Յայուն հանճարեղ ու ճկուն միտքն է, որ կրցած է այդ պատեհութիւնը ծառայեցնել ի նպաստ ազգին:

Օրմանեան ոգեշնչուած կը խօսեր, անոր միտքը կը թռչեր մէկ նիւթէն միւսը, մէկ պատմական երեւոյթ յաջորդը: Ան կարճ ժամանակահատուածի մէջ ջանացած է ունկնդիրներուն փոխանցել հազարամեակներու ընդարձակ պատմական գիտելիք: Ան Յայուն կը նմանցնէր «քամիէն ծեծուած ծառի տերեւներու: Ան կ'ըսէր թէպէտ «ազգութեան ծառը» տերեւաթափ է, բայց յոյս մը կայ, կան տակաւին առողջ գաղթօջախներ, ինչպէս օրինակ՝ Վրաստանի մէջ, Լեհաստանի, Յնդկաստանի, մինչեւ անգամ Աֆղանիստանի: Սփիւռքը ծառին ճիւղերն են, իսկ ազգին արմատը Յայոց հողին վրայ է՝ ի Յայաստան: Երբ ան կը խօսէր Յայաստանի մասին՝ նկատի կ'ունենար ամբողջական Պատմական Յայաստանը, ի թիւս որուն՝ Կարին, Վան, Մուշ, Խարբերդ, Երզնկա, Եւայլն:

Օրմանեան կը համոզէր, կոչ կ'ուղղէր՝ սթափելու, ըսելով որ պատմական հողերը կը հայաթափուին, քանզի Յայ մարդը օտարութեան ցուպը առած կը հեռանայ իր բնօրանէն: Ան գաղթին պատճառ կը տեսնէր իրաւական մարմիններու կողմէ գործադրուած անարդարութիւնը եւ տնտեսական ճնշումները: Ըստ անոր, գաղթը «հարստահարութեան եւ կեղեքման հետեւանք է»:

Բանախօսը նշած է թէ Բարձր Դուռը չի՛ կատարէր բարենորոգումներու խոստումը: Պէտք է ըսել, որ հրապարակախօսութեան ատեն այսպիսի դիտողութիւն ընելը չափազանց համարձակ քայլ մըն էր: Օրմանեան հմուտ դիւանագետ մըն էր, լաւ գիտեր ժողովրդական լեզուով իւղել եւ դեղել: Երբեմն դիւանագետի հնարքով՝ գովասանքով կը խօսէր Սուլթանի մասին եւ երբեմն ալ կը դառնար պահանջատեր ու դատաւոր: Օրմանեան ինքզինքը կը նմանցնէ լարախաղացի: Ինչ դիպուկ համեմատութիւն: Իրաւ պզտիկ ու աննշան խօսք կամ գործունեութիւն մը կրնար զինքը տանիլ կործանումի: Օրմանեան զարգացուցած է իր միտքը, ըսելով, Յայը այո «տերեւաթափ ծառ է, բայց ո՛չ չորացեալ ու փտած» եւ այժմ հասունցած է պահը եւ «վերընձիւղելու գարունը եւ դալար բողբոջները ամէն կողմէ կ'արձակեն»: Այս բողբոջները կերելին դպրութեան, գիտութեան յառաջդիմութեան մէջ եւ ինչպէս նաեւ կրօնի, զինուորական արուեստի, քաղաքագիտութեան, վաճառականութեան՝ տնտեսութեան զարգացման մէջ:

Ամէն բանէ առաջ բանախօսը Յայու ապագան կապած է Ազգի կրթութեան հետ: Անդադար յիշեցուցած է թէ Յայ ժողովուրդը կարիք ունի աւելի թիւով «նախնական, երկրորդական եւ բարձր վարժարանաց»: Ան բարձր գնահատած է այն ազգային կազմակերպութիւնները եւ ընկերութիւնները, որոնց ջանքերու շնորհիւ կը բացուէին վարժարաններ ու լուսաւորութիւնը կը տարածուէր երկրին մէջ: Այդպիսիք էին՝ «Արարատեան Ընկերութիւնը», «Դպրոցասիրաց Արեւելեան»ը, «Բարեսէր»ը եւ «Ընթերցասիրած»ը:

Բանախօսը մասնաւորաբար նշած է թէ նոր բացուող երկսեռ վարժարանները լաւագոյնս կը նպաստեն կրթելու մանաւանդ «յաջորդ սերնդին մայրերը»: Անգամ մը եւս ան մատը կը դնէր ճիշտ խնդրին վրայ: Օրմանեան իբր իրատես եկեղեցական եւ ազգային գործիչ, խորապէս կը հասկնար, որ

ազգին **գենֆոնթը** կը փոխանցուի ո՛չ միայն արիւնով, այլեւ Հայ մայրերու շուրթերով: Կրթել ապագայ մայրերը՝ կը նշանակէ շարունակել հերոսական անանդոյթը նոր Անահիտներով, նոր Աստղիկներով, նոր Նանեով, նոր Ծովիկներով, այո՛ւնաեւ Սանդուխտով, Խոսրովիդուխտով, Շուշանիկով: Այսպէս կրթեալ ու անանդոյթներով մեծցած բիւրաւոր փափկասուն տիկնայք կը ծնին առիւծ գաւակներ:

Օրմանեան ցաւալի կը նկատէր որ «բարձր ուսմանց դռները փակ են աղքատաց եւ կարօտելոց համար: Եւ խնդիրը լուծելու երկու հիմնական միջոց առանձնացուցած է. - Կոստանդնուպոլսոյ Պատրիարքարանի միջոցները եւ մեծահարուստներու օգնութիւնը»: Ան, իր բանախօսութեան մէջ արծարծած է նաեւ շարք մը քաղաքական խնդիրներ, որ ինչպէս ըսած ենք, յանդուգն քայլ էր: Բանախօսը ներկայացուցած է իր տեսանկիւնը եւ խօսելով հզօր պետութիւններու մասին ըսած է «իրենց ձեռքն վերցուցած են Թուրքիոյ ապագան, իսկ Հայու ցաւին ցաւակից չկայ»: Այսօր ալ հզօրները կ'որոշեն խաղի կանոնները: Օրմանեան կը յուսար, որ Հայոց Պատրիարքարանը կրնայ ոեւէ ձեւով ազդել ստեղծուած կացութեան վրայ. «Գրել, աղաչել եւ պահանջել ... Հայոց ապագան երաշխաւորել»: Անշուշտ Օրմանեան չէ բաւարարուած խնդրագիրներով ու պահանջագիրներով, ան գործնական անձ մըն էր եւ առաջ կը բերէր գործնական ծրագրեր: Բանախօսը կոչ կ'ըներ պանդուխտ Հայերուն վերադառնալ Հայրենիք եւ շենցնել իր բնօրանը՝ երկիրը: Առանց Հայ մարդուն հողը պարապ է, եւ Հայրենիքի գաղափարը վերացական: Ան կ'ըսէր իր ունկնդիրներուն՝ «գործ կայ, գործող չկայ», հարկաւոր են երկրագործներ, վաճառականներ, արհեստաւորներ: Պանդուխտին վերադարձը երկրաշինութեան սկիզբն է:

Օրմանեանի մէջ կը խօսէր հեռատես հասարակական ու քաղաքական գործիչը, որ կը փափաքէր եւ կը պահանջէր որ բոլորը «կեդրոնական որոշեալ սահմանի մէջ» իրենց հողին վրայ: Ան կը խորհէր թէ գուցէ տակաւին այս իրականալի խնդիր չէ, բայց կարելոր: Իսկ ինչո՞ւ առայժմ անհնար, որովհետեւ «Հայը բաժանեալ է քաղաքականապէս»: Եւ այս բաժանեալ ըլլալը ներքին խնդիր է, կը պահանջուի լուծում հենց Հայու ձեռքով:

Այդ օրերուն, Յայու միութեան հոգեւոր առանցքի վերագտնում դարձած էր արդիական պահանջ: Միայն Յայը կրնայ գտնել այդ առանցքը: Նման դիրքորոշում ուներ եւ Օրմանեանի բարեկամ Սրուանձտեանը, որ կը գրէր. - «Յայաստանի մէջ է բուն Յայկական խնդիրը, իսկ մենք Պեռլիսի մէջ կ'որոնենք զայն» (Գ. Սրուանձտեան, Թորոս Աղբար, Յայաստանի ճամբորդ, Կ. Պոլիս, 1879, հ. 1, էջ 270):

Օրմանեանը իր խօսքի աւարտին կը շեշտէ որ Կ. Պոլիսը չէ հայութեան ապագան, այլ գաւառները: Այսօր ալ թեպէտ տարբեր հարթակի վրայ, բայց այս պնդումը միանգամայն իրաւացի է: Ան կը հրաւիրէ իր ունկնդիրները՝ առնելու առաջին քայլը, ըլլալ գործնական եւ ճկուն:

Օրմանեան կը հասկցներ թէ ինք պատրաստի լուծումներ չունի, բայց ունկնդիրը ինքը եւս պետք է խորհի: Ան տուած է կայծը ունկնդիրներուն մէջ վառելու ազգասիրութեան կրակը: Ան կը մղէր լսարանը որոնելու նոր միջոցներ՝ ի շահ ազգի յառաջդիմութեան եւ բարգաւաճման:

Օրմանեան մտածելու եւ գործելու ահագին նիւթով տուն դրկած է ունկնդիրները: Ոգեւորելով զանոնք, որ պատմութեան վայրիվերումներուն դիմակայող ազգը չի՛ կրնար ապագայ չունենալ: «Ապագայն ձերն է», նաեւ ապագայի «պատասխանատուութիւնը»:

Աւելի հակիրճ անդրադառնանք Օրմանեանի միւս բանախօսութիւններուն:

Ան իր յաջորդ հրաւերը ստացած է 1879ի Մայիս 26ին, այս անգամ Սկիւտարի Կրթասիրաց Ընկերութենէն: Նիւթը ընտրուած էր՝ «Յայութեան հոգին»:

Բանախօսին մօտեցումը այս անգամ փոքր ինչ տարբեր եղած է: Ան ո՛չ պատմական, ո՛չ իմաստասիրական վերլուծութիւններով կը տարուի, այլ ուղղակի կը մատնանշէ Յայուն ցաւոտ կետերը, օրուան հրամայականները:

Օրմանեան ունկնդիրներուն կը ներկայացնէ Յայ մարդը եւ Յայ ազգը իր ամբողջութեան մէջ՝ իր հերոսներով եւ իր վատով:

Ըստ բանախօսին, երբ 1375 թուականին Յայը կորսնցուց իր վերջին պետական համակարգը՝ Կիլիկիոյ Թագաւորութիւնը, որմէ ետք ազգը առաջնորդուած է Յայ հոգու բնական մղումներով: Եւ ահաւասիկ, Յայը նուաճած է Ազգային Սահմանադրութիւնը, որ հենց «հոգիին պահանջ»ն էր: Յինգ

հարիւր տարի պետականութիւն կորսնցուցած ազգը, չունէր ո՛րեւէ լծակ կամ կառոյց՝ փոխանցելու ազգային իշխանութիւն ստեղծելու գաղափարը յաջորդ սերունդին, բայց միայն իր հոգու գօրութեամբ: «Յայութեան հոգին ունի աննկուն յարատեւութիւն...», ունի այն միաբանութիւնը, որով ազգային անհատներ իրարու միանալով կրնան ընդհանուր բարին եւ ընդհանրութեան աւանդ եղող բարիքը պահպանել, պաշտպանել, յառաջացնել եւ կատարելագործել»: Ամէն մէկ անհատ իր մէջ կը կրէ ընդհանուրի «Յայութեան հոգին»:

Բանախօսը Յայութեան հոգու ամենամեծ արտայայտութիւնը համարած է Ազգասիրութիւնը՝ որու դրսեւորումներէն մին է ազգային մարտիրոսութիւնը: Ասիկա արդէն իսկ իր խորքին մէջ Զրիստոնէական ըմբռնում մըն է: Զրիստոնէութիւնը արդէն կը հասկնայ սերը իբր գոհաբերութիւն:

Օրմանեան իր խօսքի ընթացքին թուարկած է շարք մը անցեալի եւ իր ժամանակներու ազատագրական պայքարի փաստեր, բոլորն ալ նկատելով որպէս Յայութեան «ազգային հոգու» դրսեւորումը: Բանախօսը կ'ուզէ դարմանել ազգին ցաւը, ո՛չ բողոքել եւ ո՛չ քննադատել, այլ միայն օգնել: Ան իբրեւ հոգեւորական, իր ողն ու ծուծով Զրիստոսի բարի սերմնացանն է, որ կը ջանայ նոր, գիտակից մշակներ հասցնել, որ գործեն Ազգի արտին մէջ: Օրմանեան կ'ըսէր, որ լաւ սերմը տակաւին բաւարար չէ, պէտք է լաւ, առողջ պահպանել սերմը եւ մշակել հողը: Եթէ հողը պատրաստ չէ, եթէ ան լաւ չէ. «ամէնէն ընտիր հունտ վտիտ եւ տկար, որդնոց եւ փտած պտուղներ կու տայ», կը խորհէր Օրմանեան:

Բանախօսը վստահօրէն կ'ըսէր թէ իր հողէն բաժնուած Յայը կրնայ ընդունիլ օտարին վատ յատկանիշները, որ յաճախ Յայուն վրայ «կը պատուաստուի»:

Ասոր դարմանը ազգային դաստիարակութիւնն է եւ ազգային կրթութիւնը: Օրմանեան բազմաթիւ անգամներ յիշեցուցած է թէ Յայութեան Յոգին գօրացնողը եւ սնողը, ազգային դաստիարակութիւնն է: Բանախօսը Ազգը կործանումէ փրկելու համար՝ կոչ կ'ըներ արիութեան եւ միաբանութեան: Արիութիւնը կը դաստիարակուի եւ կը ներարկուի Յայ նոր սերունդի մէջ: Միաբանութիւն ըսելով Օրմանեան չէր ըսէր, որ Ազգը նոյն դաւանաբանութիւն ու կրօնը ունենայ կամ մէկ քաղաքական միտք, այլ կը կոչէր այլազանութեան միութիւն:

Իր խօսքի վերջաւորութեան, օրինակով մը կը դիմէ լսա-
րանին՝ ըսելով, նայեցէ՛ք այլազգիներ, օտար լեզուներով
խօսողներ ինչպէ՞ս իրարու կը դիմեն, «Տեր» ըսելով կը դի-
մեն, «սաիդնի», «գասպադին», եւայլն: Իսկ Յայ ռամիկը,
շինականը, կ'ըսէ, «ախպար»՝ եղբայր: Ուստի եղբայրաբար
գործենք: Ան կը յղէ Մկրտիչ Պեշիկթաշլեանին.- «Ընդ աստե-
ղօք ի՞նչ կայ սիրուն, քան ցանկալի եղբայր անուն»:

1879, Յոկտեմբեր 28ին, Օրմանեան կը դառնայ Յայ
Առաքելական Եկեղեցւոյ գիրկը: Իրեն համար այս վերա-
ծունդ մըն էր՝ ան որքան սպասած էր այդ պահուն: Օր-
մանեանի հետ առաքելադաւան դարձան նաեւ 75 հոգի,
որոնք իրադարձութիւնը դարձուց տօնահանդէս, տեսակ մը
«ժողովրդական ցոյց»: Մեծ ազգային գործիչը եւ հոգեւոր
հայրը, ինչպէս հաւը իր ճուտիկներուն՝ հաւաքեց 75 կաթո-
ղիկէ Յայեր ու դարձուց բոյնը:

Յ. Սիրունին, այդ առթիւ գրած է.- «Յայ Եկեղեցին միակ
շաղախն էր դեռ այն օրերուն՝ Յայ անանդոյթներով թրծելու
համար Յայ ժողովրդի ցանուցրիւ զաւակները»: (Սիրունի Յ.,
Օրմանեան եւ իր ժամանակը, Էջմիածին, 1961, թիւ 5, էջ 42):

Կ. Պոլսոյ Պատրիարք Ներսէս Վարժապետեան Օրմա-
նեանին կը շնորհէ Մայր Եկեղեցւոյ Ծայրագոյն Վարդապե-
տութեան աստիճան: Շուտով անոր կը հասներ եւ Վեհա-
փառ Յայրապետի՝ Գեորգ Դ.ի Օրհնութեան Գիրը: Օրմա-
նեանին ողիսական ճամբորդութիւնը, սակայն չվերջացաւ
հոս, բայց միայն կը սկսէր: Մօտ մէկ ամիս ետք, Նոյեմբեր
17ին, 1879 Սկիւտարի Կրթասիրաց Ընկերութեան լսարանին
մէջ կարդացած է «Միութիւն Յայութեան» դասախօսութիւնը:

Օրմանեանին միտքը անսանձ ձիու նման կը վազէր.-
«Յայութեան վրայ խօսիլ որոշեցի, այն Յայութեան վրայ,
որուն ի ներկայիս կ'աշխատիմ նոր կացութիւն մը տալ յան-
դիման աշխարհի»: Սոյն խօսքը կը հնչէր զօրաւոր ու համո-
զիչ: Յայուն պէտք է «միութիւն»: Ան կը խորհէր, որ այդ գա-
ղափարը ցայսօր անիրականալի մնացած է, որովհետեւ չէ
հասկցուած: Յայուն անհրաժեշտ է «Իմացական միութիւն,
սրտի միութիւն, ըղձից միութիւն, բաղձանաց միութիւն»:
Ասոնց համագումարը կը բերէ պահանջուած արդիւնքը:

Բանախօսը պատմութենէն օրինակներ քաղելով, ցա-
ւով նշած է, որ Յայը երկար ատեն բաժնուած է Եկեղեցիով,
ազգով, տեղով, պատմութեամբ, լեզուով եւ իշխանութեամբ:

«Հայութեան միութիւնը, որ նախնաբար բաժանմունք կը վնասուի, այսօր արդեամբ այդ չարիքը կը կրէ. Վասնզի բաժանեալ ենք Հայքս եկեղեցեալ, բաժանեալ ենք ազգալ, բաժանեալ ենք տեղեալ, բաժանեալ ենք պատմութեամբ, բաժանեալ ենք լեզուալ, բաժանեալ ենք իշխանութեամբ, թող գայլ եւս բաժանումս՝ գորս յիշել տաղտկալի է, իսկ դիզաբանել լքուցիչ եւս կը լինի»: Օրմանեան առանձին առանձին բացատրած է վերոյիշեալ բաժանումներուն պատճառները եւ հրաւիրած է լսարանը գտնել ինդրին լուծումը: Բանախօսը արժեւորած է հաւատքի՝ կրօնի ազատութիւնը: Մարդը ազատ է ընտրելու իր պաշտամունքի առարկան, ձեւը, միջոցը: Թե՛ Կաթոլիկութեան եւ թե՛ Առաքելական Հաւատքի կեդրոնը պէտք է ըլլայ Զրիստոս Յիսուս «Յանուն Զրիստոսի» ո՛չ թէ բաժնուիլ, այլ «Զրիստոսը պատուել ազգի միութեամբ»:

Ըստ բանախօսի, Ազգին մասնատուածութեան գործօններէն մին եղած է եւ ցայսօր տեւած՝ գաղթը: Հեռանալով իր բնօրրանը, Հայը գացած է օտարութեան, այնտեղ ստեղծած գաղթօճախ՝ «Պզտիկ Հայաստան»: Պէտք է ըսել, որ ամէն գաղթ չէ որ կայացած գաղութ դարձած է եւ կրցած ստեղծելու «Պզտիկ Հայաստան»: Շատեր ձուլուած են, իսկ որոշ համայնքներ տարիներու ընթացքին սպառած են եւ կորսուած: Աւելին, գաղթօճախը ինքը կը գաղթէ, երկրէ երկիր ու քաղաքէ քաղաք:

Օրմանեան յիշեցուցած է իր լսարանին, որ Ազգ պառակտող ոյժեր եղած են եւ ներսէն եւ դուրսէն: Ազգը ունեցած է Մերութաններ, Վասակներ, Վեստ Սարգիսներ: Շատ անգամ հիւրընկալ երկիրը դարձած է արգելակող ոյժ Հայու միութեան համար: Այսուհանդերձ, կարելի է ու պէտք է ստեղծել ազգային միութիւն, կ'ըսէր բանախօսը: Պէտք ունինք իմաստուն, նուիրեալ եւ ազգասէր անձերու: Ազգի միութեան առջեւ ծառայած ինդրները միանշանակ լուծումներ չունին, իսկ ոմանք անլուծելի կը մնան: Հայը բաժնուած է՝ եկեղեցիով, ազգով, տեղով, պետութեամբ:

Ռուսաստան եւ Օսմանեան Կայսրութիւն տարբեր երկիրներ են, եւ հայեր հպատակ են տարբեր պետութիւններու: Ուստի, այս ինդրները գործնականօրէն անլուծելի են: Այսպէս կը խորհէր Օրմանեան: Բնական է, որ ամէն պետութիւն ունի իր սահմանադրութիւնը, օրէնքները, ուրոյն կա-

ռավարման համակարգ եւ ոչինչ կրկանք փոխել: Միութիւն, այս պայմաններու տակ անկարելի է, ուրեմն եկեք նայինք ա՛յլ ուղղութեամբ, կ'ըսեր բանախօսը. «Վերանորոգել Հայ Ազգի եկեղեցական միութիւնը...գօրացնել Հայութեան միութիւնը՝ ըստ Աստուծոյ կամքին»:

Օրմանեան միշտ կարելորած է եկեղեցւոյ դերը Հայ ազգային եւ հոգեւոր կեանքը կարգաւորելու գործընթացին մէջ: Ան մասնաւորապէս գնահատած է եւ շեշած Հայոց Պատրիարքարանին առանցքային եւ չափազանց կարելոր դերը: Ան յստակելու համար իր միտքը, գրած է.- «Սխալ է Հայութեան միութիւնը հոգեւորական պարագաներու կապել, եւ ազգայնութիւնը, կրօնականութեան հետ շփոթել, եւ ազգային իշխանութիւնը եկեղեցական իրաւասութեան հետ խառնել: Երբեք Հայութիւնը մի չի՛ կրնար ըլլալ, եթէ կրօնական եւ իրաւական բաժանմանց ականջ կը կախէ, մենք Հայութիւնը մի ազգ կ'ուզենք եւ ո՛չ մի եկեղեցի՛»:

Ըստ Օրմանեանին, Հայ Եկեղեցին որպէս կառոյց՝ ճկուն է եւ դիմացկուն, այդ պատճառով ալ կրցած է ներթափանցել ու գոյատեւել տարբեր պետութիւններու մէջ: Հայ Եկեղեցին եղած է Հայ ուղեցոյցը եւ փարոսը: Օրմանեան իրատես հոգեւորական էր եւ բանիմաց հասարակական գործիչ, որու խօսքը եւ նկատողութիւնները միշտ ալ դիպուկ ու տեղին էին: Բանախօսը ողբ չէր հնչեցներ, բայց կը փչեր շեփորը արթնութեան: Ան կ'առաջարկէր մտածել, գտնել լուծումներ եւ ըստ այնմ շարժիլ: Ան երբեմն խօսքով կը ցաւցներ իր ունկնդիրները, բայց միայն արթնցնելու համար անոնց ազգային գիտակցութիւնը: Օրմանեան ըսած է, որ մեզմէ անելի հետամնաց ազգեր, «Մեզմէ անելի յառաջ գացին», իսկ մենք «մաքառել ենք իրարու դէմ, աշխատել իրար կործանել»:

Օրմանեան այս բանախօսութեան մէջ ալ կարելորութիւն տուած է կրթութեան, նորէն ընդգծած է անհրաժեշտութիւնը գաւառներու մէջ վարժարաններ բանալու: Ան վստահ էր, որ Հայ Վարժարանը, Հայ գիրն ու գրականութիւնը հայապահպանման գօրաւոր ամրոց են: Վարժարանը միակ միջոցն է ուժացած Հայը վերադարձնելու իր ժողովուրդին: Բանախօսը հետեւեալ հետաքրքրական միտքը կ'արտայայտէ ըսելով թէ Թուրքերը կամ Զուրդերը գիտենք օտարազգի են, բայց. «Կրթութիւնը եւ բնակութիւնը եւ յա-

ռաջդիմութիւնը կրնան շնորհել վերստին իրենց սկզբնական ազգութեան»: Ան նկատի ունեցած է քրդացած ու թրքացած Յայերը: Կը խորհէր թէ ասոնք, ծանօթանալով իրենց լեզուին եւ մշակոյթին, կ'արթնան ու կը դառնան տուն»:

Համոզիչ ու զուսպ էին Օրմանեանին խօսքերը, եւ սակայն կրակոտ եւ իրապաշտ.- «Հայութեան միութիւնը գործունեայ ընելու համար միշտ բաղադրեալ, դաշնակցական, սահմանադրական ձեւ մը ընդունելու պարտաւոր եմք: Երբ բաժանմունք, որք կան առանց մեր կամաց, մեր կամօք իրարու յօդակապին իբր միոյ միութեան յարաբերական անդամք եւ դաշնակցեալ մասունք, կրնայ խնդալ ամեն հայ, ունենալով գոնէ այն միութիւնը, այն իրական միութիւնը, առանց որոյ բոլոր Յայ արեան սերունդը չի կրնար միաբանօրէն իւր ընդհանուր նպատակին դիմել»:

Օրմանեան դիւրին յուսալքուող անձ մը չէ եղած. «Հայութեան մոխիրներէն կը վերածնի Հայութեան միութիւնը իւր երջանիկ փիւնիկահաւը որ ոչնչանալէն ետք՝ դարձեալ կը կենդանանայ իւր իսկ մոխիրներէն առանց արտաքին գործողի», կը յայտարարէ ան:

1879, Դեկտեմբեր 23ին, Գատըգիւղի Արամեան Վարժարանի լսարանին մէջ, Օրմանեան բանախօսած է «Հայ Ազգութիւն» սիրին շուրջ:

Բանախօսը իր առջեւ յստակ նպարակ մը դրած էր.- լսարանին փոխանցել կուռ, ամփոփ պատմական գիտելիք, արթնցնելով անոր մէջ հետաքրքրասիրութիւնը ծանօթանալու իր Ազգին եւ Մշակոյթին: Ան յայտարարած է, որ Յայը «Ազգութեան ամեն ձիրքերը կը պարունակէ», այսինքն յատկանիշները՝ թուաքանակը, լեզուն, կեդրոնը, ինչպէս եւ «կազմակերպութիւնը, յօդակապութիւնը եւ նպատակ մը»: Ըսել է, շեշտած է ան թէ ունինք «ազգային գոյութեան ամեն ձիրքերը», բացի պետականութենէ: Բանախօսը միխթարութեան հանգամանք համարած է Կ. Պոլսոյ Ազգային Պատրիարքարանին գոյութիւնը, որ կը մարմնաւորէր Ազգի քաղաքական դիրքը: Ըստ Օրմանեանին, Յայոց Պատրիարքը թէ՛ հոգեւոր առաջնորդ է ազգին եւ թէ՛ նոյն ատեն ազգապետ, այսպէս ըսած՝ **միլլէթ բաշի**: Այդ կը նշանակէ, որ Պատրիարքը իր շուրջ հաւաքած է Ազգային ժողովի բաղադրիչները՝ կրօնական եւ քաղաքական կառոցները: Բանախօսը կարելորած է այն պարագան, որ Օսմանեան Հայութիւնը ունի միաւո-

րող սկզբունք՝ Ազգային Սահմանադրությունը: Օրմանեան հռետորական հարցում ըրած է՝ իսկ ի՞նչ ընէ Սփիւռքը, Արեւելահայութիւնը, ո՞րն է այս պարագային միութեան կեդրոնը. «Լուսաւորչահիմն Կաթողիկոսական Աթոռն է Ամենայն Յայոց» միացնողը ու կապողը հոս, ան որ, «Յայ Եկեղեցին ազգութեան կը փոխարկէ», կը պատասխանէ: Օրմանեան ընդգծած է Էջմիածնի Յայրապետական Աթոռի գերակայութիւնը մնացած Յայ կրօնական կեդրոններու նկատմամբ:

Օրմանեան ուզած է որ իր ունկնդիրները հասկնան կարեւորութիւնը Ազգային Մշակոյթի ու Կրօնի: Անոր ջանքն էր մեծին ու պզտիկին ծանօթացնելու ազգային պատմութիւնը, երգը, երաժշտութիւնը եւ գրականութիւնը: Բանախօսը կը համարէր, որ անհրաժեշտ են նոր ստեղծագործութիւններ, նոր տպագրութիւններ, ավելի թանգարաններ եւ ուսումնական կեդրոններ:

Այս բոլորին հետ պետք է Յայաստանը Յայաբնակ դարձնել, ավելցնել Ազգին թուաքանակը: Յարկ է ստեղծուին ու բազմանան Յայ ընտանիքներ, իրենց հարագատ հողի վրայ: Օրմանեան ուղղակիօրէն անցած է գործնական առաջարկութիւններու. օրինակ, ան թելադրած է, որ մեծահարուստ Յայեր՝ հողատեր դառնան Յայաստանի մէջ, ո՛չ թէ Կ. Պոլիս, Չմիւռնիա, կամ Եգիպտոս, այլ իրենց պատմական տարածքներուն մէջ: Ան շարունակած է, ըսելով, որ Յայկական հողերու վրայ պետք է կառավարեն ազգութեամբ Յայ Նահանգապետեր եւ Գաւառապետեր:

Բանախօսը նորէն ու նորէն կը շեշտէր, որ առանց Յայու միութեան ոչինչ կարելի է իրագործել: Ըստ Օրմանեանի «Յայ ազգութեան ներկայ գաղտնիքը եւ ապագային խորհուրդը» պայմանաւորուած է երեք պայմաններով.

Ա.- Գործող անձը,

Բ.- Դրամը,

Գ.- Ժամանակը:

Ամէն Յայ անհատ գործող անձ մը ըլլալու է: Նիւթական կողմէ խեղճացած ենք, որովհետեւ նուիրեալները քիչ են եւ «ազգային պիտոյից չեն բաւեր», իսկ «ատենը նեղ է եւ հակիրճ»:

1880 թուականին, Օրմանեան ունեցած է եւս երկու բանախօսութիւններ, որոնցմէ առաջին էր «Կարօտ ենք», որ խօսած է Փետրուար 10ին Օրթաքէոյ՝ Օրթագիւղի «Ընթեր-

ցասիրած Ընկերութեան» լսարանին մէջ: 1877-78 ռուս-թրքական պատերազմէն ետք, ամբողջ Արեւմտահայաստանը ինկած էր սովի ու աղքատութեան մէջ: Բանախօսը վկայակոչելով իրադարձութիւնները եւ անոր հետեւանքով առաջ եկած կարօտեալները՝ կ'ըսէր. - «Նուաղեալ կը տառապին ի Վան, ի Պայագետ, ի Պաշգալէ, յԱլաշկերտ ... Եւ այդ քաղաքներուն շուրջը գտնուող վայրերու մէջ»: Օրմանեան հռետորական ոճով կը հարցնէր, թէ ո՞վ տուած է կարօտեալին իր «հացին կէսը, գոնէ քառորդը, գոնէ հարիւրերորդը»: Ապա համեմատական մը կատարած է Յայերու եւ Յոյներու միջեւ, տեսնելու թէ ինչպէ՞ս այս երկու համայնքները կ'իրագործեն հանգանակութեան ծրագիրները, եւ նշած է թէ Յոյներու հաւաքած գումարը կը հասնի «հարիւրաւոր եւ հազարաւոր ոսկիներու», իսկ Յայերունը՝ «տասնաւորներու սահմանի մէջ շրջին»:

Օրմանեան յռեցտես մը չէր, բայց անապատի մէջ կանչող ձայն մըն էր, որ կը յուսար արթնցնել Յայուն խիղճը: «Ի միսիթարութիւն եւ ի վայելիս Յայութեան», անհրաժեշտ է բազմապատկել Յայ համեստ բարերարներուն քանակը, եզրակացուցած է բանախօսը: Ան միանգամայն համոզուած էր, որ Յայը աւելի առաւելութիւններ ունի քան օտարը: Որպէս օրինակ ան ըսած է, եթէ օտար ազգերու մէջ 500 ոսկի կը հաւաքուի հինգ հոգիէ, ապա Յայերը նոյն գումարը կը հաւաքեն 500 հոգիով, ամէն մէկը՝ մէկ ոսկի չափով մասնակցութեամբ: Օրմանեան ուզած է ըսել թէ շատ աւելի սիրտով ու հոգիով մասնակից կրնան ունենալ քան օտարները: Բանախօսը համոզուած է, որ օր մը սովածներուն աղաղակները կը դադրին, հանգանակութիւնները կը շատնան եւ խեղճ աշխատաւորին հարստահարումը կը վերջանայ եւ Յայը կրնայ բարձրաձայնել. «Եղբայրք, այլեւս կարօտ չենք»:

Օրմանեան անգամ մը եւս բանախօսած է 1880 Փետրուար 24ին, Կ. Պոլսոյ Սամաթիա թաղամասի Ս. Սահակեան Սաներու Ընկերութեան լսարանին մէջ: Ընտրուած նիւթն էր «Յայ երիտասարդութիւն (Օրմանեան Մ. Յայ երիտասարդութիւն, Կ. Պոլիս, 1880):

Բանախօսը իր խօսքին մէջ տեղ մը Յայու մասին խօսելով ըսած է թէ շատեր կը համարեն «ժողովուրդ հզօր եւ ազգ կատարեալ էր... Ետքը տկարացաւ եւ զօրութենէ ինկաւ, որով հնութեան ու ծերութեան վիճակին մէջ մտաւ»:

Օրմանեան այս կարծիքին համամիտ չէր, բայց կ'ըսէր թէ ո՛չ միայն հինգած ու մեռնող ազգ մը չենք, այլ ունինք եւ կը հասունցնենք ընտիր երիտասարդութիւն: Ան արձանագրած է, որ Օսմանեան Կայսրութեան մէջ Յայ Ազգային Սահմանադրութեան հաստատման մասնակցած են բոլոր տարիքային խումբեր՝ հին եւ նոր երիտասարդութիւնը: Որ արդէն իսկ ցոյց կու տայ երիտասարդութեան քաղաքական մտքին հասունութիւնը:

Բանախօսը երիտասարդութեան համարած է մարդկային հասարակութեան ռահվիրայ: Երիտասարդութիւնը յառաջ պիտի ընթանայ, չվիատի ձախորդութենէ ու դժուարութենէ, որովհետեւ ասոնք. «յաջողութեան բարձրունքը հասնելու սանդուխ կ'ըլլան»:

Այստեղ եւս բանախօսը առիթը չէ կորսնցուցած յիշեցնելու ազգային դպրոցներ հիմնելու անհրաժեշտութեան մասին, մասնաւորաբար գաւառներու մէջ: Օրմանեանի բաղձանքն էր որ Յայը. «ճանչնայ ինքզինքը, իր ազգը եւ մտածէ անոր ապագայի վրայ»:

Այսօր, դժուար է ըսել, թէ որքա՞նը իր ունկնդիրներուն մէջ երիտասարդ էին, ամէն պարագայի, բանախօսը կ'ուզէր իր ձայնը անոնց հասցնել: Ան կը խրատէր երիտասարդութիւնը ըլլալ խոհեմ, մանաւանդ ընտանիք կազմելու խնդրին մէջ: Կ'ուսուցանէր անոնց ու կը թելադրէր պահել քրիստոնէական աւանդութիւնները: Օրմանեան երիտասարդութիւնը կը խրատէր, չմոռնալ որ քրիստոնէական Յաւատքը ազգային բարիք մըն է: Ան երիտասարդներուն յիշեցուցած է որ «իր առաջին պաշտպանը Յայ կրօնքը եղաւ եւ առաջին օթեւանը՝ Յայ Եկեղեցին, առաջին գինուորը՝ Յայ կրօնականը»: Ահաւասիկ վկայ՝ Սբ. Գրիգոր, Սբ. Ներսէս, Սբ. Սահակ, Սբ. Մեսրոպ, Սբ. Եղիշէ, Սբ. Ղեւոնդ եւ ուրիշներ, բիւրաւոր սուրբեր Կրօնքի եւ Մշակոյթի:

Օրմանեան խանդավառ էր լեցուն յոյսով, աւարտելէն յետոյ իր խօսքը գոչած է. «Կեցցե՛ Յայ երիտասարդութիւնը»:

Այսպէս, վերջ կը գտնեն Օրմանեանի բանախօսութիւններուն շարքը:

1880, Ապրիլ 2ին Օրմանեան կ'ընտրուի Էրզրումի (Կարին), Յոգեւոր Առաջնորդ եւ հոն կը տեղափոխուի:

Ժամանակին հովերը բարենպաստ չէին Յայ ազգային նաւը հանդարտ ու ապահով հանգրուան հասցնելու համար:

Թեև Օրմանեան Սրբազան դիւրին յուսահատող անձ մը չէր, բայց չափազանց մտահոգ էր անցուդարձով: Ան աննկուն կը շարունակէ իր ծառայութիւնը Ազգին եւ Աստուծոյ:

Պեռլիսի Վեհաժողովի 61րդ յօդուածը ի դերել հանեցին Յայերու ազատուն յոյսը կապուած Սան Սթեֆանոյի պայմանագրին: Իբրեւ դիւանագիտութեան վիժման հիասթափութեան հետեւանք՝ Յայը անգամ մը եւս դարձաւ իր յոյսը իր վրայ դնել: Տարբեր տեղեր ստեղծուեցան ազգային-ազատագրական գաղտնի խմբակներ եւ անոնց կարգին՝ սկսաւ Կարինի մէջ գործել «Պաշտպան Յայրենեացը»: 1882, Նոյեմբերին, Օսմանեան ոստիկանութիւնը կը ձեռքակալէր 72 հոգի: Օրմանեան եւս Պոլիս կը կանչուի եւ կը հարցաքննուի «իբրեւ Կարնոյ Առաջնորդ յեղափոխական գործունեութիւն մը ունենալու մեղադրանքով»: Անուրանալի է, որ Կարինի մէջ առաջին ցնցումը իր օրովը եղաւ եւ այդ շարժման գլուխ ինքը գտնուեցաւ: Այդ պատճառով Օրմանեան Սրբազան Պոլիս բերուեցաւ եւ հարցաքննութեան ենթարկուելէ յետոյ՝ հազիւ կրցաւ օձիքը ազատել (տե՛ս Էջմիածին, 1961, թիւ 5, էջ 20): Բնական է քրիստոսի գինուորագրուած Օրմանեան չէր խորհեր իր օձիքը ազատել, բայց ազատել դատապարտուած հայորդիները եւ իր դիւանագիտութեան հաշւոյն կրցաւ շատերը ազատել եւ ուրիշներուն պատիժը մեղմացնել:

Բարի մշակը կը ստանայ իր արժանի վարձքը: 1886, Յունիսի 8ին, Գարեգին Սրուանձտեանցի հետ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի մէջ Մակար Կաթողիկոս Թեղուտցիի ձեռքով կ'օծուի Եպիսկոպոս: Դեպի Կարին վերադարձին, Առաջնորդի իր պաշտօնը շարունակելու, Կ. Պոլսոյ Պատրիարքարանի յանձնարարութեամբ՝ կը մեկնի Վան, ուր հոգեւոր-ազգային կեանքը խաթարող անիմաստ վիճաբանութիւններու ալիք մըն էր բարձրացած: Օրմանեան քննելով իրավիճակը Պատրիարքարանին կը հաղորդէ իրական կացութիւնը, որուն արդիւնքով՝ տեղւոյն Առաջնորդ Պօղոս Մելիքեան կ'ազատի իր պաշտօնէն եւ կ'աքսորուի Լիմ անապատ-Վանքը: Այսպէս վերջ կը դրուին Պօղոսեան Ապօղոսեան վեճերուն:

Նոյն շրջանին, Օրմանեան անգամ մը եւս հանդէս կու գայ վեճ հարթելու իր դիւանագիտական իմաստութեամբ այս անգամ մեկնելով Աղթամար՝ տեղւոյն «Կաթողիկոս» Խա-

չատուրի եւ միաբանութեան միջեւ եղած հարցերը քննելու եւ հաշտեցնելու նպատակով: Ի վերջոյ կը հասնի Կարին, բայց հազիւ սկսած աշխատանքի, Ամենայն Յայոց Մակար Կաթողիկոս, 1887ին զինքը կը կանչէ Յոգեւոր Ճեմարանին մէջ դասաւանդելու: Յետաքրքրական է օրուան Կաթողիկոսի «ստրատեջիկ» մտածողութիւնը, անհովիւ ձգել ամբողջ Թեմը, որպէսզի ժամանակ մը ետք ունենայ բազում կարող հովիւներ:

Օրմանեան կարող ուսուցիչ մըն էր, հմուտ աստուածաբան եւ ամէն բան կ'ընթանար հրաշալի, եթէ չխոչընդոտէին ցարական պաշտօնեաները: Յակառակ Կաթողիկոսի ընդիմութեան, Տարական արքունիքը կը հասնի իր նպատակին վտարելու Օրմանեանը Էջմիածինէն: Օրմանեան ուսուցիչ էր, աստուածաբան, հրապարակախօս, քարոզիչ, ան պիտի շարունակէր իր կոչումը, ո'չ ցարը, ո'չ սուլթանը կրնային խոչընդոտել:

Յիմուեցաւ Արմաշի Դպրեվանքը եւ 1889ին Օրմանեան արդէն գործի լծուած էր: Շուտով իրեն միացաւ Եղիշէ Վրդ. Դուրեան, Արմաշը կարճ ժամանակի մը մէջ հասցնելով կրթուած ու պատրաստուած հոգեւորական սերունդ մը: Սակայն, Օրմանեանին չէր վիճակուած երկար վայելելու իր սիրած գործը՝ ուսուցանելը:

1896, Նոյեմբեր 6ին Մաղաքիա Եպս. Օրմանեան ընտրուեցաւ Պոլսոյ Պատրիարք: Դիւրին պատմական կացութիւն մը չէր այդ օրերուն: Ամէն պարագային, Օրմանեան կը փորձէր յառաջացնել Պատրիարքական գործունեութիւնը: Յոսիոն կը ծագէին ազգային ազատագրական շարժումներ, Սասուն, Վան, Վասպուրական, Չէյթուն: 1896 ՅՅԴ իրականացուց Բանկ Օթօմանի գրաւումը եւ անոր յաջորդեցին կոտորածներ եւ անհանգստութիւն: Օրմանեան հմտօրէն ու անխոնջ կը վարէր եկեղեցական եւ ազգային կեանքը, հեռացնելով ամէն անգամ վտանգը, անձամբ բանակցելով թե՛ Սուլթան Աբդուլ Յամիդի եւ թե՛ Բարձր Դրան հետ: Օրմանեան ամէն ջանք կը գործադրէր՝ որպէսզի զանգուածային կոտորածներ տեղի չունենային այլեւս, ո'չ ալ հակահայ հալածանքներ: Ասիկա կը խլէր իրմէ հսկայական ժամանակ եւ հոգեկան կորով: Օրմանեան Յայութեան բողոքի ձայն է եղած ու պահանջատերը: Զանի մը անգամ ցուցադրելու համար իր անդրժեւիութիւնը՝ Սուլթանին ներկայացուցած

Է իր հրաժարականը եւ բողոքի ցոյց՝ հնարած է եւ «լարախաղացի հնարքներ», որ ստիպուած էր յաճախ աճապարարութեան դիմել» (Սիրունի Յ. Օրմանեան եւ իր ժամանակը, Էջմիածին 1961, թիւ Է, էջ 47):

«Լարախաղացը» սակայն երբեմն կը սայթաքեր, կ'իյնար, նոյնիսկ իւրայիններու ձեռքով: 1903ին Օրմանեանին դէմ մահափորձ կը կատարուի, ՅՅԴ պաշտօնական պատասխանատուութիւն չի' ստանձներ: Ինք՝ Օրմանեան դէպքը կը նկարագրէ իբր տղայական ձեռնարկ, որպէսզի ո'րէւէ Յայ Կվնասուի անկէ: 1908ին, Երիտթուրքական յեղաշրջումը վերջ դրաւ Օրմանեանի Պատրիարքութեան: Եկեղեցական ընդհանուր ժողովը ստիպեց Պատրիարք Օրմանեանը հրաժարիլ Պատրիարքական Աթոռէն, որմէ ետք զինք հռչակեցին «դատի ենթակայ ամբաստանեալ»:

Ամէն չարիք բարիք մըն ալ ունի: Օրմանեան կը նուիրուի իր գրիչին: Նախ կը սկսի շարադրել «Համապատումը», որ տպագրուեցաւ 1909ի Փետրուարին: Օրմանեան կը գրէ, որ իր առաջնային նպատակն էր «Աւետարանը ժողովուրդին ընտելացնել» (Օրմանեան, Մ., Խոիք եւ Խօսք, Երուսաղէմ, 1929, էջ 296):

Համաշխարհային հանրութեան ներկայացնելու համար Յայոց եկեղեցւոյ «ազատախոհութիւնը», իբրեւ տիպար մը, որ կրնայ ըլլալ բաժանեալ եկեղեցիներու միութեան մօտենալու, ձեռնարկեց «Հայ Եկեղեցի» ընդհանուր վերնագրով աշխատութեան: Գիրքը կը տպուի Փարիզ ու բարձր կը գնահատուի ընթերցողներուն կողմէ:

Մինչեւ 1914, «Ամբաստանեալ» Օրմանեանը արքայազն կը մնայ Երուսաղէմի մէջ: Կ'արտադրէ, կը դասաւանդէ, երբեմն կը զբաղի վարչական գործունեութեամբ:

Օրմանեան Երուսաղէմի Վանքին մէջ կը լսէ գոյժը Առաջին աշխարհամարտին եւ մեր ժողովուրդի մեծագոյն ողբերգութեան՝ Ջարդին: Յաջորդաբար, ան Երուսաղէմէն խուժք մը հոգեւորականներու հետ կ'արքայազնուի Դամասկոս: 1918ին կը յաջողի վերադառնալ Կ. Պոլիս, ուր կը վախճանի՝ ձգելով եկեղեցագիտական, աստուածաբանական, իմաստասիրական ու պատմական մեծ ժառանգութիւն:

ԳՐԻԳՈՐ ԱԲԱԳ ՔԱՅԱՆԱՅ ՏԱՄԱՏԵԱՆ

ՄԱՊԱՔԻԱ ՊԱՏՐԻԱՐՔ ՕՐՄԱՆԵԱՆ ԻՐ ԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ ԸՆԴՄԵՉԵՆ

Մաղաքիա Պատրիարք Օրմանեան բազմակողմանի հմտութեանց տեր անձնաւորութիւն մըն է, որուն ամբարած ծով գիտութիւնները եկած են ոռոգել ոչ միայն կրթական հաստատութիւններու ուսման պապական տուայտող աշակերտութիւնը, այլ նաեւ՝ վանական մթնոլորտի մէջ հոգեւորականի կոչումով եկեղեցւոյ ծառայութեան պատրաստուող ազնիւ հոգիները:

Հանրածանօթ բանասեր Յակոբ Սիրունի, Մաղաքիա Պատրիարքի կեանքին ու գործունեութեան նուիրուած իր երկարապատում յօդուածաշարքին մէջ կը վերլուծէ նաեւ Երանաշնորհ Պատրիարքի անհատական յատկանիշները: Յանձին մեծանուն հոգեւորականին յայտնուած մարդու, հանրային գործիչի, հոգեւորականի, ուսուցիչի, քարոզիչի եւ հայրենասերի տիպարները բիւրեղացած կերպով կը ներկայանան բոլորիս եւ մենք առիթը կ'ունենանք ծանօթանալու անձի մը հետ որուն թողած հետքերը ցարդ կը խօսին ու կը վկայեն արդիւնաւետ կեանքի մը ճշմարտութեան մասին, նոյնիսկ իր վախճանումէն դար մը յետոյ:

Նկատելով որ կրթական առաքելութիւնը իր հոգեւոր եւ աշխարհիկ երեսակներով ողն ու ծուծը կը կազմէ ազգի մը զարգացման եւ առողջ գոյատեւման, կ'անդրադառնանք Մաղաքիա Պատրիարքի կենսագրական գիծին ընդմէջէն յայտնուած կրթական գործունեութեան հանգրուաններուն, որոնք ինքնին կը փաստեն թէ անոնք վկայութիւններն են հետապնդուած մարդագարգացման ուղեգծին:

Մաղաքիա Պատրիարք իր իսկ բառերով կը բնութագրէ կրթական առաքելութեան նկատմամբ իր անձնական մասնայատկութիւնները. *“Ճաշակ, ախորժակ, կոչում, աւելցուցէք եւս յարմարութիւն եւ կարողութիւն, աւելի ուսումնական քան թէ վարչական մարդ մը կը սահմանէին զիս լինել”¹:*

¹ Օրմանեան Մաղաքիա Պատրիարք, «Գպրեվանքը», Թեոդիկ, Ամենուն Տարեցոյցը, 1908, Բ. Տարի, Կ.Պոլիս, 1908, էջ` 20:

Մաղաքիա Պատրիարք ծնաւ Յայ Կաթողիկէ ընտանիքի երդիքին տակ: Նախնական կրթութիւն ստանալէ յետոյ մեկնեցաւ Յռոմ, ուր նախ Անտոնեան միաբան, ապա Ս. Ապողիսար Յամալսարանի ուսանող, բոլորանուէր աշխատանքով նուիրուեցաւ բարձրագոյն ուսման եւ մասնագիտութեան: Տիրացաւ ակադեմական բարձրագոյն տիտղոսներու, զորս յիրաւի արժեցուց իր գործընթացով:

Հակառակ անոր որ ոմանք ակնկոր կը նայէին մեծանուն հոգեւորականի պատրաստութեան վայրին՝ Յռոմի նկատմամբ, սակայն անուրանալի ճշմարտութիւնը կարելի չէր թաքցնել թէ Մաղաքիա Պատրիարք իր ուսուցողական կարողութիւնը հիմնաւորած էր այս քաղաքին մէջ ստացած կրթութեան վրայ, որ իրեն ապահոված էր փիլիսոփայութեան, աստուածաբանութեան եւ եկեղեցական իրաւագիտութեան բարձրագոյն աստիճանները: Նաեւ ուսման առընթեր օժտուած էր վարչական եւ դիւանագիտական փորձառութիւններով:

Մաղաքիա Վարդապետ, նախ քան Յայ Եկեղեցւոյ ծոցը դառնալը սարքած է շարք մը բանախօսութիւններ, որոնցմէ առաջինին մէջ կ'անդրադառնայ ուսման եւ կրթութեան կարեւորութեան եւ այդ օրերու պայմաններուն մէջ կ'ընէ կարեւոր վերլուծումներ: Ի միջի այլոց կ'ըսէ².

“Ազգերնիս կրթեմք եւ ճոխացնեմք, սիրելիք, ազգերնիս գիտցող եւ կարող ընեմք, երբ գիտնայ եւ կրնայ, նա ինքնին կը գտնայ ընելիքը ինչ որ ժամանակին հարկը կը պահանջէ, ինչո՞ւ չընեմք ինչ որ պիտի ընեմք, եւ ուզեմք ինչ որ պիտի ընեմք, եւ ուզեմք ընել ինչ որ չեմք կրնար ընել, կրցածնիս ընեմք, ազգերնիս գիտցող ընեմք, ազգերնիս կարող ընեմք:...

...Պէտք է որ մեք Յայոյն մտաւորական տաղանդը շահեցնեմք, եւ անոր համար ալ նախնական, երկրորդական եւ բարձր վարժարանաց պէտս ունիմք:...

...Շատ մասնաւորութեանց մէջ չմտնելու համար, կը գոհանամ Ուսումնական Խորհրդոց ուշադրութիւնը հրաւիրել տոյն կէտին վրայ, Ազգին եւ վարչութեանց իրենց յանձնած պաշտօնը միայն վարժարանաց մատակարարութիւնը քննել եւ վարժապետաց վեճերը լուծել չէ, հապա բուն դաստիարա-

² Մասիս, 28րդ տարի, Թ. 2235, Երկուշաբթի, 22 Յունուար 1879 (Նոր Տոմարով՝ 3 Փետրուար) էջ՝ 2-3:

կութեան կերպը, ոճը, միջոցները եւ յառաջդիմութիւնը հոգալ:...

...Հայուն ապագայն եթէ բարձր է, այդ բարձրութեան ելլալու սանդուխին մէկ ոտքն ալ երկրորդական վարժարան մի պիտի ըլլայ, որպէս զի ազգային երիտասարդք քիչ մը եւս զարգանան, եւ վաճառականութեան եւ արուեստից, գրասենեկաց եւ գործարանաց համար կարող եւ պատրաստական անձեր ունենամք. եւ օրէնսգիտութեան, բժշկագիտութեան եւ համարողագիտութեան եւ այլ բարձր ուսմանց մտնալու յարմար աշակերտներ գտնուին, առանց կարօտ ըլլալու կարելոր հմտութիւնները օտար լեզուով եւ օտարազգիներէ ընդունելու. Պարագայ մը՝ որ ոչ թէ միայն մեր ազգասէր եւ անձնասէր զգացմանց ջարմարիք, հապա այն հրահանգները միշտ դժուարամատչելի կ'ընէ ընդհանրութեան, եւ սակաւ բաղդաւորաց միայն կը վերապահէ:...

...Երկրորդական վարժարաններէ ետքը պէտք էր որ բարձր վարժարանաց վերայ ալ խօսիմք, սակայն քանի որ երկրորդականը դեռ չկայ, աւելի բարձրին վրայ խօսիլ կրնայ ծիծաղական երեւնալ, եւ ես կը վերադասեմ նախակրթարանին վրայ դառնալ եւ գաւառաց նկատմամբ, եւ գլխաւորաբար հայաբնակ շրջանակին մէջ գտնուած գաւառաց նկատմամբ:..."

Երանաշնորհ Պատրիարքը միշտ հաւատարիմ մնալով համառոտակի ներկայացուած սկզբունքներուն, միշտ քաջալերած է ուսումնական առաքելութեան նուիրեալները:

ՈՒՍՈՒՑԻՉ Ի ՀՈՈՍ

Սաղաքիա Պատրիարքի կրթական, դաստիարակչական առաքելութեան առաջին հանգրուանն է Հռոմի Անտոնեան Վանքը, ուր նախ քան քահանայական ձեռնադրութիւն ընդունիլը 1859ին կը կոչուի Նորընծայից դասարանին կառավարչութեան: Յաջորդ տարի այս պաշտօնին առընթեր կը սկսի Նոյն դասարանին դասախօսել: Օգոստոս 1863ին կը ձեռնադրուի կուսակրօն քահանայ եւ յաջորդ տարի կը բարձրանայ Նորընծայից դասարանի տեսչութեան: Վանական վարժարանի ուսուցչութեան առընթեր 1865ին այս անգամ

հայերէն լեզուի ուսուցիչ կը կարգուի Բոսթանտաշի Դպրանոցին մէջ:

Մաղաքիա Պատրիարք իր ակադեմական բարձրագոյն տիտղոսները ստանալէ յետոյ 1868ին կը վերադառնայ Պոլիս եւ ուսուցչական պաշտօնի կը կոչուի Աստուծանոց Միաբանութեան վարժարանին մէջ:

Պապական վարչութիւնը ընդգրկած էր Հայ Կաթողիկէ հասարակութիւնը լատինաձէս դարձնելու եւ այս ուղղութեամբ զայն ցուլելու քաղաքականութիւն մը, որ լուրջ անհանգստութիւններ յառաջացուցած էր, որուն իբր հետեւանք Մաղաքիա Վարդապետ ճիշդ 140 տարի առաջ 28 Հոկտեմբեր 1879ին, Գիւտ Խաչի տօնին, հանդիսաւորապէս կը վերադառնար Հայ Եկեղեցւոյ գիրկը: Ներսէս Պատրիարքի շրջանին իրականացած այս դարձը նոր շրջան մը կը բանար թէ երիտասարդ վարդապետի կեանքէն եւ թէ Հայ Եկեղեցւոյ անդաստանէն ներս: Երանաշնորհ Պատրիարքը իրեն կը շնորհէր ծայրագոյն վարդապետութեան գաւազան եւ կը կոչէր Ղալաթիոյ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ քարոզչական պաշտօնին: Երիտասարդ վարդապետին առջեւ այլեւս բացուած էր ծառայութեան դաշտ մը, ուր առաջին իսկ մէկ օրէն վայելեց Ներսէս Պատրիարքի անվերապահ վստահութիւնը: Եւ երիտասարդ վարդապետն ալ իր հաւատարմութեամբը ցոյց տուաւ թէ արժանի էր այս վստահութեան: Որպէս ուխտեալ սպասաւոր, իրեն ընձեռնուած պայմաններուն մէջ գիտցաւ իր մտային պաշարը, ծառայելու խանդն ու կորովը եւ մանաւանդ ուսուցանելու կարողութիւնը ի սպաս դնել առ ի շինութիւն եւ ի պայծառութիւն Հայ Եկեղեցւոյ:

ԱՌԱՋՆՈՐԴ ԿԱՐՆՈՅ

Հակառակ անոր որ Մաղաքիա Վարդապետ առաջին իսկ մէկ օրէն յայտնած էր թէ *“վարչական գործերու բերմունք չունէր եւ պատրաստ էր ամէն գրական եւ ուսումնական պաշտօններու”* պարագաներ տարբեր կը զարգանան: Ղալաթիոյ Եկեղեցւոյ քարոզչական կարճատեւ պաշտօնավարութենէն յետոյ Մաղաքիա Ծ. Վարդապետ 2 Ապրիլ 1880-ին կ'ընտրուի Կարնոյ առաջնորդական պաշտօնին, յաջորդելով Յարութիւն Եպիսկոպոս Վեհապետեանի: Յարութիւն Եպիսկոպոս, որ

յետագային պիտի ընտրուէր Պոլսոյ եւ հոսկ Երուսաղէմի Պատրիարք, իր պաշտօնավարութեամբ դժգոհութեան ալիք մը յառաջացուցած էր վիճակի ժողովուրդին մէջ:

Թէեւ Յարութիւն Եպիսկոպոս ջանացած ու յաջողած էր 1870-ին Կարինի ժողովուրդի միջոցներով “Յռիփսիմեանց” աղջկանց վարժարան մը հաստատել եւ այս վարժարանին ի նպաստ կազմուած ընկերութեան վասն յօրինակ այլոց բաժնեկից եղած՝ 20 բաժինով³, կը հանդիպինք յօդուածի մը, ուր կը տեղեկագրուի Յարութիւն Եպիսկոպոսի անփոյթ կեցուածքը հանդէպ կրթական գործին⁴: Յարութիւն Եպիսկոպոս, հակառակ իր նախորդին կրթանուէր գործունեութեան ոչ-քաջալերական կեցուածք կ'որդեգրէ հանդէպ ուսումնասէր ու կրթական յառաջդիմութեան կողմնակից երիտասարդներուն: Ժողովուրդին կը թելադրէ որ իրենց զաւակները բաւարարուին պարզ գրել կարողալ սորվելով ու հետեւին իրենց ապրուստը ճարելու: Արդիական ուսման նիւթերը կը ներկայացնէ որպէս անաստուածութեան առաջնորդող դրութիւններ ու այս ուղղութեամբ որդեգրուած կեցուածքին պատճառաւ ժողովուրդին մէջ յառաջացած էր կատարեալ անփութութիւն մը: Ազգային վարժարանի մատնուած անբարունակ վիճակին ի տես յառաջդիմասէր ազգայիններ ընկերութիւն մը կը կազմեն ու կը յաջողին Ընկերական Վարժարան մը բանալ, որ Կարնոյ բարձրագոյն վարժարանը ըլլալու համբաւը կը վայելէր:

Մաղաքիա Ծ. Վարդապետ Կարնոյ վիճակին կրթական կեանքը գտաւ այս պայմաններուն մէջ: Կոչումով վարժապետ երիտասարդ առաջնորդը ի տես կրթական վիճակին ուղղակի իր վրայ կ'առնէ վարժարաններու տեսչութեան պաշտօնը եւ ամենայն մանրամասնութեամբ կը հետաքրքրուի աշակերտներու կրթական վիճակին, իրենց մաքրութեան, ապրուստի եւ նիստ ու կացին հետ: Նաեւ կրօնագիտութիւն կը դասաւանդէ ազգային վարժարանին մէջ: Նախորդ առաջնորդի օրով կառուցումը թերաւարտ մնացած վարժարանի շէնքը կը յատկացնէ աղջկանց վարժարանի: Նախկին աղջկանց վարժարանը կը յատկացնէ մանկապարտեզի եւ ծաղկոցնե-

³ Պօղոսեան Հ. Եփրեմ Վարդապետ, «Պատմութիւն Հայ Մշակութային Ընկերութիւններու, Բ. Հատոր, Վիեննա, 1963, էջ՝ 79:

⁴ Գիտակ, «Կարնոյ Ազգային Վարժարանը», Արեւելեան Մամուլ, Յունիս 1874, Զմիտնիա, էջ՝ 240-242:

րու: Արծնեան Վարժարանը կը վերածէ դասարանական դրուպէան:

Երիտասարդ առաջնորդը ընկերային օժանդակութեան գաղափարի ուղղութեամբ կը գործէ եւ կարօտ աշակերտներու զգեստները կ'ապահովէ օրինակ հանդիսանալով այլոց: Ուսման ծրագիրը կը մշակէ եւ կրթական կեանքը կը հաստատէ ամուր հիման վրայ: Իւրաքանչիւրը երկու տարի տեւողութեամբ հինգ շրջան կ'որոշէ. Ծաղկոց, ընտելարան, Նախակրթարան, կրթարան եւ ուսումնարան, որոնցմէ առաջին երեքը ճրի իսկ վերջին երկուքը վճարովի եր: Կարողութիւն ունեցողներ կը վճարէին, իսկ կարօտեալներու զաւակները իր կողմէ կ'ընտրուէին նկատի առնելով իրենց ուսման ընդունակութեան աստիճանը եւ իւրաքանչիւրը կ'ունենար իր բարերարը:

Վարժարաններու մէջ տեղացի ուսուցիչներու թերութիւնները բարելաւելու, զանոնք կրթելու նպատակաւ որպէս առաջնորդ եւ տեսուչ դասաւանդութեանց իր բաժինը կը բերէ, տօնական առիթներով զանոնք հաւաքելով հրահանգներ կու տայ:

Ուսումնական-Վարժարանական Խորհուրդի անդամներուն ալ կատարեալ աջակցութեամբը, Առաջնորդի կրթանուէր գործունեութիւնը իր պտուղը կու տայ եւ ի տես ազգային վարժարաններու բարեկարգեալ վիճակին Ընկերական Վարժարանը կը փակուի: Ազգային վարժարանը այսպէսով առաւել եւս կը զօրանայ, բարձրագոյն շրջանն ալ կը բացուի եւ անոր մէջ Առաջնորդը կանոնաւոր դասատուութեան կը ձեռնարկէ:

Իր ներշնչած վստահութեամբ քաղաքին մէջ գործող “Վարդանանց”, “Ուսումնասիրաց”, “Դպրաց” եւ “Ընթերցասիրաց” միութիւնները 1880-ի Յոկտեմբերին կը միանան եւ կը կազմեն “Բարձր Հայոց Միութիւն”ը, որուն գործունեութեամբ կը հաստատուի, Ընթերցարան, Կիրակնօրեայ Դպրոց եւ Մատենադարան⁵:

Արդիւնաշատ ծառայութիւնները կ'անդրանձեն Կարևոյ ընդարձակ վիճակի սահմանները, երբ Ազգային Կեդրոնական Վարչութեան որոշումով Սպեր, Քոյի, Դերձան, Բասէն եւ Խնուս

⁵ Պօղոսեան Հ. Եփրեմ Վարդապետ, «Պատմութիւն Հայ Մշակութային Ընկերութիւններու, Բ. Հատոր, Վիեննա, 1963, էջ՝ 87-88:

վիճակները կը յանձնուին Կարնոյ Առաջնորդական Աթոռի հոգեւոր իրաւասութեան: Երիտասարդ Առաջնորդը իր հովուական եւ վարչական գործունեութեանց առընթեր կը փայլի սոյն վիճակներու վարժարանաց նկատմամբ ցուցաբերած յատուկ հոգածութեամբ:

Կարնոյ առաջնորդի կարեւոր մէկ յատկանիշն էր, թէ կը յիշէր Կարնոյ վարժարաններու աշակերտներուն եւ շատ անգամ անոնց ծնողներուն անունները: Նոյնիսկ առաջնորդական պաշտօնը իր վրայ պահելով երբ տարի մը բացակայած էր Պոլիս եկած ըլլալով, իր վերադարձին իրենց անուններով դիմած էր աջհամբոյրի եկող աշակերտներուն⁶:

Մաղաքիա Ծ. Վարդապետի առաջնորդական պաշտօնավարութեան մէջ կարեւոր տեղ կը գրաւէ Սանասարեան Վարժարանի հիմնարկութիւնը, բարերարութեամբ Մկրտիչ Սանասարեանի, որ ի սկզբանէ ցանկութիւն ուներ հայաշատ գաւառներէն միոյն մէջ հիմնել միջնակարգ վարժարան մը, որպէսզի պատրաստուէին ուսուցիչներ, տնօրէններ, հոգաբարձուներ եւ այլ բնագաւառներու աշխատողներ: Այս ուղղութեամբ ալ նախ քան վարժարանի հիմնադրութիւնը իր միջոցներով քանի մը հայ երիտասարդներ ղրկած էր Եւրոպական ոստաններու համալսարանները որպէսզի ուսանէին եւ շրջանաւարտուէնէ յետոյ վերադառնային աշխատելու համար նորաբաց վարժարանին մէջ: Սանասարեան կը փափաքէր որ վարժարանը հիմնուէր Վանի մէջ: Սակայն յետ խորհրդակցութեան նկատի կ'առնուի թէ նոյն քաղաքի մէջ արդէն իսկ Կեդրոնական Վարժարան մը բացուած էր եւ կ'առաջարկուի այլ հայաշատ կեդրոնի մը մէջ, որպէսզի դիւրամատչելի ըլլար գաւառաբնակ ժողովուրդին: Այս առաջարկը իր պաշտպանները կ'ունենայ որոնք կ'ըլլան Առաջնորդ Վարդապետը եւ Կարապետ Եզեան, որուն Սանասարեան վստահած էր մատակարարել հսկայ գումարը վարժարանի հաստատութեան եւ ապագան ապահովելու ուղղութեամբ: Սանասարեան Վարժարանը Կարնոյ մէջ կրցաւ հաստատուիլ պարզ այն պատճառաւ որ Եզեանց խորապէս ազդուած էր երիտասարդ առաջնորդէն ու նպաստաւոր գաղափար կազմած՝ իր մասին:

⁶ Կիւլէսերեան Բաբգէն Եպիսկոպոս, «Օրմանեան Սրբազան», Տարոս Ազատ Հայաթերթ, Բ. Տարի, թիւ 17, 19 Ապրիլ 1919, Պոստոն, էջ՝ 261-262:

Վարժարանը առաջնորդ Մաղաքիա Ծ. Վարդապետի ձեռամբ կը բացուի 1 Յոկտեմբեր 1881ին, մեծահանդես արարողութեամբ: Վարժարանին վերին հսկողութիւնը անկ էր հիմնադրին, իսկ Առաջնորդը կը նախագահէր կազմուած Ուսումնական Տեսչական Խորհուրդին, որպէս ներկայացուցիչը Սանասարեանի եւ Եզեանցի ու կատարեալ լիազօրութիւն ունէր վարչական եւ մատակարարական գործառնութեանց մէջ:

Հոս կարելի է ընդգծել մեծանուն պատրիարքի վարքագծին մէջ յայտնաբերուած զոհողութեան ոգին ի նպաստ Սանասարեան Վարժարանի: Վարժարանը առաջին առթիւ գործել սկսած է վարձուած շէնքի մը մէջ: Երբ շէնքը անբաւարար կը մնայ Մաղաքիա Ծ. Վարդապետ սիրայօժար յանձնառու կ'ըլլայ առաջնորդարանի շէնքը տրամադրել վարժարանին եւ ինք փոխադրուի վարձուած շէնքի մը երդիքին տակ:

Կարնոյ վիճակի առաջնորդական պաշտօնավարութեան շրջանի մեծ մասը կը բոլորէ որպէս վարդապետ: Ի վերջոյ Կարնոյ Գաւառական Ժողովի ընծայականով կը մեկնի Մայր Աթոռ ու 8 Յունիս 1886ին Եպիսկոպոս կ'օծուի, ձեռամբ՝ Մակար Ամենայն Հայոց Կաթողիկոսի: Եւ Մաղաքիա Եպիսկոպոսի առջեւ կը բացուի ուսուցչական նոր եւ կարենոր ասպարեզ մը, որ իր խոր հետքերը պիտի թողուր աշակերտներու կեանքերէն ներս:

ԷԶՄԻԱՃՆԻ ԳԵՈՐԳԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻՆ ՄԷջ

Գեորգ Դ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուսումնական եւ զարգացած հոգեւորականներ պատրաստելու առաջադրութեամբ հիմնած էր Գեորգեան Ճեմարանը, որ դժբախտաբար պարագաներու բերմամբ իր նպատակին չէր ծառայած: Իր յաջորդը Մակար Կաթողիկոս ունէր մտահոգութիւն մը, որ էր Գեորգեան Ճեմարանը ծառայեցնել իր բուն նպատակին: Թէեւ կարող ուսուցիչներ սկսած էին գործել, սակայն կը պակսէր կրօնական գիտելիքները ջամբող կարող դասախօսը: Եւ այդ պիտի ըլլար նորապսակ Մաղաքիա Եպիսկոպոսը, որ ընդառաջելով Մակար Կաթողիկոսի 10 Յունիս 1887 թուակիր կոնդակին, հրաժարական կը ներկայացնէր Կարնոյ Գաւառական Ժողովին ու կը հասներ Մայր Աթոռ 3 Սեպտեմբեր 1887ին:

Մաղաքիա Եպիսկոպոսի ուսուցչութեան նուիրուելու նպատակաւ առաջնորդական պաշտօնէն հրաժարումը Մակար Կաթողիկոսի մօտ խղճահարութիւն չէր յառաջացուցած, քանի որ ըստ հայրապետական կարծեաց *“Եկեղեցւոյ օգուտին տեսակետով աւելի լաւ էր վիճակ կառավարողներ հասցընել, քան թէ վիճակ մը կառավարել”*⁷:

Մաղաքիա Եպիսկոպոս յանձնառու կ’ըլլայ պատրաստել ճեմարանի աստուածաբանական դասերու աւանդման ժամանակացոյցը եւ ուսուցանելի նիւթերը: Աստուածաբանական նիւթերու առընթեր կը դասախօսեր Աւետարանի ներածութիւն, բարոյախօսութիւն՝ եկեղեցական ու աշակերտական կեանքի նիւթերով: Նկատելով որ դասախօսութեան համար գիրքեր չկային, այդ պակասը լրացնելու յանձնառու եղաւ ան, բնականաբար օգտուելով իր փորձառութենէն, ձեռք ձգուած՝ Զոովմի համալսարանական շրջանակներէն:

Նուազ քան տարի մը պաշտօնավարեց Մաղաքիա Եպիսկոպոս եւ յիրակի խմորեց աշակերտութիւնը եւ վարժարան մը որ հիմնուած օրէն իսկ մէկ ընթացաւարտ մը չէր ունեցած որ յանձնառու ըլլար որպէս եկեղեցական ծառայելու: Իր կարճատեւ պաշտօնավարութիւնը պտուղ տուաւ եւ ունեցաւ հանրածանօթ սաներ. Գեորգ Զ. Ամենայն Յայոց Կաթողիկոս Չեօրեքճեան, Գարեգին Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Յովսէփեանց, Կարապետ Եպիսկոպոս Տէր Մկրտիչեան, Նահապետ Եպիսկոպոս Նահապետեան:

Մաղաքիա Եպիսկոպոս այն աստիճան ազդեցիկ եղած էր որ, այս հոգեւոր կրթարանէն ներս եկած էր նոր շունչ մը: Ստեղծուած այս մթնոլորտը եղած էր վարակիչ, այն աստիճան որ իրեն ուղղակի չաշակերտողներն իսկ կը կրէին նոյն ոգին: Իր կարճատեւ պաշտօնավարութեան ընթացքին ճեմարանի ուսանող պատանիներ յետագային երբ յանձն առած էին եկեղեցական դառնալ, իրենք զիրենք Մաղաքիա Եպիսկոպոսի սան կ’անուանէին:

Մաղաքիա Եպիսկոպոսի Գեորգեան ճեմարանի մէջ ունեցած արդիւնաւետ ուսուցչագործութիւնը դժբախտաբար կը բաղխի ցարական իշխանութեան միջամտութեան: Ցարական իշխանութիւնը իրեն համաձայն օրինական յենարան մը

⁷ Օրմանեան Մաղաքիա Արքեպիսկոպոս, Նախկին Պատրիարք, «Ազգապատում», Գ. Հատոր, Պէյրուօ, 1961, յօդուած՝ 2929, սինակ՝ 4588:

գտնելով կը պահանջէ որ Մաղաքիա Եպիսկոպոս հեռանայ թէ պաշտօնէն եւ թէ երկրէն: Հակառակ անոր որ Մակար Կաթողիկոս կամակից չէր ներկայացուած պահանջքին, իր կարողութեան ներքին չափով ընդդիմացած էր ու կամեցած՝ զայն պահել իր պաշտօնին վրայ, սակայն այդ կը մնար անօգուտ եւ ի վերջոյ Մակար Կաթողիկոս ստիպուած տեղի կու տար եւ կոնդակով ազատ կ'արձակէր: Մաղաքիա Եպիսկոպոս 1888ի Յուլիսին կը բաժնուի Մայր Աթոռէն: Այս մասին կը յայտնէ իր զգացումը ըսելով. *“Կրնամ հաւաստել թէ կեանքիս երջանկագոյն օրերն եղան՝ վարչականէ ազատ գրականի նուիրեալ պատուաւոր եւ հանգիստ կերպով Էջմիածին անցուցածներս”*⁸:

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԵՋ

Մաղաքիա Եպիսկոպոս ցաւ ի սիրտ կը բաժնուի Սուրբ Էջմիածնէն, քանի որ գրկուած էր Հայ եկեղեցականութեան համար յոյժ կարեւոր աշխատութենէ: Յօդս ցնդած էին այն ազնիւ ու շինարար գաղափարականը, ըստ որում մեծանուն եկեղեցականը ծրագրած էր արեւելահայ եւ արեւմտահայ ժողովուրդներէն կոչումի տէր աշակերտներ համախմբել Գեորգեան ճեմարանի երդիքին տակ: Այս գաղափարը, որ արժանացած էր Մակար Կաթողիկոսի օրհնութեան կը միտեր ելքայրուօրէն եւ համերաշխութիւն հաստատել իւրաքանչիւրի անմիջական շրջանակէն ներս:

Մաղաքիա Եպիսկոպոս Մայր Աթոռէն վերադառնալով 11 Օգոստոս 1888ին ոտք կը դնէ Պոլիս: Արմաշու Վանահայր Խորէն Եպիսկոպոս 29 Սեպտեմբեր 1888ին կ'ընտրուէր Պոլսոյ Պատրիարք: Նախ քան Արմաշու Դպրեվանքի հաստատութիւնը, պատրաստական աշխատանքներու առընթեր Մաղաքիա Եպիսկոպոս 21 Հոկտեմբերին Ազգային Կեդրոնական Վարժարանի մէջ կը ստանձնէ ուսուցչական պաշտօն առժամեայ հանգամանքով, աւանդելու կրօնական դասերը: Ազգային Կեդրոնական Վարժարանը Երանաշնորհ Ներսէս Պատրիարքի տեսլականը, 1886ին սկսած էր իր մարդակերտման

⁸ Օրմանեան Մաղաքիա Արքեպիսկոպոս, «Խոհք եւ Խօսք», Երուսաղէմ, 1929, էջ՝ 149:

առաքելութեան, մարդիկ՝ որոնք պիտի դառնային ուսուցիչ, տնօրէն եւ եկեղեցական, բարձրացնելու համար ժողովուրդի այլազան խաւերու մտաւորական մակարդակը:

Այս սրբազան առաքելութեամբ օժտուած վարժարանի սաներուն համար բարեբախտութիւն էր վայելել Մաղաքիա Եպիսկոպոսի նման հոգեւորականի մը ներկայութիւնը, որ յիրաւի տերն էր իր աւանդած նիւթերուն, ինչպէս նաեւ աշակերտներու մօտ վառ հետաքրքրութիւն կը ստեղծէր իր ուսուցողական կարողութեամբ: Արմաշական մեծ հոգեւորական Բաբգէն Մեծի Տանն Կիլիկիոյ Աթոռակից Կաթողիկոսի վկայութեամբ՝ *“այն Կեդրոնականցիները որոնք դաս առած են իրմէ, մինչեւ ցարդ հաճոյքով կը յիշեն, թէ իրենք աշակերտած են նշանաւոր կրօնագետ ուսուցչին”*⁹:

Մաղաքիա Եպիսկոպոսի այս կարեւոր կրթարանի մէջ ուսուցչագործութիւնը եւս կ'ըլլայ կարճատեւ: Սակայն այս կրթարանէն կը բաժնուի Պոլսոյ Պատրիարքական Աթոռի Դպրեվանքի հիմնարկութեան գլխաւոր սիւնը հանդիսանալու, Դպրեվանքը թէ ուսումնական եւ թէ դաստիարակչական ծրագիր ու կանոններով կազմակերպելու համար:

ԱՐՄԱՇՈՒ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ ՄԵՋ

Արմաշու Չարխափան Սուրբ Աստուածածին Վանքի վանահայրը խորէն Եպիսկոպոս Աշըքեան 29 Սեպտեմբեր 1888ին կ'ընտրուի Պատրիարք Յայոց Պոլսոյ: Իր ետին թողլով այրեցաւեր վանքը կը բազմի Պատրիարքական Աթոռ եւ իր գլխաւոր մտահոգութիւնը կ'ըլլայ եկեղեցին բարեկարգել եւ այս առումով կը խորհրդակցի բարձրաստիճան եկեղեցականներու հետ: Մաղաքիա Եպիսկոպոս, որ եկեղեցական պատրաստելու գործին իր սիրտը դրած էր կ'առաջարկէ եկեղեցւոյ բարեկարգութենէ առաջ նկատի ունենալ կարող եւ ընդունակ հոգեւորականներ եւ արժանաւոր հոգեւոր սպասաւորներ պատրաստելու հարկաւորութիւնը:

Խորէն Պատրիարք յետ խորհրդակցութեան կը համոզուի թէ տեղին էր Մաղաքիա Եպիսկոպոսի առաջարկը ու ի վեր-

⁹ Կիլիկիոյ Բաբգէն Եպիսկոպոս, «Օրմանեան Սրբազան», Տարոս Ազատ Հայաթերթ, Բ. Տարի, թիւ 17, 19 Ապրիլ 1919, Պոստոն, էջ՝ 261-262

չոյ կը կազմուի յանձնախումբ մը 30 Նոյեմբեր 1888ին, զայն կոչելով Գարակեօմրիկի Յանձնաժողով: Այս յանձնաժողովին գլխաւոր երկու սիւները կ'ըլլան Մաղաքիա Եպիսկոպոս եւ Աբիկ Ունճեան՝ անմոռանալի ազգային գործիչն ու բարերարը: Յետ մանրագնին ուսումնասիրութեանց եւ քննարկմանց կ'որոշուի օգտագործել այրեցաւեր Արմաշու Վանքին գործածելի մնացած բաժինները եւ բանալ Դպրեվանքը, որուն անունը կը նուիրագործուի 10 Յունուար 1890-ին, որպէս *“Դպրեվանք Պատրիարքութեան Հայոց Կոստանդնուպոլսոյ Վրմաշ”*:

Մաղաքիա Եպիսկոպոս այս նորահաստատ կրթարանին կանոնագրութիւնը, նաեւ ամենակարեւորը ուսումնական ծրագիրը կը մշակէ: Արմաշու Վանքի պատմութեան մէջ կրթանուէր առաքելութեան մը հիմնական անուններն էին Բարթողոմէոս Արքեպիսկոպոս Կապուտիկեան եւ Պօղոս Արքեպիսկոպոս Քարաքօչ: Խորէն Պատրիարք Աշըքեանի անունը կու գար միանալ այս երկու մեծանուն հոգեւորականներուն, որ գիտցած էր պաշտօնը յանձնել Մաղաքիա Եպիսկոպոսի որ Յ. Սիրունիի բառերով *“Արմաշու Վանքէն Ներս կը մտներ իր բուն կոչման մէջ, որուն բաղձացեր էր այնքան տարիներէ ի վեր: Ճեմարանի իր մէկ տարին, եւ ուսուցչական ամպիոնը Կեդրոնականի մէջ, միջանկեալ ովասիսներ եղեր էին իրեն համար իր աղմկալից կեանքի ընթացքին: Հիմա արդէն իր ասպարեզին մէջ էր լրիւ: Ճեմարանի թէ Արմաշի մէջ Օրմանեանի գլխաւոր նպատակն եղաւ հասցնել հոգեւորականներու նոր սերունդ մը”¹⁰*:

Պատրաստած ուսումնական ծրագիրը կը տարածուէր եօթը տարուան վրայ: Առաջին երեք տարիները լրացնողներ հասած կ'ըլլային որպէս քահանայ եւ կամ կրթական մշակ ծառայելու մակարդակին: Յաջորդ երեք տարիները վերապահուած էին կուսակրօն եկեղեցական դառնալու կոչում ունեցող աշակերտներու համար, որոնք առաջին եռամեայ իրենց պատրաստութիւնը կը կատարելագործէին ու կը ձեռնադրուէին աբեղա: Վերջին տարին կ'արժեւորէին ակարտաճառի պատրաստութեամբ ու կը ստանային վարդապետական գաւազան:

¹⁰ Սիրունի, Յ. ճ., «Օրմանեան եւ իր ժամանակը», «Էջմիածին, Պաշտօնական Ամսագիր Մայր Աթոռ Ս. Էջմիածնի», Տարի ԺԸ, թիւ 2, Ս. Էջմիածին, 1961, էջ 24:

Մաղաքիա Եպիսկոպոս Դպրեվանքի գործունեութեան սկսած օրերուն կը գրէ. *“...վարժարանի կարգադրութիւնները զիս կը զբաղեցնէ անողւլ և անդադար: Առայժմ ամենայն ինչ յաջող կը փայլի աստ. լաւ յարաբերութիւններ, հաւասար եռանդ և աշակերտաց կողմանէ պատրաստակամութիւն: Վարագայ խաչէն յետոյ կարեւոր դասեր պիտի սկսին: Սկզբին դեռ ինչ ինչ պակասութիւններ ունինք, մանաւանդ տաճկաբան չունինք: Ամէն բան ի միասին առեալ վարժարանիս բաւական զողորիկ ձեւ առաւ, եթէ ներքինն ալ արտաքնոյն նմանի, կարող եմք գոհ լինել”¹¹:*

Մաղաքիա Եպիսկոպոս փոխ վանահայրն ու տեսուչն էր Նորաբաց Դպրեվանքին: Նաեւ գլխաւոր ուսուցիչը, դասախօսը որ տիրաբար կ’աւանդէր իրեն վստահուած նիւթերը: Իրեն պիտի միանար Եղիշէ Ծ. Վարդապետ Դուբեան, ապագայի Եպիսկոպոսը, Չմիւռնիոյ Առաջնորդը, Պոլսոյ Պատրիարքը եւ հուսկ՝ Պատրիարքը Ս. Երուսաղէմի: Մաղաքիա Եպիսկոպոս առաջին իսկ մէկ օրէն կը գործակցի Եղիշէ Ծ. Վարդապետին հետ, որուն Պարտիզակի մէջ ունեցած կրթական գործունեութեանը ծանօթ էր: Մաղաքիա Եպիսկոպոս գոհունակութեամբ կ’արտայայտուի Եղիշէ Ծ. Վարդապետի մասին որ “իր կեանքը կը սպառէր ի դասի եւ դասարանի”, կարծես թէ դարձած էր “մենակեաց եւ անապատակեաց”:

Դպրեվանքի ուսումնական գործունեութիւնը յանձնիս այս երկու մեծանուն եկեղեցականներու տիրացաւ երկու ամուր սիւներու: Մաղաքիա Եպիսկոպոս ստանձնած էր փիլիսոփայական, աստուածաբանական եւ եկեղեցապատմական ճիւղերու դասաւանդութիւնը, իսկ Եղիշէ Ծ. Վարդապետի յանձնըւած էին հայրաբանական, գրագիտական ու պատմական ճիւղերը: Մաղաքիա Եպիսկոպոս աստուածաբանական ճիւղի դասաւանդութեանց համար իր բառերով “կ’օգտագործէր Ս. Էջմիածնի ձեռնարկները, իսկ Սուրբ Գրքի ներածութեան, տօներու եւ ծիսագիտութեան մասին Նոր ձեռնարկներ կը պատրաստէր եւ ուրիշ դասերու համար յատուկ ուսումնա-

¹¹ ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., XII բաժին, գ. 11553: Ըստ Կոստանոյան, Է. Ա. (2012) *Մաղաքիա Օրմանյանի գործունեությունը Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Արմաշի դպրեվանքում (1887-1896 թթ.)*. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 2-3 . pp. 14-31.

*սիրութեանց պետք կ'ունենար, որով ընդարձակ եւ պէսպիսուն աշխատութիւններ կ'աւելնային*¹²:

Երկու նուիրեալ հոգեւորականներ միասնաբար կը լծուին Դպրեվանքի գործունեութիւնը կարգաւորելու գործին: Մաղաքիա Եպիսկոպոս տարուած աշխատանքին իր մասնակցութիւնը կ'արժեւորէ ընդգծելով թէ տասնեակ տարիներու ընթացքին տարբեր նպատակներու ծառայած էր, ու կը յայտնէր իր ուրախութիւնը, որ վերջապէս հասած էր իր ազգին իսկական ծառայութիւն մատուցելու ժամանակը. *“Ամենուն միացեալ գորութեամբ եկեր եմ նոր գործ մը գործել և Հայաստանեայց եկեղեցւոյ մշակներ պատրաստել”*: Ան կը վերլուծէր իր ողջ գործունեութիւնը. *“...Անտօնեան միաբանութեան վանական, Հռոմայ համալսարանին աշակերտ, կաթոլիկ միաբանութեան վարդապետ, հակահասունեան ինդրոյն շահատակ, հակապապական գրուածոց հեղինակ, հայոց եկեղեցւոյ եպիսկոպոս, Կարնոյ վիճակին առաջնորդ, Մայր Աթոռոյ ճեմարանին ուսուցիչ, այսպէս իրարու անյարիր վիճակներու մէջ մարգեալ, ի հակառակաց լծեալ փորձառութեամբ տեսնենք, թէ ինչ պիտի կարենանք կատարել”*¹³:

Մաղաքիա Եպիսկոպոս յիրաւի ցոյց տուաւ թէ այն ինչ որ ըրած էր Մայր Աթոռի Գեորգեան ճեմարանին մէջ, նաեւ կրնար լաւագոյնս կատարել այս նորաբաց կրթօճախին մէջ: Եւ ան յաջողեցաւ սրբազան նպատակ մը կեանքի կոչելու իր առաքելութեանը մէջ: Ձեռք ձեռքի տալով Եղիշէ Ծ. Վարդապետ Դուրեանի հետ, ամէն ինչ կատարուեցաւ Դպրեվանքը բարձր մակարդակի վրայ պահելու համար:

Մաղաքիա Եպիսկոպոս Արմաշու իր գործունեութեանը մէջ կարեւորութեամբ կը շեշտէր թէ, քահանայութեան նպատակը և բարձրութիւնը ժողովուրդին ծառայելու, վանականութեան ու վեղարին հաւատարիմ մնալու մէջ կը կայանար: Ով որ չէր կատարէր այդ պարտականութիւնները, ուրեմն ան շեղած էր իր ճանապարհէն: Մաղաքիա Եպիսկոպոս երբ այս խրատները կու տար, իր կեանքը վկայութիւն էր համակ, ըստ որում, ինչ որ ալ ըլլային ժամանակի իրադարձութիւնները Ան

¹² Օրմանեան Մաղաքիա Արքեպիսկոպոս, «Խոնք եւ Խօսք», Երուսաղէմ, 1929, Էջ` 160:

¹³ Նոյն անդ, գ. 11554: Ըստ Կոստանդյան, Է. Ա. (2012) *Մաղաքիա Օրմանյանի գործունեությունը Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Արմաշի դպրեվանքում (1887-1896 թթ.)*. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 2-3 . pp. 14-31.

չեր շեղած Դպրեվանքի աշխատանքները կարգաւորելու մտահոգութիւններէն:

Մակար Կաթողիկոսի վախճանումէն յետոյ 1892ի Մայիսին պիտի կատարուէր նոր կաթողիկոսի ընտրութիւն: Մաղաքիա Եպիսկոպոս այն աստիճան կապուած էր Դպրեվանքին ու հոն կատարուած կրթական աշխատանքին, որ դժկամակած էր որպէս պատգամաւոր մասնակցիլ կաթողիկոսական ընտրութեան, յայտնելով թէ *“չէր ցանկար Արմաշէն հեռանալ, քանի որ եթէ նկատի չառնուէին վանահայրական զբաղմունքը, վերատեսչական պարտականութիւնը չէր ուզէր խաթարել “ուսուցչական գործը”, որովհետև շաբաթական 25 ժամ կը դասախօսէր և իր ուսանողները կէս ուսումնական տարիին մեծ վնաս պիտի կրէին: Իր բացակայութիւնը կը նշանակէր աշակերտներու տարեկան ընթացքը ջղակտոր հանել”*¹⁴:

Ի սեր Դպրեվանքի յաջողութեան ան կ’աշխատէր բոլոր նիւթերու դասաւանդումը հասցնել բարձր մակարդակի: Նաեւ կը ջանար օտար լեզուներու ուսուցումը կարգաւորելու, լաւ ուսուցիչներ կրթական առաքելութեան ներգրաւելու, ինչպէս նաեւ բնական գիտութիւններու համար նոր մասնագետներ հրաւիրելու ուղղութեամբ: Կ’աշխատէր վարժարանէն շրջանաւարտ ուսանողները ուղարկել արտասահման՝ աստուածաբանական ճիւղը բարձր մակարդակի հասցնելու նպատակաւ: Ըստ փորձառու կրթական մշակի տեսութեան արտասահման ուղարկելի երիտասարդները *“Էական էր, որ Նախ մեր ընթացքը հայկական ոգով ու հայկական ճաշակով աւարտէին և ապա անոր վրայ կցուէր օտարը: Առաջին ու Նախնական ընթացքը օտարաց ձեռքով ընել տալու կողմնակից չէր”*¹⁵:

Մաղաքիա Եպիսկոպոս Արմաշու Դպրեվանքի փոխ վանահայրութեան եւ տեսչական պաշտօններու ընթացքին, վանքի միաբաններուն աշխատակցութեամբ ձեռնարկած է

¹⁴ Նոյն անդ, գ. 11581: Ըստ Կոստանոյան, Է. Ա. (2012) *Մաղաքիա Օրմանյանի գործունեությունը Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Արմաշի դպրեվանքում (1887-1896 թթ.)*. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 2-3 . pp. 14-31.

¹⁵ Նոյն անդ, գ. 11523: Ըստ Կոստանոյան, Է. Ա. (2012) *Մաղաքիա Օրմանյանի գործունեությունը Էջմիածնի Գևորգյան ճեմարանում և Արմաշի դպրեվանքում (1887-1896 թթ.)*. Լրաբեր Հասարակական Գիտությունների, № 2-3 . pp. 14-31.

“Մասիս” Կրօնաթերթի հրատարակութեան, բան մը որուն միտք բանին էր Արմաշական Հայրերը գրելու մղել եւ այդ միջոցաւ իրենց խոհերը արծանացնել եւ ընթերցող հասարակութեան հոգեւոր գրականութիւն մատակարարել:

Ան ողջունեց Արմաշու Դպրեվանքի անդրանիկ ձեռնատուններու ձեռնադրութեան երջանկութիւնը, Դպրեվանքի սաներու նախախայրիքը: Իրեն համար յոյժ երջանկաբեր էր երբ Նորոգ ձեռնադրեալ միաբաններ Բարգէն Կիլէսերեան, Խոսրով Պէրիկեան, Չաւէն Տէր Եղիաեան, Մուշեղ Սերոբեան, Սմբատ Սաստերեան, Աղան Համամճեան, Մաշտոց Փափագեան վարդապետները վեղար ի գլուխ կու գային Պոլիս, իր առաջնորդութեամբ:

Սակայն եւ այնպէս Արմաշու Դպրեվանքի երկնակամարը կը մթագնի 23 Յուլիս 1896ին, Սատթէոս Պատրիարք Իզմիրլեանի հրաժարումէն յետոյ, յատկապէս 27 Յուլիս 1896ին Բարթողիմէոս Արքեպս. Չամիչեանի Տեղապահ ընտրութեամբ: Բարթողիմէոս Արքեպիսկոպոս սառ վերաբերմունք կը ցուցաբերէ հանդէպ այս օրինեալ կրթական յարկին: Հրաժարումներ, նեղութիւններ, անձկութիւններ նիւթական անբաւարարութիւններ բոլորը կու գային պատճառ հանդիսանալ որ կրթական առաքելութիւնը խափանուէր: Նոյնիսկ Տեղապահը եւ վարչութեան յառաջադէմ անձերէն Յովհաննէս Նուրեան անհասկնալի ուրախութիւն մը կը զգային ի տես Դպրեվանքի այս անբարունակ վիճակին: Նոյնիսկ կը յանդգնէին ըսել. “Դպրեվանքին Հոգւոցը արտասանուած է”:

Սակայն փառք Ամենակալին Աստուծոյ, որուն տնօրինութեամբ Մաղաքիա Եպիսկոպոս ընտրուեցաւ Պատրիարք Հայոց Պոլսոյ եւ այս անգամ Դպրեվանքի շուրջ երգուած մահասփիւռ երգերը իրենց տեղը թողուցին Յարութեան եւ յոյսի աւետիսի ցնծութեան: Այս անգամ Մաղաքիա Պատրիարք որպէս վանահայր, իսկ Եղիշէ Ծ. Վարդապետ՝ ապա եպիսկոպոս որպէս փոխ-վանահայր եւ վերատեսուչ իրենց հովանին տարածեցին Պատրիարքական Աթոռի այս հոգեւոր կրթօճախին վրայ:

Մաղաքիա Եպիսկոպոս եօթը տարի պաշտօնավարեց Արմաշու Դպրեվանքին մէջ: Ան կը կրէր փոխ-վանահայրի եւ վերատեսուչի հանգամանքները: Սակայն իր գործունեութիւնը չսահմանափակեց միայն ուսուցչութեամբ եւ տեսչութեամբ եւ հարկադրաբար սիրով յանձն առաւ նաեւ քարտուղարու-

թեան, հաշուակալութեան, վերին մատակարարութեան, շինութեանց հսկողութեան եւ հողային հոգածութեան պարտականութիւնները:

Մաղաքիա Պատրիարք Արմաշու Դպրեվանքին մասին կը գրէ հետեւեալը. *“Ուրախ եմ որ Դպրեվանքը գովելի եւ պայծառ յիշատակ մը թողուց իւր ետեւէն, աշխատասեր ու զարգացած ու ոգեւորեալ պաշտօնեաներ նուիրեց ազգին, քարոզչական ճիւղին մէջ հմտալից եւ ազգօգուտ ուղղութիւն մը սկզբնաւորեց, եւ մինչեւ այսօր Դպրեվանքը եւ Դպրեվանքցիներ գովեստով կը յիշուին ամենուն կողմէ: Աշխատութիւնը քաղցր է երբ որ արդիւնաւորութեամբ կը պսակուի. Այս է իմ ալ միտիթարութիւնը, եւ մինչեւ աստիճան մը նաեւ իմ պարծանքը”¹⁶:*

ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՅՈՑ ՊՈԼՍՈՅ

Մաղաքիա Եպիսկոպոս 6 Նոյեմբեր 1896ին կ’ընտրուի Պատրիարք Հայոց Պոլսոյ:

Տասնեւերկու տարուան պատրիարքական պաշտօնավարութեանը ընթացքին թէեւ չունեցաւ ուսուցչական եւ դաստիարակչական գործօն պաշտօնավարութիւն, սակայն իր ջերմ վերաբերմունքին արժանացան Պոլսոյ եւ շրջակայի վարժարանները: Չանոնք կանոնաւորելու համար թէ Ուսումնական Խորհուրդը գործելու կը մղեր եւ թէ անձնական այցելութիւններով անձամբ կը քննարկեր: Այդ շրջանին դասագրքերէն ոմանք չէին օգտագործուէր անոնց պարունակութիւնները վնասակար ու կասկածելի նկատուելով: Մաղաքիա Պատրիարք իր այցելութիւններով կու գար փարատել յաչս Կայսերական Պալատի մօտ յառաջացած ամէն տեսակի կասկածները եւ այս առումով ցոյց կու տար թէ վարժարանները ապահով էին եւ հեռու` վնասակար հոսանքներէ: Առանց բացառութեան տրուած այս հովուապետական այցելութիւնները եւ դպրոցական հանդէսներու մասնակցութիւնը Կայսերական Պալատին վստահութիւն կը ներշնչէին:

¹⁶ Օրմանեան Մաղաքիա Արքեպիսկոպոս, «Խոնք եւ Խօսք», Երուսաղէմ, 1929, էջ` 160-161:

Մաղաքիա Պատրիարք ծանօթ էր “շաքարաբաշխ Պատրիարք կոչումով”, քանի որ իր հովուապետական այցելութիւնները կը պսակուէին աշակերտներուն բաշխուած շաքարներով: Տղաքը անհամբերութեամբ կը սպասէին իրենց մանկունակ հոգեվիճակով, գուցէ այդ բաշխման մէջ տեսնելով մեծաւորի մը կողմէ ցուցաբերուած սերն ու խանդաղատանքը:

Բարգէն Ծ. Վարդապետ Կիլիսեւերեան Մաղաքիա Պատրիարքի գահակալութեան տասնամեակին առթիւ գրի առած խմբագրականով կու գայ ընդգծել մեծանուն Պատրիարքի ջանքերը ի նպաստ կրթական առաքելութեան: Այս տողերը յիրաւի ցոյց կու տան թէ Մաղաքիա Պատրիարք ինչ աստիճան հետաքրքրուած էր համայնքի կրթական կեանքին հետ եւ սիրտ մաշեցուցած՝ դրական արդիւնք ձեռքբերելու առաջադրութեամբ. *“Դպրոցական գործերու մէջ անվիճելի հասկացողութիւն մը ունի, եւ այս մասին Նորին Սրբազնութեան ցոյց տուած կարողութիւնը ինքնին պիտի շեշտուի՝ երբ օր մը գործադրէ հայ դպրոցներու կրթական ու դաստիարակական աստիճանները ճշդող իր ծրագիրը, որու ընդհանուր գիծերուն վրայ շատ բան խօսած է արդէն ինքն դպրոցական հանդէսներու մէջ: Ուսումնական խորհրդոյ կողմէն վերաքննուած ծրագիրը՝ բաւական որոշ գաղափար մը պիտի տայ ազգին՝ թէ Թուրքիոյ Հայոց Պատրիարքը ի՞նչ հիմերու վրայ կ’ըլգէ հաստատուած տեսնել ժողովրդական կրթութիւնը մեր մէջ”¹⁷:*

Սակայն նոյն հեղինակը կ’ափսոսայ թէ այդ ծրագիրը կեանքի չէր կոչուած. *“Օրմանեան, իբրեւ կրթական գործիչ, իր բազմամեայ փորձառութեան եւ դիտողութեանց արդիւնքներուն վրայ պիտի հիմնէր Թուրքիոյ Հայոց ազգային կրթութեան եւ դաստիարակութեան գործը: Չեմ գիտեր, թէ ինչո՞ւ համար ի գործ չդրուեցաւ իր կրթական ծրագիրը”¹⁸:*

Մաղաքիա Պատրիարք 16 Յուլիս 1908ին կը հրաժարի ու իրեն համար կը սկսի դժուար շրջան մը: Մեծանուն Պատրիարքը իրր մատնուած կախակայեալ վիճակը կրցած է վե-

¹⁷ «Տասնամեայ Տարեդարձ Պատրիարքութեան Ամեն. Տ. Տ. Մաղաքիա Ս. Արքեպս.ի Օրմանեան», Լոյս Շաքարաթերթ, ԺԲ տարի, (նոր շրջան՝ Բ. Տարի), թիւ՝ 44, 4 Նոյեմբեր 1906, Կ. Պոլիս, 1906:

¹⁸ Կիլիսեւերեան Բարգէն Եպիսկոպոս, «Օրմանեան Սրբազան», Տարուս Ազատ Հայաթերթ, Բ. Տարի, թիւ 17, 19 Ապրիլ 1919, Պոստոն, էջ՝ 262:

րածել երկունքի շրջանի որ ծնունդ պիտի տար իր կարեւոր հեղինակութեանց լոյս ընծայման:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՄԵջ

Մաղաքիա Նախկին Պատրիարքի կախակայեալ վիճակը վերջ կը գտնէ Յովհաննէս Պատրիարք Արշարունիի Նախագահութեամբ կայացած Ազգային Ընդհանուր Ժողովին մէջ, 21 Դեկտեմբեր 1912ին, եւ իր մասին յերկրուած ամբաստանութիւնները մի առ մի կը հերքուին եւ միաձայնութեամբ անպարտութեան վճիռ կ'արձակուի:

“Վարժապետութիւնը կամ ուսուցչութիւնը ինծի բնածին ախտ մը դարձած է, եւ ամէն պաշտօններուս մէջ դպրոցական զբաղումներու լայն բաժին տուած եմ”: Մաղաքիա Նախկին Պատրիարք այս բառերով կը սկսի բնութագրել Սուրբ Երուսաղէմի Առաքելական Աթոռի երդիքին տակ ունեցած կրթական առաքելութիւնը: Մաղաքիա Արքեպիսկոպոս 21 Ապրիլ 1914ին Ազգային Կեդրոնական Վարչութեան Խառն Ժողովի ընտրութեամբ պաշտօնի կոչուած էր որպէս անդամակից պատուիրակութեան մը որ օժտուած էր Սուրբ Երուսաղէմի միաբանութեան մէջ ծագած վեճի մթնոլորտը վերացնելու, հարցերուն լուծում որոնելու առաքելութեամբ: Նախքան Սուրբ Երուսաղէմ գալը մեծանուն հոգեւորականը իր մտքին մէջ կը կաղապարէ մտածումներ, որոնց կարգին կը գտնուէին *“միաբանութիւնը ոգեւորելու, վանական հոգին վառելու, բարեկարգութիւնները լրացնելու, վարժարանը բարձրացնելու եւ տիպար վանքի մը պահանջած պայմանները լրացնելով արժանաւոր գլուխի մը յանձնելու”* փափաքը:

Այս առումով Սուրբ Երուսաղէմի Վանքի Ժառանգաւորաց Վարժարանը կ'ըլլայ իր ուշադրութեան կիզակետը: Վարժարանը, որ կը գտնուէր ոչ-Նախանձեղի վիճակի մը մէջ պէտք էր վերածել հոգեւոր ճեմարանի մը: Մաղաքիա Նախկին Պատրիարքը Սուրբ Երուսաղէմի մէջ կը գտնէր ուսուցչական կոչումին յագուրդ տալու առիթը: Առաջին առթիւ, 19 Մայիս 1914ին, կը ձեռնարկէ շաբաթական ազատ դասախօսութիւններու Հայ Եկեղեցւոյ պատմութեան եւ վարդապետութեան նիւթերուն շուրջ: Աթոռի միաբաններուն հետաքրքրութեան արժանացած այս դասախօսութեանց կը յաջորդէ

շրջանաւարտներէ կազմուած դասարանին համար աւանդուած Սուրբ Աւետարանի ներածութեան, տրամաբանութեան, հոգեբանութեան, բնական եւ ջատագովական աստուածաբանութեան դասերը: Այս դասարանին, որ կազմուած էր 28 Յուլիսին, իսկ դասաւանդութիւնները սկսած՝ 25 Սեպտեմբերին, վերոյիշեալ նիւթերուն առընթեր յետագայ շրջաններուն կ'աւանդուի նաեւ տեսական եւ բարոյական աստուածաբանութիւն, առաքելական թղթոց ներածութիւն, գրաբարի վարժութիւն եւ ատենաբանութիւն:

Երկրորդ դասարան մը կը կազմուի 14 Յոկտեմբեր 1915ին, իսկ երրորդ մը՝ 24 Յոկտեմբեր 1916ին: Երրորդ դասարանի ալ կազմութենէն յետոյ երկրորդ շրջանին աւանդուած դասերուն վրայ կ'աւելնայ նաեւ կանոնագիտութեան կամ եկեղեցական օրէնագիտութեան դասերը:

Մաղաքիա նախկին Պատրիարքը՝ ուսուցչական աշխատութիւնները կը կատարէր միշտ սիրայօժար յանձնառութեամբ, առանց որեւէ փոխարինութեան”:

Սակայն այս ուսուցչական առաքելութիւնը եւս պիտի ըլլար կարճատեւ ու պիտի դադրէր 12 Ապրիլ 1917ին, երբ դպրանոցի աշակերտութիւնը զինուորագրուելով պիտի մեկնէր:

Մաղաքիա նախկին Պատրիարք արձանագրուած պատերազմական վիճակի զարգացմանց հետեւանքով 13 Նոյեմբեր 1917ին Ս. Երուսաղէմէն կը փոխադրուի Դամասկոս: Զաղաքի աննպաստ կլիմային պատճառաւ կ'անհանգստանայ եւ հիւանդագին վիճակի մէջ յատուկ արտօնութեամբ Մայիս 1918ին կը վերադառնայ Պոլիս:

Պոլսոյ մէջ իր կեանքի վերջին ամիսները կ'անցնէ տարագրութենէ վերադառնալով Պոլսոյ մէջ կայք հաստատած ազգի զաւակներուն հետ հետաքրքրուելով: Կեանքի դժբախտութիւններէն մազապուրծ ազատած խլեակները Ա. Յամաշխարհային Պատերազմի օրերու տառապանքներն ու զրկանքները ապրած ըլլալով դառնահամ բաժակը ցմրուր քամած էին: Մաղաքիա նախկին Պատրիարքը այս գաղթականներուն համար կատարելի օժանդակութեան համակարգման ուղղութեամբ կու տայ իր վերջին դասը, թելադրելով սիրտ դնել այս գործին վրայ:

Մեծանուն Պատրիարքը իր հոգին Երկնաւոր Յօր ձեռքերուն մէջ կ'աւանդէ 6 Նոյեմբեր 1918ին, Գատըգիւղի մէջ:

իր կեանքի վերջալոյսին քովը գտնուող երիտասարդներուն կու տայ իր վերջին դասը ըսելով. “Տղաքս, Հայ մնացեք, այս ազգին ծառայելը պատիւ է”:

Իբրեւ վերջաբան կը յիշենք Երանաշնորհ Պատրիարք Հօր Անդրանիկ Կոնդակին մէջ արտայայտած գաղափարները, որոնց մէջ կը բիւրեղանայ պատասխանատուութիւններու շարք մը, զորս պէտք էին ստանձնել վարիչներ, կրթական մշակներ եւ ծնողներ ի սեր Հայ մանկտւոյն դաստիարակութեան: Մեծանուն հոգեւորականը, որ օժտուած էր դաստիարակչական եւ ուսուցչական մասնայատկութիւններով, կը յիշեցնէ թէ համայնքի իւրաքանչիւր անդամը իր կարելին պէտք է ընէ կրթական համակարգի բարգաւաճման եւ օգտակար արդիւնքներ ձեռքբերելու ուղղութեամբ.

“Վարժարաններու եւ դպրոցներու տարուած խնամքը, մէկ կողմանէ հանրութեան բարիքը կը պատրաստէ, միւս կողմանէ իւրաքանչիւրին կրթութիւնն ալ կը դիւրացնէ: Այդ խնամքը միայն հոգաբարձուին եւ ուսուցչին պարտքը չէ. Ամէն ոք թէ սիւթական եւ թէ բարոյական միջոցներով պարտաւոր է դպրոցներու հոգ տանիլ: Ծնողներ պէտք է համոզուին թէ իրենց պարտաւորութեան մէջ թերացած կը լինին, եթէ իրենց զաւակներուն մարմնոյ պէտքերը կը հոգան, իսկ հոգին ու միտքը դատարկ կը թողուն: Դպրոց եւ ուսում սիրեցէք:

Կրթութիւնն ալ թերի է եթէ լոկ մտաւորական զարգացման կը ծառայէ, եւ բարոյական կողմը անտես կ'ընէ. Կ'աշխատի միտքը զօրացնել, եւ սիրտը տկար կը թողու: Գիտութիւն եւ առաքինութիւն անբաժանելի ընկերներ են, եւ համապատիւ ձիրքեր են, եթէ առանց գիտութեան առաքինին՝ յարգանաց պակասութիւն կը տեսնէ, առանց առաքինութեան գիտունն ալ իւր արժանիքը կը կորսնցնէ: Ծնողք եւ դաստիարակք, հոգաբարձուք եւ ուսուցիչք, ամէնն ալ պէտք է այդ ճշմարտութեան հպատակին: Բարոյական կրթութեան հետեւեցէք”¹⁹:

Երանաշնորհ Պատրիարքը իր վախճանումէն յետոյ եւս կը շարունակէ դասախօսել: Ան թէեւ կը մնայ թաղուած՝ ցուրտ

¹⁹ «Անդրանիկ Կոնդակներ Սահմանադրական Շրջանի Պատրիարքներու», հրատարակութեան պատրաստեց՝ Վաղարշակ Սրկ. Սերովբեան, Յովակիմեան Մատենաշար, թիւ 5, էջ՝ 118, Ստանպուլ, 2013:

դամբարանի քարին տակ, սակայն միշտ պիտի մնայ որպես
յուշարձան անմահ ուսուցչական իր տիպարով:

Յարգանքով կը խոնարհինք իր անմեռ յիշատակին առ-
ջեւ: Յիշատակն արդարոյն օրհնութեամբ եղիցի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Էջ

- Խօսք Առաջնորդ Սրբազանի.....4
- ԶՈԳՇ. ՏԱՃԱՏ Ծ. ՎՐԴ ԵԱՐՏԸՄԵԱՆ
Մաղաքիա Արք. Օրմանեան Զոգելորականը
Եւ Անոր Դարձը Զայ Առաքելական Եկեղեցի.-
Ա) Մուտք,
Բ) Դարձ դէպի Մայր Եկեղեցի,
Գ) Օրմանեան Զոգելորականը եւ
Առաջնորդը.....5
- ԱՐԺՆ. Տ. ՎԱԶԳԵՆ ԲՅՆՅ. ՊՈՅԱՃԵԱՆ
Կոստանդնուպոլսի Պատրիարք՝
Մաղաքիա Արք. Օրմանեանի
Զայաստանի Արխիպներում
պահպանուող ժառանգութիւնը.....24
- ԱՐԺՆ. Տ. ՉԱԲԱՐԻԱ ԲՅՆՅ. ՍԱՐԻԲԵԿԵԱՆ
Դրուագներ Օրմանեանի բանախօսական
ժառանգութենէն.....35
- ԳՐԻԳՈՐ ԱԻԱԳ ԶԱՅԱՆԱՅ ՏԱՄԱՏԵԱՆ
Մաղաքիա Պատրիարք Օրմանեան
իւր կրթական առաքելութեան ընդմէջէն.....54